



ՀԱՆԳԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍԱՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ 1^Ի ԵՒ 16^Ի

ԽՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

Ո. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ (Ա.Ն.Նապիս)

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ, Մ. Գ. ՄՈԶԵԱՆ, Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ, Յ. ՍԵԹԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻՐԻՆԵԱՆ

Թիւ 11-12

1-16 Հոկտեմբեր

ՏԵՍԻՍ

ՅՈՎՀ. Թ. ԱՐԱՄԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
1894

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԻԵԱՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ս Կ Ո Ի Թ Ի Ն

Մեր վարժարանաց ելեմսացոյցներուն պատրաստութեան եւ հաւասարակերութեան խնդիրը (Շրջաբերական նշանակման հորհրդոց)

Ռուսո եւ իր էմիլը

Երաժշտութիւնն վարժարանաց մէջ

Մանկավարժական ընթերցումք.

Ա. քննարկութեան գիրք, արտասանութիւնք եւ հարցմունք Գերման դպրոցին մէջ

Բ. Տղան գործունէութեան պէտքը եւ ձեռնական աշխատութեան բարոյական ազդեցութիւնը

Հասկաբալ

Շարադրութեան դաս մը (Սեւ տախտակը)

Գործնական դասեր Փրէժուէլեան նուիրաց ու պարագամաց վրայ

Թուարանութեան երկու դասեր

Կենդանաբանական դասեր (Նախակենդանք)

Ընթացք Զրաններէն յետոյ (Ռօպէտդսընի մէթոտով)

Բնագիտութիւն ու Զեմութիւն

Ա. Կ. Պէտիկեանի աշխարհաբար գործնական Քերականութիւնը

Բիէռ Լառուսի յիշատակարանը

Գերմանական մանկավարժական նորութիւն մը

Ամսական պատրաստութեանց տեսակ

Դուրք դպրոցականին մէջ

Նրեք դպրոցներն

Յանկ հայ ուսանողութեան Ֆրանսիոյ

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

Յ. ՏԵՐԱՏՈՒՐԵԱՆ

ԺՅՈՒԺ ՏՈՒՄԵՆԻՇ

Է. ՇՄԻՏ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Յ. ԷՏԻԼԵԱՆ

Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

Ա. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Յ. ՍԵԹԵԱՆ


Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

ՏՕԲԹ. ՏԱՂԱՍԱՐԵԱՆ

Ա Զ Դ

Մասիսի խմբագրութիւնը պատրաստ է մասնաւոր յօդուածի կամ քրակցութեան ձեւի տակ գոհացում տալ բոլոր անոնց՝ որք մասնաւոր նամակաւ բացատրութիւն կամ կարծիք խնդրեն իրմէ՝ դպրոցական խնդիրներու, մէթոտներու, կրթութեան ո՛ր եւէ ճիւղի վերաբերեալ դժուարութեանց եւլն. մասին :

Շնորհակալութեամբ կ'ընդունի եւ կը հրատարակէ, նաեւ դպրոցական խնդրոց վրայ իրեն հաղորդուած շահեկան ու ամփոփ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ իր յատուկ աշխատակիցներէ դուրս ձեռնհաս ուսուցչաց կամ կրթական գործոց հետաքրքրուող ո՛ր եւ է կարող անձի կողմէ յղուած օգտակար գրութիւններ որ իր ծրագրին սահմանէն դուրս չեն ելներ :



ՀԱՆԳԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀԱՍՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

43^{րդ} Տարի և Նոր շրջանի 11-12 և 1-16 Հոկտեմբեր 1894

ՄԵՐ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ
ԵԼԵԻՄՏԱՅՈՅՅՆԵՐՈՒՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Հետեւեալ շրջաբերականը, զոր 1891 ի Ուսումնական Խորհուրդը յղած է Մայրաքաղաքիս Թաղական Խորհրդոց, մեր Թաղային վարժարանաց ելմտացոյցներուն պատրաստութեան ու հաւասարակշռութեան կենսական խնդրոյ մասին կարեւոր առաջարկ մը ներկայեցող համար անոնց նկատառութեան, կը հրատարակենք Մաւիսի մէջ, վերստին հրաւիրելով ամէն Թաղային վարչութեանց ու Դպրոցական Հոգաբարձութեանց ամենալո՛ւրջ ուշադրութիւնը անոր պարունակած թեւադրութեանց վրայ:

Այս պաշտօնագրոյն նկատառութիւնն ա'յնքան աւելի կարեւոր է հիմայ որքան կազմ. Կանոնադիրը կրկին անգամ վաւերացուցած է Թաղային վարժարանաց համար ելմտացոյցներու պատրաստութեան եւ Ուսմ. Խորհրդոց կողմանէ քննութեան ու հաստատութեան սկզբունքը, եւ անոնց բացը գոցելու միջոցներուն մէջ դրած է դպրոցական ընդհանուր տուրքի եւ քաղցիկներէ տարեկան հանգանակութեան եղանակները, Ազգային վարչոյ-

թեան արտօնմամբ հաստատի բացառիկ միջոցի մը (Թատրոն, Նուագահանդէս, պարահանդէս եւն.) դիմումը ամենէն վերջը դատելով, անշուշտ վերապահելու համար զայն ա'յն Թաղերուն միայն որոց Թաղեցիք անկարող են իրենց մէջ նախորդ միջոցներով հաւասարակշռելու իրենց վարժարանաց ելմտացոյցը:

ՇՐՋԱՅԵՐԱԿԱՆ

Ազգային վարժարանաց բարեւոք ընթացից կարեւորագոյն պայմաններէն մին է անշուշտ ելից ու մտից կանխաւ ապահովեալ հաւասարակշռութիւնը: Այսպիսի վիճակ մը յոյժ նպաստաւոր ու բարեբար ազդեցութիւն ունի վարժարանաց ուսումնական ընթացքին վրայ, վասն զի կանխաւ կ'ապահովէ ուսուցչաց թոշակներուն կանոնաւորութեամբ ու ճշդութեամբ վճարումը եւ այլ կարեւոր պիտոյից գոհացումը, որով եւ կը ներշնչէ ծնողաց մեծ վստահութիւն մը, ինչ որ հարկաւոր է՝ որպէս զի Թաղին մէջ գտնուող մանուկներն յաճախեն Թաղին դպրոցն ու մնան անդ ցվերջ դպրոցական շրջանին: Ընդհակառակն, երբ չկայ կանխաւ որոշեալ այսպիսի հաստատ կացութիւն մը, ամէն ինչ կը մատնուի անստուգութեան, Թաղ. Խորհուրդք կամ Հոգաբարձու-

թիւնք կը վարանին պաշտօնէից ընտրութեան մէջ, ուսումնական տարւոյն ընթացքին մէջ կ'ստիպուին ուսուցչի եւ ուսմանց առարկայներու փոփոխութիւն ի գործ դնել, եւ ուսուցիչք, չկարենալով ի վերջ իւրաքանչիւր ամսագլխոյ ստանալ կանոնաւորութեամբ իրենց թոշակը, անվտանգ իրենց ներկային ու ապագային վրայ, ի հարկէ կ'աշխատին առանց եռանդեան ու անկանոն երթեւեկութեամբ, եւ յաճախ անժամանակ կը թողուն իրենց պաշտօնն՝ դպրոցէ դպրոց լաւագոյն վիճակի մ'ի խնդիր շրջելով: Այս կացութեան ընտան հետեւանքն է նաեւ աշակերտաց նուազութիւն կամ անստոյգ յաճախումն, վասն զի ծնողք, միօրինակ կանոնաւոր ընթացքի մ'ապահովութիւնը չգտնելով, կ'ստիպուին կանխաւ իրենց գաւախունքն յանձնել մասնաւոր կամ նոյն խի օտար վարժարանաց, եւ կամ, թէպէտ ի սկզբան յանձնեն զայնս թաղային դպրոցին, կը քաշեն կը հանեն յետոյ, ապարդիւն վատնուած տեսնելով իրենց որդւոց թանկագին ժամանակը:

Յաւալի իրողութիւն մ'է որ այս խի է վիճակն մեր թաղային վարժարանաց մեծագոյն մասին: Անոնցմէ շատերն չունին կանխաւ որոշեալ ելմտացոյց մը, ծախք եւ հասոյթք հաւասարակշռեալ չեն բնաւ ի սկզբանէ դպրոցական տարւոյն, ծախքեր կը սահմանուին առժամեայ կերպով, ոչոց դէմ անհաստատ ու անբաւական հասոյթներ միայն կան, եւ ասոնց թերին լրացնելու համար՝ անստոյգ միջոցներու վրայ հիմնուած ազօտ յոյսեր: Ահա՛ այսպէս կ'սկսի ընդհանրապէս մեր մէջ դպրոցական տարեշրջանը: Աշակերտաց կողմէ վճարելի թոշակաց գումարը կրնայ չհասնիլ յուսացեալ քանակութեան, ի վերջոյ ի գործ դրուած միջոց մը, թատերական ներկայացում մը, նուագահանդէս մը, հանգանակութիւն մը, որում ձեռնարկուի վարժարանին բացը գոցելու համար, կրնայ չարտադրել ակնկալեալ արդիւնքը, եւ ահա թաղ. խորհուրդը կամ Հոգաբարձութիւնն ինքզինք կը տեսնէ անհնարին դժուարութեանց մատնուած, ուսմանց ծրագրոյն ու դաստիարակութեան եւ սոցա պահանջից վրայ կ'սկսին զեղչումներ, որք իրենց վնասակար հետեւանքներն յառաջ կը բերեն անողոքապէս, յաճախ նաեւ կարգ մը կամ երկու կարգ լուծելով ուսանողները տարաժամ կը ճամբեն դպրոցէն, զայն բարձրագոյն նախակրթարանէ ստորինի իջեցնելով յեղակարծ, եւ կամ դպրոցաց հոգատար մարմինք կը լքանին ու կը քաշուն գործէ, յաջողագոյններու թողուլ ուղեով կնճռոյն լուծումը: Դիտել պէտք է որ, եթէ տարաժամ կերպով, այսինքն դպրոցը պարտքի տակ խնայէ յետոյ, ձեռնարկուած հասութեալեր միջոց մը յաջողի խի, չէ կարող ըստ ամենայնի դարմանել չարիքը. վասն զի, թէ՛ եւ ուսուցչաց յետեւալ թոշակներն կը վճարուին առաւել կամ նուազ, բայց այդ վճարմանց յետամնացութենէն նախապէս պատճառեալ վնասներ ետ չեն դառնար. եղածն եղած է, դասատուն ընդ երկար անկանոն երթեւեկած է, անխնամ եւ անսիրտ պաշտօնավարած է, դասուց ընդհատումներ, ուսուցչաց եւ ուսանողաց հրաժարմունք տեղի ունեցեր են, եւ բաց մը գոցելու համար ի վերջէ ի գործ դրուած հնարքներ, ոյց յաջողութիւն կը մնայ միշտ երկխայելի, ծնողաց կատարեալ փտահութիւն ներշնչելու բնութիւն չունին եւ չեն ունեցած ընդհանրապէս:

Եթէ երբեմն ինչ ինչ թաղերու մէջ Հոգաբարձութիւնն կամ թաղ. խորհուրդն ուղէ որոշ վիճակ մը սահմանել յառաջագոյն, կանխաւ գիտնալ առնելիքն ու տալիքը ու իւր վճարումներուն մէջ ճշգրութիւն ունենալ, այն ալ «եկած տեղը կապելու» դրութեան կը հետեւի. եթէ պատրաստ ու փտահելի հասութից գումարը չի հաւասարիւր հարկաւոր ծախուց գումարին, այս վերջինը կը հաւասարեցնէ առաջնոյն, զանց առնելով կարեւոր ուսումներ, նուազ կարող, երբեմն անկարող խի՝ այլ քիչ վճարեալ պաշտօնեայներով զոհանալով, եւ այսու թէպէտ պարտուց ենթարկուելու անախորժ հոգ-

նութեան մատնուած, ուսմանց ծրագրոյն ու դաստիարակութեան եւ սոցա պահանջից վրայ կ'սկսին զեղչումներ, որք իրենց վնասակար հետեւանքներն յառաջ կը բերեն անողոքապէս, յաճախ նաեւ կարգ մը կամ երկու կարգ լուծելով ուսանողները տարաժամ կը ճամբեն դպրոցէն, զայն բարձրագոյն նախակրթարանէ ստորինի իջեցնելով յեղակարծ, եւ կամ դպրոցաց հոգատար մարմինք կը լքանին ու կը քաշուն գործէ, յաջողագոյններու թողուլ ուղեով կնճռոյն լուծումը: Դիտել պէտք է որ, եթէ տարաժամ կերպով, այսինքն դպրոցը պարտքի տակ խնայէ յետոյ, ձեռնարկուած հասութեալեր միջոց մը յաջողի խի, չէ կարող ըստ ամենայնի դարմանել չարիքը. վասն զի, թէ՛ եւ ուսուցչաց յետեւալ թոշակներն կը վճարուին առաւել կամ նուազ, բայց այդ վճարմանց յետամնացութենէն նախապէս պատճառեալ վնասներ ետ չեն դառնար. եղածն եղած է, դասատուն ընդ երկար անկանոն երթեւեկած է, անխնամ եւ անսիրտ պաշտօնավարած է, դասուց ընդհատումներ, ուսուցչաց եւ ուսանողաց հրաժարմունք տեղի ունեցեր են, եւ բաց մը գոցելու համար ի վերջէ ի գործ դրուած հնարքներ, ոյց յաջողութիւն կը մնայ միշտ երկխայելի, ծնողաց կատարեալ փտահութիւն ներշնչելու բնութիւն չունին եւ չեն ունեցած ընդհանրապէս:

կէն կ'աղատի, այլ սակայն թաղին մանկտին զուրկ կը մնայ օրինաւոր կրթութեանէ, եւ հետեւապէս՝ թաղային վարչութիւնն ալ ինքզինք կ'ենթարկէ ծանր պատասխանատուութեան:

Իրաց այս վիճակին դարման տանելու եւ դպրոցաց նիւթական մատակարարութիւնը, որ հական պայման մ'ու մեծ երաշխաւորութիւնն է նոցա ուսումնական բարւոք եւ յարատեւ ընթացից, ամուր հիմանց վրայ դնելու համար, նախ եւ յառաջ հարկ է որ ընդհանրապէս գործադրուի դպրոցական ելմտացոյցի դրութիւնը, ա'յն է՝ ամէն թաղ. Խորհուրդք կամ Հոգաբարձութիւնք, դպրոցական տարին սկսելէ յառաջ, որոշեն իրենց ելքն ու մուտքը եւ կանխաւ հաւասարակշռեն զանոնք: Արդէն 1866 ի Ազգային վարչութեանէն հաստատեալ Կ. Պոլսոյ թաղային վարժարանաց Բարեկարգութեան Հրահանգն իւր 37րդ յօդուածով այս մասին պարտաւորութիւն դրած է թաղային վարչութեանց վրայ, ըսելով. «Մայրաքաղաքիս թաղ. Խորհուրդք իւրաքանչիւր դպրոցական տարեգլխի (1) պարտաւոր են իրենց ընդհանուր ելմտացոյցէն թաղային վարժարանաց մատակարարութեան յատկացեալ մասը զատելով՝ ուրոյն հաշուեցոյցով մը ներկայել Ազգ. Կեդրոնական վարչութեան, որ Ուսումնական Խորհրդոյ քննութեանէն անցունելէ եւ հաստատելէ զինի, կը դարձունէ թաղ. Խորհրդոյ, որ իւր ընդհանուր ելմտացոյցին մէջ զետեղելով կը գործադրէ»:

Երկրորդ, պէտք է որ թաղ. Խորհուրդք կամ Հոգաբարձութիւնք, իրենց վարժարանաց ելմտացոյցը կազմելու առեւ, ո'չ թէ սկզբունք ընդունին ծախքը առձեռնապարաստ կամ գրեթէ առձեռնապարաստ հասութիւց համեմատելու դրութիւնն, այլ հարկաւոր ծախուց դէմ պահանջեալ հասոյթը հայթայթելու դրութիւնը: Առաջինն մի ծոյլ եւ յետագիւմական դրութիւն է. խնդիրը միայն պարտք

չընելուն կամ չթողլուն վրայ չէ՝, այլ ստանձնեալ գործ մը բարւոք ի գլուխ հանելուն վրայ. առձեռնապարաստ հասոյթներ մատակարարել շատ դժուարին բանն է. ճշմարիտ ծառայութիւնը կարեւոր ծախքը չխնայել եւ առ այդ հարկաւոր դրամը գտնելն է: Ուստի անհրաժեշտ պէտք է որ թաղային վարչութիւնք նախ որոշեն թէ, իրենց թաղին նախակրթարաններն կանոնաւոր եւ արդիւնաւոր վիճակի մէջ պահելու եւ Կեդր. Ուսումնական Խորհուրդէն սահմանեալ Ուսմանց Ծրագիրն օրինաւորապէս ու անթերի գործադրելու համար, տարեկան ինչ գումարի կը կարօտին, եւ այնպէս սահմանեն իրենց մուտքը, գլխաւորով որ իրենց ու իրենց թաղին պարտականութիւնն է հագալ լիովին թաղեցի մանկըտւոյն կրթական պիտոյքը:

Երրորդ, այսպէս որոշուած ծախուց գումարին հաւասարակշռելու համար հասոյթները, ընդունին ա'յնպիսի միջոցներ որոց արդիւնաւորութեան մասին կարենան յառաջագոյն վստահ ըլլալ, այնպէս որ կարելի լինի կատարեալ ելմտացոյց մը պատրաստել: Մեր մէջ ցարդ ընդունուած դրութեան համեմատ, երբ դըպրոցաց հաստատուն եկամուտը ու եկեղեցւոյ անտուկէն վճարուած նպաստն անբաւական լինին հոգալու կրթական ծախուց ամբողջութիւնն, ինչ որ ընդհանուր իրողութիւնն է գրեթէ, տարբերութիւնը լրացնելու համար թոշակ կ'ստացուի աշակերտներէ եւ յետոյ՝ ինչ ինչ տեղերու մէջ ուր պարագայը նպաստաւոր են՝ դպրոցական տարւոյն մէջը կամ վերջը որ եւ է հասութեաքեր ձեռնարկ մը կը յղացուի ու ի գործ կը դրուի: Բայց այս երկու միջոցներուն վրայ կարելի՞ է կատարեալ վստահութիւն դնել. թոշակը շարժուն ու փոփոխական եկամուտ մ'են, որ կախում ունի աշակերտաց փոփոխական թուէն ու միմիայն դպրոցին մէջ զաւակ ունեցող ծնողաց նիւթական կուցութեանէն: Բացառիկ ձեռնարկք չեն կրնար ի գործ դրուիլ ամենուրեք, իրենց յաջողութիւնն ալ յաճախ կեղակարծ

(1) Այժմ, ըստ Կազմ. Կանոնագրի, Օգոստոս 15:

անստույգ է, եւ յաջողին իսկ՝ ապոթաման դարմաններ են միայն, ինչպէս վերեւ ցուցուցինք: Եւ ի՞նչ հարկ կայ դիմելու թոշակի ու բացառիկ ձեռնարկներու դրութեան: Ո՞չ ապաքէն թաղին դպրոցներն ամբողջ թաղեցւոյն են, եւ անոնց յառաջդիմութիւնն կամ յետադիմութիւնն՝ ամբողջ թաղեցւոյ պատիւը կամ ամօթը: Թաղին մանկտին ամենուն կը վերարկերի, Ազգին բոլոր զաւակները մերն են, մեր ամենունն են: Եւ միթէ ուղղակի կամ անուղղակի կերպով ամէնք չե՞մք որ կ'օգտինք կամ կը վնասենք մեր վարժարանաց անունը կամ անկարգ ուղղութիւնը: Հետեւապէս թաղի մը վարժարանաց ծախսուց ինչո՞ւ բոլոր թաղեցիք պարտաւոր չըլլան մասնակցիլ, այլ միայն անոնք որք զաւակ ունին անդ: Թաղին վարժարանաց մէջ զաւակ չունենալը չի կրնար իրաւունք մը սեպուիլ անտարբեր լինելու նոցա վիճակին: Այսօր չունեցողը՝ վաղիւ կրնայ ունենալ կամ ունէր երէկ, եւ կամ ինքն իսկ աշակերտած է անոնց: Եւ եթէ երբէք անհատ մը իւր մասին կարօտ եղած չլինի իւր թաղին դպրոցաց մէջ աւանդեալ կրթութեան, բայց, իրեւ թաղեցի, իւր պարտքն է փոյթ ու խնամ ունենալ նորա լաւութեանն ու իւրովսնն օժանդակել այնմ: Թաղին դպրոցներն հոգալու պարտքը ուղղակի աշակերտաց ծնողաց պատկանեալ ըմբռնելու հետեւանքն է որ երբեմն կը տեսնուին թաղեր ուր շատ հարուստ ազգայինք հաստատած են իրենց բնակութիւնը, եւ որոց սակայն դպրոցն խղճալի վիճակի մէջ է կամ մեծ դժուարութեամբ կը մատակարարուի: Վասնզի հարուստ թաղեցւոյ մեծ մասն մասնաւոր կամ օտար վարժարանաց մէջ դրած է իւր զաւակներ, եւ այսպէս ինքզինք գերծ կը համարի իւր թաղին դպրոցին կացութեամբ հետաքրքրուելու եւ ուղղապէս անոր օգնելու պարտականութեան: Արդարեւ այսպիսիք, եւ այլ նոյն պարագային մէջ գտնուող միջնակարգ մարդիկ, երբ բացառիկ միջոցներու ձեռնարկուի, կը յօժարին ընդհան-

րապէս իրենց նուէրը տալ: Բայց է՞ր իբրեւ նռնի, եւ ո՞չ իբրեւ պարսֆ, եւ այն կարի անագան, երբ դպրոցն, ի չգոյէ կանոնաւոր մտից, ենթարկուած է նիւթական ու բարոյական վնասուց: Այսպէս, թէպէտ յանուն կրթութեան շատ անգամ դրամ ալ ելնէ Ազգէն, համապատասխան արգիւնք չի տեսնուիր, վասն զի զոհողութիւնք ժամանակին ու կանոնաւորութեամբ չեն ի գործ դրուիր:

Առ այս, Խորհուրդս կ'առաջարկէ Թաղ. Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց փորձել մի այլ դրութիւն. այն է՝ դպրոցական ծրագրոյն կաշարեալ գործադրութեանն համար հարկաւոր եղող ծախսուց գումարէն դպրոցաց հաստատուն եկամտից՝ եթէ կան՝ եւ եկեղեցւոյ մատուկէն վճարելի նպատակից գումարը պակսեցնել յետոյ, ծախսուց մնացորդը, ի սկզբան անդ դպրոցական տարւոյն, բաժնել բոլոր թաղեցւոյ վրայ ըստ կարողութեան՝ տարեկան հանգանակութեան տուամար բանալով, միանուագ կամ մասնավճարներով հատուցանելի, որոշեալ պայմանաժամերու մէջ, առանց ի նկատ առնելու թէ այս ոք զաւակ ունի թաղային վարժարանաց մէջ թէ ոչ, եւ վարժարանաց մուտքը հրատարակելով ձրի քուհասարակ թաղին ամէն մանուկներուն համար: Ասոր համար կարելի է թաղային ընդհանուր ժողով գումարել եւ ի ներկայութեան թաղեցւոյ, ամենուն հաւանութեամբ, փոխադարձ յորդորանք, կարգադրել գործը: Այսու եղանակաւ՝ Խորհուրդս կը յուսայ թէ հնար կը լինի իրական ելմտացոյց մը պատրաստել, որ ճշդիւ պատասխանէ վարժարանաց պէտքերուն ու ապահովէ նոցա գոհացումը, եւ ապագայ անստուգութեանց ու դժուարութեանց առաջն առնելով՝ կոյր դիպուածին ձեռքէն փրկէ դպրոցաց բախտը, կանխատես՝ իմաստուն ու համբաւչաւ հոգածութեան մը վրայ հիմնելով նոր սերունդեան կրթութիւնը: Բացառիկ միջոցներ գէթ պէտք է վերապահել շատ աղիւսիկ թաղերու համար, որոց քաղեցիք իրենց ծախիւք անկարող են գէթ ստորին (քա-

ռամեայ շրջանով) ⁽¹⁾ կանոնաւոր նախա-
կրթարան մը պահել, եւ ստիպեալ են
դիմում ընել ուրիշ քաղերու ազգայնոց
ձեռնտուութեան:

Հետեւապէս Ազգ. Կեդրոնական Վար-
չութեան Ուսումնական Խորհուրդս ներ-
կայ շրջաբերական գրութիւնն ուղղելով
առ Թաղ. Խորհուրդս եւ Հոգաբարձու-
թիւնս մայրաքաղաքիս, կը հրաւիրէ զա-
նոնք լուրջ ուշադրութեան առնուլ իւր
նկատողութիւնքն թաղային վարժարա-
նաց ընդհանրապէս անգոյնացուցիչ վիճա-
կին հիմնական մէկ պատճառին նկատ-
մամբ, եւ ոչ միայն կրթական ելմա-
ցոյցի պատրաստութեան մասին պաշտո-
նական Հրահանգին իրենց վրայ դրած
պարտաւորութիւնը կատարել փութալ՝
յառաջիկայ դպրոցական տարեգլխէն յա-
ռաջ ներկայացնելու համար Ուսումնական
Խորհրդոյս վաւերացման, այլ եւ, գոր-
ծադրութեամբ առաջարկութեան Խոր-
հրդոյս, կամ, եթէ փորձն անյաղթե-
լի դժուարութիւններ յերեւան բերէ
այդ մասին, ինչ որ չի յուսար Խորհուրդս
ազգայնոց կրթասէր ու համերաշխական
ոգիւնէն, գէթ նոյն արդիւնքն յառաջ բե-
րող եղանակաւ մը, կատարել զայն այն-
պէս որ պաշտօնական ծրագրով պատշա-
տեալ նախնական կրթութեան կատարեալ
եւ օրինաւոր աւանդուիւն ապահովուի ու
իրագործուի ամեն դպրոցաց համար:

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ
Կեդրոնական Վարչութեան

Ասեճադպիր

Ասեճապետ

Գ. Յ. ՅԱՏՔԵԼԵԱՆ

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

(1) Այն տեղն պատշտական հրահանգաց համա-
ձայն նախակրթարանի պատշէին բաժնուիլ բառամ-
եայ եւ վեցամեայ երջանով պարզներու: Այժմ, ըստ
Կազմ. Կանոնագրի, գիտեմք որ նախակրթարանի ե-
րկու աստիճան ունին, *Տարրական* (երեք դասընթաց-
ով եւ վեց տարիով) եւ *Զարգացող* նախակրթարան,
որ նախորդին կը յաջորդէ եւ ունի եռամեայ երջան:
Ստորին բաժին հիմայ պէտք է համապատասխանէ
Տարրական Ե. Խ.

ՌՈՒՍՕ ԵՒ ԻՐ ԷՍԻԼԸ

Ռուսօն ծանօթացնելէ առաջ, ծանօ-
թացնենք այն ոգին որ իր դարու ման-
կավարժութեան յատկանիշը կը կազմէ
ի Ֆրանսա, եւ այն անձերը՝ որոնք իր
յառաջընթացները եղած են:

ԺԼ. դարը, որուն մէջ ապրած է
Ռուսօ, երկունքով լի դար մըն է:

Եկեղեցական ուսուցիչներ տեղի կու-
տան իմաստասէր մանկավարժներու առ-
ջեւ: Յիսուսեանք, որոնք շատ ազդե-
ցիկ դարձած էին, անուանարկ կ'ըլլան,
կը դատապարտուին եւ վերջապէս կ'ար-
տաքսուին 1762ին: Դաստիարակու-
թեան տեսականին ինչպէս նաեւ գործ-
նականին մէջ առաջին դերը կ'ստանձ-
նեն աշխարհականք: Մասնաւորներու
կողմէն ջանքեր կ'ըլլան որ Յիսուսեան-
ներու գործը Պետութիւնը կամ գէթ Պե-
տութեան իշխանութիւններէն մին կա-
տարէ:

Այս դարու մանկավարժութիւնը քըն-
նադատող ու բարեկարգիչ ձգտումներ
ունի:

Ժամանակակից երկասիրութեանց մէջ
ի յայտ պիտի գայ իմաստասիրական այն
ոգին որ չի գոհանար հարեւանցի բարեո-
րումներ մուծանելով հին աւանդութեանց
մէջ, այլ որ դաստիարակութեան տեսա-
կանը կը փոխաբքի հիմնել մարդկային
մտաց օրէնքներուն վրայ, որ ընդհա-
նուր սկզբունքները կը հաստատէ եւ ի-
տեալ կատարելութեան կը տենչայ: Ու
իբր հետեւանք այս ոգւոյն՝ դաստիարա-
կութիւնը հետզհետէ կ'սկսի ըլլալ կեան-
քի պատրաստութիւն, փոխանակ ըլլա-
լու, ըստ առաջնոյն, մահուան պատ-
րաստութիւն:

Ֆրանսական մանկավարժութեան մէջ,
արդարեւ առաջնակարգ տեղը կը զբաւէ
Ռուսօ. բայց որչափ ալ իսկատիպ ըլ-
լայ ինք, իր դրութիւնը՝ Էմիլին մէջ
ամփոփուած՝ չէ հանճարի գործ մը զոր
պատրաստած չըլլան ուրիշներ: Նա ու-
նեցած է իր յառաջընթացները որոնց

աշխատութիւններէն օգտուած է. ներշնչուած է Մոնդէլէնէն եւ Լոքէն. ուստոնցմէ զատ ունեցած է անմիջական նախակարաստներ որոնց գաղափարները ինչ ինչ կէտերու մէջ համաձայն են իր գաղափարներուն:

Ռուսօի յառաջընթացներուն մէջ առաջինն է Սէն Բիէր արքան, երագուն, քմահաճ միտք մը, աւելի հետաքրքրութիւն շարժող քան սքանչացում գրաւող: Անոր տիրող գաղափարն է բարոյական դաստիարակութեան հոգը: Մարդուն համար կարեւոր կը նկատէ չորս էական հանգամանք. արդարութիւն, բարերարութիւն, առաքինութեան զանազանում կամ բարոյական դատողութիւն, եւ՝ վերջապէս՝ կրթութիւն: Առաքինութիւնը նախամեծար կը համարի լատիներէնի ուսումէն: Եւ ընկերական առաքինութեանց ուսումը կ'աւանդէ կարգացնելով շինիչ պատմութիւններ, ներկայացնելով բարոյացուցիչ ծառերգութիւններ, եւ վարժեցնելով տղաքը՝ դպրոցին մէջ կատարելու առաքինական գործեր:

Սէն-Բիէր օգտախնդիր ու գործնական հայեացքներ ալ ունի. մեքենական արուեստները, դրական գիտութիւնները, արհեստից աշկերտութիւնը՝ գեր ի վեր կը դասէ լեզուներու ուսումէն. իր վարժարանին շուրջը եւ նոյն իսկ իր վարժարանին մէջ պիտի գտնուին ջաղացքներ, տպարաններ, երկրագործական եւ պարտիզպանական գործիքներ, եւն:

Շատ նոր եւ միանգամայն շատ օրինաւոր գաղափար մըն էր նաեւ այն ուրով կը պահանջէր հասարակաց կրթութեան ընդհանրացումը գրաւեցեալի մը հաստատութիւնը, տեսակ մը մնայուն խորհուրդ որուն պաշտօնը ըլլար մեծոտները բարեփոխել եւ՝ որչափ որ կարելի էր՝ միօրինակութիւն հաստատել բոլոր վարժարաններուն մէջ:

Վերջապէս, Սէն-Բիէր ջերմ պաշտպան հանդիսացած է կանանց դաստիարակութեան դատին:

«Պէտք է աղջկանց սորվեցնել, կ'ըսէ, տարերքը այն ամէն գիտութեանց եւ

արուեստից որոնք կրնան սովորական խօսակցութեան մը նիւթը կազմել. սորվեցնել նոյն իսկ շատ մը բաներ որոնք վերաբերութիւն ունին արանց աշխատանքներուն հետ, — իրենց երկրին պատմութիւնը, աշխարհագրութիւն, ուսուկանական օրէնք, քաղաքային զլխաւոր օրէնք —, որպէս զի կարող ըլլան հաճոյքով մտիկ ընել ինչ որ այրերը ըսեն իրենց, որպէս զի կարող ըլլան պատշաճաւոր հարցումներ ուղղել այրերուն եւ որպէս զի աւելի դիւրութեամբ գտնեն նիւթ՝ խօսակցելու համար իրենց ամուսիններուն հետ՝ անոնց գործերուն առօրին դիպացը վրայ:»

Եւ այս նպատակին աւելի շուտ հասնելու համար, Սէն-Բիէր կ'ուզէր որ կանանց համար բացուէին ազգային հաստատութիւններ, երկրորդական ուսմանց վարժարաններ: Պետութեան կ'աղաչէր որ հանրային դասընթացքներ կազմակերպել տայ անոնց համար որոնք, կ'ըսէր, «ընկերութեան մէջ ընտանիքներուն կէսն են:»

Ուրիշ արքա մը, Բիւշ, Բեռլինացի Տեսաւաճ անուն երկաթրուծեանը մէջ, որ այնքան հռչակ հանած է իր ժամանակին, կ'ուզէր որ մեռեալ լեզուներու նուիրուած ժամանակը գեղջուի եւ անկէ շահուած ժամանակը յատկացուի կենդանի լեզուներու ուսուցման: Ասկէ զատ, շատ կարեւոր կը համարէր այն դաստիարակութիւնը զոր մարդ կ'ստանայ մանուկ հասակին մէջ:

Ուրիշ հեղինակներ ալ թելադրած են Ռուսօին մէկ քանին այն գաղափարներէն զորս ընդլայնած է իր Էմիլին մէջ. Լա Գոնտամին, իրմէ առաջ, տղոց հաստատութեան վեր կը գտնէր Լաֆօնդէնի Առակները: Պոնպալ, որ շատ հոգածու էր ֆիզիզական դաստիարակութեան, կը քննադատէր խանձարուրին գործածութիւնը եւ կը պահանջէր որ մանուկին զգայարանքները մարզուին: Ասկէ զատ, առաջին տարիներուն մէջ, բաւական կը համարէր մանկան երեւակայութենէն հեռացնել յոռի տպաւորութիւնները, եւ

կրօնական գիտելիաց աւանդումը կը յետաձգէր:

Ռուսօ հչ միայն առաջնորդուած է ֆրանսական հեղինակներէ, այլ ներշնչուած է նաեւ օտարազգի մանկավարժներէ: Ինչպէս են Լոր Է. Գրուսագ:

Լորքի մանկավարժական սկզբունքներն էին. 1. Ֆիզիքական դաստիարակութեան մէջ, *խոստանքաւորքիւն*. 2. Իմացական դաստիարակութեան մէջ գործնական օգտակարութիւն. 3. Բարոյական դաստիարակութեան մէջ, պատուասիրական զգացում:

Գրուսագ կը քննադատէր հին մեթոդները որոնց համեմատ, կ'ըսէր, լատիներէնը եւ յունարէնը դաստիարակութեան դրամագլուխը համարուած են. կը զրուատէր, ընդհակառակը, գիտական ուսուցումը եւ բարոյական դաստիարակութիւնը:

Գաղափարաց բոլոր այս նախատարերքը պիտի տեսնենք Էնկիլին մէջ, ընդլայնուած՝ հանճարի փայլով եւ ուժգնութեամբ, երբեմն արտակարգ ձեւեր առնելով Ռուսօի գրչին տակ, բայց երբեմն ալ հաստատ ու վերջնական ճշմարտութիւններ դառնալով:

Էնկիլը յոյս կը տեսնէ 1762 ին. անոր մէջ դաստիարակութեան գրեթէ ամէն խնդիրները յաջողութեամբ պարզած է Ռուսօ, եւ լուծած է զանոնք երբեմն իմաստութեամբ, միշտ ինքնատիպ ոգւով:

Էնկիլը վիճաբանական վաղանցուկ գործ մը չէ, հչ ալ մանկավարժութեան գործնական պարզ գրքոյկ մը. ընդհանուր դաստիարակութեան դրութիւն մըն է այն, մանկավարժական հոգեբանութեան ու բարոյագիտութեան ճառ մըն է, մարդկային բնութեան խորագնին մէկ վերլուծումը:

Որովհետեւ յատուկ յօդուածի մը նիւթ պիտի ընենք Էնկիլին ուսումնասիրութիւնը, այժմ մի քանի բառով ըսենք թէ իր հեղինակը ինչպէս պատրաստուած ու եղած է մանկավարժ:

Այս դժբախտ մարդուն ճակատագրին

մէջ ամէն բան անսովոր է: Ռուսօ մեծամեծ սխալներ գործած է, մանաւանդ իր երիտասարդութեան ատեն. բայց, իր կեանքի միւս ժամանակամիջոցներուն, գրեթէ իմաստուն մը, անհատական առաքինութեանց զիւցազն մըն է: Ամէն վիճակէ անցած է, ամէն արհեստի մտած է. շտեմարաններու մէջ բնակած է մէկ սու վարձագինով. անքան չքաւոր օրեր տեսած է որ հացն անգամ շատ սուղ երեւցած է իրեն: Չքաւոր եւ խոնարհ այս վիճակներու բովին մէջ անոր հոգին կը մխուրդէր, եւ ի նմա կը կազմուր զգայուն սիրտ մը ու երագուն միտք մը:

Ռուսօի դիւրագգայութիւնը ծայրայեղ էր. «Իրաց վրայ հչ մէկ գաղափար դեռ չստացած՝ կ'ըսէ ինք, ամէն զգացումներ արդէն ծանօթ էին ինծի: Ոչինչ յղացած էի, ամէն բան զգացած էի»: Ողբերգութեանց ներկայացման հանդիսատես ըլլալէ կ'զգուշանար, վախճալով որ կը հիւանդանայ:

Բնութեցումը կիրք մը դարձած էր իրեն համար. կը վերծանէր հին ժամանակաց բանաստեղծներ, պատմաբաններ եւ իմաստասէրներ: Պլուտարքոս ներշնչած էր իրեն քաղաքային հզօր առաքինութիւններ:

Բարոյական ուսմանց չափ Ռուսօ կը սիրէր նաեւ մամէմաթիքն ու աստեղագիտութիւնը, զորս չէր դադրեր ուսանելէ իր կեանքի ելեւէջներուն մէջ:

Այս կերպով է որ կը կազմուր իր գրական հանճարը, եւ հետեւաբար, իր մանկավարժական հանճարը: Ռուսօի կեանքը այնպէս մը եղած է որ Էնկիլի ուղղակի պատրաստութեանը համար հչ մէկ բան կրնանք գտնել անոր մէջ: Իրաւ է որ ժամանակ մը, 1739 ին, դաստիարակ եղած էր ընտանիքի մը մէջ, բայց շուտով հրաժարած էր դաստիարակի պաշտօնէն քանզի չէր յաջողեր: Դաստիարակութեան վրայ փոքրիկ զբոռւած մը զոր շարադրած է 1740 ին, դեռ չ'ընծայեր ինքնուրոյն հանգամանք մը: Միւս կողմանէ, Ռուսօ, եթէ կը սիրէր դիտել տղաքը, ուրիշներուն տղաքը

միայն դիտած է, աւանդ: Ո՛րչափ տխուր է իր խոստովանութիւններուն այն էջը ուր կը պատմէ թէ շատ անգամ պատուհանը կ'ելնէր դիտելու համար դպրոցական աշակերտաց արձակումը, մտիկ ընելու համար տղոց խօսակցութիւնները:

Էմիլը, ուրեմն, ի՞նչ այնչափ արդիւնք է համբերատար մակաբերութեան մը, եւ ճշմարիտ փորձառութեան մը, որչափ ներշնչումի գործ մը, հանճարի փայլուն ծնունդ մը:

Գ. Ա. Մ.

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ՍԷՋ

Գ.

ԵՐԲ ՊԷՏՔ Է ԵՐԳԵԼ

Մանուկը մանկութեան օրերէն արդէն երգի պէտքն ու փափագը կը զգայ. ո՞ր մայրն իւր մանկիկն «Օրօրներ»ով չէ քնացուցեր. փոքր աղջիկն ալ իւր պաճուճապատանքն (poupée) օրօրներով չի՞ քնացներ: Խաղն ու երգն ա՛յն տարրերն են ուր միայն բաւարարութիւն կ'ունենայ մանուկը. զուարթ երգը մանկան անբաժան ընկերն է նորա ամէն քայլափոխին. անխրա՛ւ է, ուրեմն, Ազգ. վարժարաններուն մէջ տեղիկ մ'ալ երգին չտալ:

Երգի ուսումը բնաւ պէտք չէ կամաւոր լինի վարժարաններու մէջ, այլ պարտաւորիչ առարկաներէն մին ալ այն: Բնականաբար սկիզբները մէկ ժամու տեւողութիւն չ'ունենար դասը. 10 վայրկեան կամ 1/4 ժամ բաւական է օրական: Լաւ է ընդ միշտ որ ուշադիր լինի ուսուցիչը, որպէս զի տղայք երգելու պահուն կանգնին՝ փոխանակ նստելու. կանգնին՝ գլուխը բարձր, կուրծքը դուրս: Երգի դասերը ձգել առաւօտեան կանուխ, կամ կէսօրէն վերջն առաջին ժամերուն, այնչափ անյարմար ու վնասակար է՝ որչափ երբ մարդ վարժարանի փոշելից օգին մէջ՝ մարմնամարզի դասերէն վերջն երգել տային: Երբ տղայք այսպիսի պարագա-

ներու մէջ լի՛ թոքերով եւ ուռած լանջով բոլոր զօրութեամբ կ'երգեն աշխոյժ, զարմանալի ալ չէ՝ երբ լանջ, թոքեր ու ձայն փճանան չուտով: Յաջորդ տարիներուն մէջ այդ տղոց ձայները կ'ունենան ա՛յնպիսի մի նուազում, որ միայն արբունքի հասակին մէջ կը տեսնուի. այսպիսի տղայոց բնաւ երգել տալու չէ այլ եւս:

Ազգ. վարժարանը չաբաթական մի ժամ երգով չպիտի դահանայ բնաւ. այլ հոգ պիտի տանի որ ժողովրդական ու եկեղեցական երգերու թարմ ու զուարթ ձայնը վարժարանական բոլոր կեանքին մէջ, եւ այնուհետեւ՝ վարժարանէն դուրս ամբողջ կեանքին մէջ ալ հնչէ: Պէտք է սովորութիւն ընել որ վարժարանն սկսած ու աւարտած ժամանակ եկեղեցական կամ ժողովրդական մի երգ երգուի: Ամէն դասին համար իսկ եթէ լինին յարմար երգեր, այնպէս որ կենդանաբանական դասէն վերջը մէկը թուշուն երգէ, միւսը՝ թիթեռը. մէկը մեղուն երգէ, միւսը միջիւնը. աշխարհագրական դասէն վերջը մէկը լեռն երգէ՝ միւսը ձորը. մէկը գետն երգէ, միւսը վտակը. կրօնի դասէն վերջը մէկն աստուածային բարութիւնն երգէ, միւսը փառքը. մէկը նորա օգնութիւնը խնդրէ, միւսը շնորհքը, այն ժամանակ աշխոյժ տղայք պիտի ոգեւորին, իսկ թմրածները պիտի արթննան, եւ աւանդուած դասն անկարելի է որ զուարթութեամբ չտպաւորուի՝ զուարթութեան այդ զաւակներուն մէջ:

Եւ երբ կուգայ գարունը, աշակերտներուն մէջ աշխոյժ ու զուարթ շրջագայութեան փափագը կը ծնի. երբ վտակները կը խոխոջեն լեռներէն, եւ արտոյտները բարձր օդին մէջ կ'երգեն, այն ժամանակ վարժարանն ալ զուարթ չունեցեր պիտի սովորեցնէ, զուարթութիւնն ու խինդը միշտ վառ պահելու համար աշակերտաց մէջ: Պէտք է գիտնալ թէ ինչ որ այս ժամերու մէջ կ'երգեն տղայք, ամենէն աւելի լաւ սեպհականութիւն կը դառնայ նոցա համար: Ո՛ւր էր թէ կարող լինէր դասատուն ա՛յնպէս աշխատիլ որ

Երգը վարժարանական տարիներուն հետ չվերջանար աշակերտաց համար, այլ վարժարանի երգերը տան ընկերութեանց ու եկեղեցական ուրիշ երգերու հիմք դառնային, եւ կեանքի համար գեղապիտական, շինիչ ու բարոյալից մեծ ազդեցութիւնն ունենային:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է թէ ուսուցիչն երգն ու անոր սէրը ամրացնելու եւ զօրացնելու համար պէտք է երաժշտական լաւ միութիւն մը հաստատէ. ցանկալի է որ ուսուցիչք գէթ ստորին դասարաններուն մէջ արական խումբերու կազմութենէն աւելի խառն խումբեր հաստատելու աշխատին. որովհետեւ խառն խումբերն ձայներանգներու առաւելութիւնն ունին սոսկ արական խումբերու վրայ, եւ ձայներու լեցունութեամբ, ուժգնութեամբ եւ գեղեցկութեամբ առնոց միակերպութեան ազդեցութիւնը կը ջնջեն. բայց թէ լոկ արական խումբերն ալ իրենց առաւելութիւններն ունին՝ իրենց սահմանին մէջ՝ բնաւ չէ կարելի ուրանալ. Խմբերգի թարմ ու զուարթ ազդեցութիւնը մեր մէջ դեռ ճանչցուած չէ. Հարսանիք մը, ծնունդ մը, պանդուխտի մը վերադարձը, ահա՛, երգելու եւ ուրախ լինելու միակ ժամանակներ. մեր մէջ «ուրախութիւն» կը հասկցուի ոտքէն մինչեւ գլուխ օղիին մէջ թաթախութիւն. իսկ այնուհետեւ յառաջ կուգան ամենուն յայտնի հետեւանքները, որք զգուանք ու գարշանք միայն կ'ազդեն ներկայից, Զկան դեռ մեզ մօտ այն առողջ ուրախութիւնն ու հրճուանքը, առողջ հոգւոյ ու կրթեալ սրտի հաստատ նշաններ. Ամէն կողմէ լուռող շատ անպատեհութեանց ու անհաճոյ դիպաց ամենագլխաւոր պատճառը կրնամ ըսել երգի ու երաժշտութեան բացակայութիւնն է:

Երբ եւ ո՛ւր ալ երգուելու լինի, միշտ պիտի գիտնայ ուսուցիչն ա՛յն ինչ որ կը վերաբերի շաւ երգի մը, եւ թէ ի՛նչ պարտականութիւններ ունի այդ պարագային ինքն՝ իբր երգող եւ իբր երգի ուսուցիչ: Լաւ երգ մը շինիչ և բա-

րոյացուցիչ մեծ ազդեցութիւն ունի առաջին ներկայացող հարցն է այստեղ. Ո՞րն է լաւ երգը: Զանազան է այս հարցման պատասխանը. լաւ երգելու համար պէտք է.

Ա) Լաւ ընթանէ ու շաւ կարդայ բնագիրը. երգը կեանք կ'առնէ ամենէն առաջ, երբ ձայն ու բառ իրարու հետ պէտք եղած յարաբերութեան մէջ են, երբ խօսք ու ձայն փոխադարձաբար ազդու կ'ընեն զիրար ու կը լրացնեն: Երգերու մէջ բառն առաջին տեղը կը բռնէ միշտ եւ ձայնն՝ երկրորդ. կարեւոր է որ բնագիրը մեկին ու շեշտաւոր կարդացուի, եւ ներդաշնակօրէն (rhythmique) — վանկերու թուին ուշադիր լինելով — արտասանուի: Ո՞րչափ կը ձանձրանայ մարդ ու կը նեղանայ, երբ երգուած խօսքերէն բառ մ'իսկ չի հասկնար. եւ «դժժ-դժժ»ներու, երկա՛ր երկա՛ր «ա՛» եւ «ի՛»երու անհատնում չարք մը կը լսէ միայն, որ հոգին բնաւ չյուզէն ու չբարձրացնէն զատ՝ չեմ գիտեր քանի՛ աւերներ կը գործէ անոր մէջ. Նախ պէտք է, ուրեմն, քննադիրը լաւ հասկնալ, որպէս զի անոր եղանակն ալ լաւ երգել կարելի լինի ապա: Բնագիրը հասկնալուն չափ ալ զայն լաւ հնչել աշխատելու է: Այն ուսուցիչները, որք ուշադրութիւն չեն դարձներ այս բաներուն, շատ կը մեղանշեն:

Բ) Զայնի բարւոյ կրթութիւն եւ խաղերուն ճիշդ արտաբերում (intonation): Զայնն ու հնչումը պէտք է բնական լինին. քթով, ախաններով, քմքով երգելը, ձայնի խաղցնելն ու խաղերու չափէն աւելի երկարցնելը ու քաշքշելը բոլորովին պէտք է արգելել. բարձր ու պարզ պէտք է երգել. բայց բարձր երգել՝ պոռալ չինշանակեր բնաւ:

Ժողովրդական ինչպէս նաեւ եկեղեցական երգերը կարող են ունենալ մեղմ «pianissimo»-ն, ինչպէս նաեւ աճող «crescendo»-ն. նուազող «decrescendo»-ն, ինչպէս նաեւ ուժգին «fortissimo»-ն: Մի փափուկ գեղեցիկ ու բնագրին յարմար եղանակի համար ձայներու մա-

քուր արտաբերում (intonation), եւ արտայայտման ճշգրտութիւն (précision) ու մաքրութիւն (correction) առաջին պահանջներն են:

Գ) Ճիշդ անդամները ընկալելու ու հանգիստեցնելու ուշադիր շինիչ. երգի մէջ հանգիստ առնելու օրէնքները նոյն լեզուի հանգիստներուն օրէնքներն են: Փոխանակ այս մասին երկար բարակ բացատրութիւններ տալու, դասատուն կրնայ միանգամ վարդալ ընագիրը, որով աշակերտք կ'ըմբռնեն խելոյն ճիշդ անդամատումն ու բուն ժամանակին պատշաճ հանգիստն ընել:

Դ) Յաճախակի քերական երգեր. երգողն այն ժամանակ միայն կրնայ իւր բոլոր ուշադրութիւնը լաւ երգելուն տալ, երբ ընագիրն ու եղանակ միասին իւր մտքին մէջ ունի: Շատ լաւ կ'ընէ դասատուն եթէ բնաւ չչտապէ երգի դասերուն, եւ երգերու թիւն ալ չսխալագոյնացնէ չտանի. շատ աւելի լաւ է որ ամբողջ տարին պարզ ու զեղեցիկ ժողովրդական երգեր երգեն տղայք. — Թող սակաւաթիւ լինին անոնք — բայց այնչափ երգեն, մինչեւ որ անջինջ տպաւորեն զանոնք իրենց մտքին մէջ, քան զխոնարհ շատ երգեր, որոնցմէ եւ ո՛չ մին կարող լինին ճիշդ ու զեղեցիկ երգել, եւ որոնք ապագայ կեանքին համար ամենափոքր նշանակութիւն իսկ չպիտի ունենան: Այս ամէն պարագաներն երբ յարգուին, այն ժամանակ միայն վարժարանական երգերը կը դառնան այն, ինչ որ լինիլ պէտք են — կեանքի երգեր:

Այս ամենէն կը հետեւի թէ երգի դասատուն մ'երբ կ'ուզէ իւր վարժարանին մէջ հաստատ բան մը յառաջ տանիլ, ո՛չ միայն նուրբ ճաշակ, քաջ ճարտարութիւն ու կարողութիւն, ո՛չ միայն մեծ շրջահայեցութիւն ու տիրող մի հեղինակութիւն պիտի ունենայ, այլ նաեւ մի զեղեցիկ ձայն: Մասամբ իւր ձայնի խոնարհութեան, մասամբ ձայներու ճիշդ կարգաւորման համար ո՛չ միայն փափագելի՝ այլ նաեւ կարեւոր իսկ է որ երգի դասատուն ջութակահար եւս լինի: Զու-

թակը միւս բոլոր երաժշտական գործիչներէն ամենէն յարմարն է երգի, որովհետեւ անոր ձայներուն բարձրութիւնն ու երանգը ամենէն լաւ կը համապատասխանէ տղայոց ձայնին: որով ամէն զգացում խիստ լաւ կ'արտայայտուի, եւ դասարանի հսկողութիւնն ու կարգապահութիւնն ալ կը զիւրանայ: Երբ բազմաձայն մի երգի կը թուութիւն պէտք է ընել, այն ժամանակ պէտք է գործածել մի դաշնաւոր, որովհետեւ այսպիսով խօսքերուն հետ եղանակն ալ 'անմիջապէս կը հասկնան տղայք: Շատ վարժարաններու մէջ այս օգնական միջոցները բոլորովին կը պակսին դրամի սղաճառաւ: Թէեւ գործիքներու ընկերակցութեամբ երգելը նպաստէ չէ, բայց նպատակին հասնելու ամենէն զիւրին ճամբան է: Յաջող է ամէն բան, երբ աշակերտք առանց ընկերակցութեան մաքուր ու հաստատ կ'երգեն:

Ե) Ժողովրդական երգերը լաւ է որ երկ-ձայն երգուին. ժողովրդական երգն այն ժամանակ կատարեալ է, երբ ժողովուրդն ամբողջ յաջող կրնայ երգել զայն երկ-ձայն: Երեք կամ աւելի ձայնով երգերը չափազանց են սովորական կարողութեանց համար. հետեւաբար Ազգ. վարժարաններուն չեն յարմարի անոնք ընաւ. մասամբ՝ որովհետեւ աւելի ժամանակ կը խլեն, քան թէ օգուտ կուտան. մասամբ՝ որովհետեւ աշակերտաց ձայներն եռաձայն երգերու համար յարմար երանգներ չեն ներկայացներ յաճախ երկ-ձայն երգերու հրապոյրն ու ազդեցութիւնն ալ կ'ոչնչանան այդպիսով: Իսկ եթէ դասատուն շատ փափագ ունի դժուար երգեր երգել տալու, այն ժամանակ որոշեալ դասաթամէն դուրս միջոց ճարելու է: Դիտենք թէ դասատուն որոշեալներու երգել չպիտի տայ միայն. ամէն աշակերտ ըստ իւր ձայնի կարողութեան՝ կամ առաջին ձայն, կամ երկրորդ ձայն պիտի երգէ:

Ինչ որ կը պատկանի երգերու ուսուցման ձեռնարկ, շատ անգամ վիճելու նիւթ

է դարձեր: Արդեօք երգերը ձայնանիշներու օգնութեամբ թէ միայն ահանջով սովորեցնելու է. նախակրթարաններու համար ձայնագրութիւնն անհրաժեշտ չէ. պէտք է լաւ հասկնալ թէ երգի դասի ժամանակ լսողութեան զարգացումն առաջինն է. այս զարգացումն ալ շնորհով երգելու միջոցաւ միայն, եւ ո՛չ ձայնանիշներու կամ թուանիշներու գրութեանց գիտութեամբ, ո՛չ ալ բախումներու եւ ձայներու տեսակներուն ծանօթութեամբ՝ կը կատարելագործուի: Ձայնանիշերը ձանձնալն այլ է, ձայնանիշերով երգելն այլ է. երկուքին մէջ մեծ տարբերութիւն կայ, ձայնանիշերը հազարաւորներ կը ձանձնան, բայց ձայնանիշերով երգել քիչերու գործ է: Իրականութիւն է վերջապէս՝ թէ երգի միայն «Երաժշտական ֆերականութեան» տեսական կողմովը հազուադէպ է յաջողիլը, գլխաւորաբար՝ որովհետեւ տղայք թէ՛ արուեստին նրբութեանց լաւ հմուտ լինիլ եւ թէ՛ լաւ երգել՝ անկարող են: Եթէ դասատուն ժամանակ ունի, նախակրթարաններու բարձր դասարաններուն մէջ կրնայ ձայնանիշերու ուսուցմամբ զբաղիլ քիչ մը. ամէն գէպքի մէջ լաւագոյնն է որ նա ձայնանիշերու գրութեան մէջ ձայներու գիտողութիւնը մշակէ, ցոյց տայ որ բարձրագիւր ձայնանիշերը բարձր՝ իսկ վարը գրողներուն ալ ցած ձայն կը սլահանջեն: Այս միջոցաւ նա ախանջի ըմբռնման կը միացնէ նաեւ աչքի ըմբռնումը, եւ երգը կը ձգէ այսպէս երկու զգայարաններու զննողութեան տակ:

Քանի՛ խնդ ու հրճուանք կը զգայ դասատուն խիստ իրաւամբ. ո՛րչափ գոհ եւ ուրախ է նա, երբ աշակերտք կարող կը լինին ճիշդ ու որոշ երգել: Գլխաւոր բանն է ամէն պարագայի մէջ ֆաղր ձայն, ճշգրիտ ըմբռնում, մաքուր կարգաւորում ձայներու, պարզ արտայայտում, ըստ արտայայտման շեշտ ու հանգիստ, խիստ ուշադրութիւն ձայներու ուժին, ճիշդ բախում եւ խնամոտ կրթութիւն ինչպէս անհատի, նոյնպէս ամբողջ խմբի վերաբերմամբ:

Այս ամենուն համար ալ հարկ է որ աշակերտք ունենան իրենց ձեռքը մի տեսակի որ պարունակէ իրենց ուսուցուելիք բոլոր երգերը, այսպիսով ուսուցիչը թելադրելու համար ժամանակ չպիտի կորսնցնէ, ամբողջ դասաժամն ուսուցանելով պիտի անցնէ, եւ աշակերտք ալ մոռցածները պիտի գտնեն այդ տետրի մէջ իսկոյն եւ գծաւորութիւն չպիտի քաշեն բնաւ:

Յ. ՏԻՐԱՏՈՒՐԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

Ա.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՀԱՐՑՄՈՒՆՔ ԳԵՐՄԱՆ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՁ

Անոր (մայրենի լեզուին) ուսումը գրեթէ ամբողջապէս «Ընթերցանութեան գրքին» վրայ հիմնուած է: Դպրոցականին սկստաւորիչ գործիներուն կարգն է այն, եւ կանոնական «Ընդհանուր տրամադրութիւնք» բոլոր նախնական կրթութեան խորհրդին ըրած են զայն: Գերմանական մանկավարժութեան սկզբունքներէն մին է արդարեւ շատ քիչ գրել տալ: Կարեւոր է որ աշակերտն ունենայ եւ պահէ ի ձեռին այլազան նիւթեր պարունակող ու լաւ կերպով շինուած գիրք մը որ իրեն շատ մը տետրակներու տեղը բռնէ, որ առաջնորդ մը, ընկեր մը, վստահելի բարեկամ մ'ըլլայ այն ոյլ եւ ոյլ որդրոններուն մէջ զոր դաստիարակութիւնը կը բանայ իրեն:

Ընթերցանութեան գիրքը կը ջանայ պատասխանել այս ծրագրին: Ամբողջ գիրքը կը բաժնուի սովորաբար մէկ քանի փոքր հատորներու, որոց իւրաքանչիւրը կը պատասխանէ կրթութեան աստիճաններէն միոյն: Ամենէն փոքրիկ տղոց՝ ընթերցանութեան գիրքը կը սովորեցնէ իրենց աղօթքները. անոնց կը խօսի տարւոյն գլխաւոր տօներուն վրայ, կը նկարագրէ:

անոնց Զատիկին գարնան հրապոյրները եւ անոնց կը պատմէ Մենդեան բոլոր հրաշալիքները, իր ձիւնապատ ծառով, իր խաղալիկներով, իր շաքարեղէններով եւ իր չքեղ լուսավառութեամբ: Կ'ընտանեցնէ զիրենք ամենէն ծանօթ ծաղիկներուն, ամենէն շատ տարածուած կենդանիներուն հետ. կը խօսի անոնց իրենց ծնողաց վրայ եւ ընտանեաց մանկական աւելորդ ապաշտութիւնները կը տածէ կը պահպանէ: անոնց առջեւ կը բանայ մանաւանդ առասպելներու, վէպերու, դերոյցներու, հեքիաթներու աշխարհը, որոցմով շատ հարուստ է գերմանական գրականութիւնը: Կ'ուսուցանէ անոնց ամենէն գործածական առածները, վերջապէս արդէն իր նպատակը կը բերէ պատմութեան եւ մանկան: միտքը կը լեցնէ մանրավէպներով գորս սա թերեւս արդէն լրած է իր ընտանեաց մէջ եւ որք առ յապա անպէս մասն պիտի կապեն իր յիշողութեան որ ա՛լ չպիտի յիշէ թէ երբ զանոնք սովորեցաւ: Հոն կուգան հետ զհետէ Մեծն Կարողութեամբ, Ֆ. Շիկամօրուսը, Լուիթերը, Մերունի Ֆուլցը որ, Ռոզպախի մէջ Գաղիացեաց լաւ ծեծ մը տալէ յետոյ՝ փոքրիկ տղայքը դպրոց զրկելու միջոցներուն վրայ կը մտածէր...

Յաջորդ հատորներուն մէջ, ընթերցանութեան զիրքը ստիպուած է ինքզինք կրկնելու կամ գէթ վերադառնալու իւր հետոց վրայ: Ու հաճութեամբ կ'ընէ զայդ ուսուցանելն արդէն ըսել եւ դարձեալ ըսել չէ՞: Սակայն կ'ընդլայնէ այն սահմաններն որոց հպած է միանգամ, ձայնը՝ ըսելու կերպը կը բարձրացնէ. ա՛լ խօսքը շատ մատղաշ երեւակայութեանց չուղղուիր ուր ամենէն պարզ բաներն ալ հրաշալիքներու կ'առնուին, այլ այնպիսի տղայոց որոց միտքը կ'սկսի ծանօթանալ բանավարութեան: Անոնց աւելի լրջօրէն կը խօսի Աստուծոյ եւ արարչութեան, եղանակաց, բնութեան մեծ տեսարաններուն վրայ. խեղամտել կուտայ աշխատութեան սրբութեան եւ սիրելի կ'ընէ անոնց այն անասունները որ կ'օգնեն մարդուն բառնալու անոր բեռը եր-

բեմն իր նորատի ընթերցողները կ'առնու կը տանի հեռաւոր երկիրներ, վայրի գաղանի մ'որսորդութեան: Կը տանի զանոնք գետնին տակ, հանքերուն մէջ կամ թէ փապուղիի մը մէջէ, եւ կամ օդապարկոյն վերելքի մը մէջ՝ այերց վերին խաւերը ձեղքել կուտայ անոնց: Յօժարամիտ կը գեգերի կը յամէ պատմութեան էջերու մէջ, գերման մատենագրութեան ամենէն մատչելի գանձերուն կը ծանօթացնէ զանոնք եւ կը բերէ վերստին Կիյեօմին ու գերման ժողովրդեան փառքերուն:

Շնորհիւ այդ գրքին, ոչ մէկ տղայ կը թողու գարոցը առանց բերնոց գիտնալու Կէօթէի, Շիլլէրի, Ուլանտի, Քամիսոյի, Ֆալլէրսլէյլընի գեղեցկագոյն քերթուածները: Ամենուրեք լրած եմ արտասանուիլն Լաստենեաց Արքայի Պարերգին, Շիկամօրուսին, Կոյր Արքային, Բրուսիացեաց Երդին, Վալթոլն Կիյեօմիի ի պատիւ երգերուն: Բայց նախակրթարանի մէջ, ոյս արտասանութիւնը երբեք մի միակ տղու գործը չէ, փոքրիկ հրաշալիք որու հետեւելու փառասիրութիւնը եւ թերեւս նաեւ մոկի ընելու փափաքը կրնան երկար ատենէ ի վեր կորուսած ըլլալ միւսները: Ամբողջ գասարանն է որ կ'արտասանէ: Եւ ի՞նչպէս. — թէ խմբովին, միաձայնութեամբ, եւ թէ ամէն տղայք իրարու ետեւէ խօսք առնելով: Խմբովին, միաձայնութեամբ. — ուսուցիչն ի ձեռին ունի երաժշտապետի ճպտող եւ կ'առաջնորդէ արտասանութեան իրրեւ ճշմարիտ երաժշտական հատուածի մը նուագման: Շարժումը յամի է եւ անցնիւր տղայ շատ բարձր կը խօսի: Շեշտուած վանկերը, որոց վրայ ձայնը կը ծանրանայ, դաշնակաւոր գնացքին իբր հանգոյցները կ'ըլլան: Ընդհանուր շարժումը կը քշէ կը տանի բոլոր վարանումները, բոլոր մասնաւոր թերութիւնները: Ամէն բառ իր ուղիղ առողջանութեամբ կ'արտաբերուի, ամէն հնչում իր ճշգրիտ բացատրութեամբ, եւ ա՛լ ամբողջութեան մէջ տեղ չի մնար գաւառաբարբառի պակասութեանց կամ արտասանական սխալ-

խմացութեանց։ Բնականաբար արտասանութիւնը չի կրնար նրբութեան նկրտիլ, բայց բնագրին իմաստից կարեւորագոյն պահանջումները բաւականաչափ կը գոհացնէ։ Խմբագրատին ճպտորդ գիտէ ի հարկին շտապել արտասանութիւնը, ուսուցանել ձայնը կամ, ինչ ինչ մասանց մէջ, գրեթէ չլուսնի մը վերածել։ Երբ բանաստեղծութիւն մը լրջօրէն ուսումնասիրուած է այս եղանակաւ, ա՛լ ոչ մի աշակերտ չէ կարող ծանր սխալ մ'ընել, սիրով պիտի ըսէի հոս, բնագրին արտայայտած եւ իրեն ալ համակրած զգացումներուն ճայնաստիճանին վրայ։ Եւ անշուշտ այսպիսի գործօն ու հաւաքական սերտում մը շատ աւելի կենդանի կերպով կը տպաւորէ բնագիր մը յիշողութեան մէջ քան թէ մինաւոր եւ տաժանելի մոտապահական աշխատութիւն մը։ Եթէ, ուրիշ կողմէ, իմաստնաբար շատ չափաւոր թուոյ մը մէջ սահմանափակուին ի բերան ուսանելի կտորները, ամենայն հաւանականութեամբ կարելի պիտի ըլլայ ունենալ, լաւ ընտրութեամբ մը, ազէկ գիտցուած ու ամենուն կողմէ ալ ազէկ գիտցուած ընտիր բաներու փոքրիկ պաշար մը։ Բրուսիական լաւ դպրոցներու մէջ այս արդիւնքը ձեռք կը բերուի, ինչպէս կ'ապացուցանէ աղայոց արտասանութիւնը, երբ մի առ մի հարցաքննէք զանոնք։

Այս պարագային մէջ, նախ կը ծանուցուի հատուածին վերնագիրը եւ իւրաքանչիւր աշակերտ պէտք է պատրաստ ըլլայ զայն ըսելու։ Տղու մը անունը կը տրուի, եւ նա կ'սկսի։ Կ'արտասանէ տուն մը, երկու տուն։ Բայց ուսուցիչը նշան մ'ըրած է եւ երկրորդ մ'արդէն ոտքի ելած է եւ կը շարունակէ։ Քանի մ'երկվայրկեան յետոյ երրորդ մ'է, եւ կտորը կ'երթայ այսպէս, բերնէ բերան թռչելով, մինչեւ վերջին տունը եւ վերջին բառը։ Ուսուցիչը, սանկ ըսեմ, արտասանութիւնը կ'արձակէ բոլոր դասարանին մէջ, աջ կողմ, ձախ կողմ, խորը, իրեն աւելի մօտը։ Ամէն մէկը կազմ ու պատրաստ կ'ապասէ, գրեթէ անձկու-

թեամբ, յիշողութիւնը վստահ ապահով, եւ, հազիւ թէ անունը կը տրուի, իսկոյն անդեղեւ կը կցորդի կարգին ու յաւաք կը տանի արտասանութիւնը առանց ընդմիջման եւ առանց եղանակի փոփոխութեան։ Հազիւ թէ կը նշմարուի որ արտասանողը նոյնը չէ եւ բանաստեղծին ոգին յիրաւի կը թրթռայ բոլոր ներկայից վրայ։

Ասկէ զատ, այս մեթոտը քերթուածոց արտասանութեան յատուկ չէ, դասարանին ոգեւորութեան զսպանակն իսկ է։ Ինչ դաս ալ ընեն հոն կամ քաղուած են, պատմութիւն կամ աշխարհագրութիւն, բնագիտութիւն, հաշիւ կամ բնապատմութիւն, երբեք աշխատութեան ծանրութիւնը մի միակ աշակերտի վրայ չի գրուիր։ Միշտ հարցումները ամենուն մէջ կը բաժնուին, կը կոտորակին։ Միշտ, դեռ ոչ մէկուն անունը տրուած, հարցումը կ'ըլլուի, այնպէս որ իւրաքանչիւր աշակերտ, հարցապնդուելու հաւանականութեան տակ, ուշադիր ըլլայ եւ քանի մ'երկվայրկեան ժամանակ ունենայ խորհրդածելու եւ պատասխանը պատրաստելու համար։ Իւրաքանչիւրն արթուն է, տկանջը սրած եւ խօսքն արդէն շըրթանցը վրայ։

ԺՈՌԺ ՏԻԻՄԷՆԻԼ (Մանկավարժութիւնը Հիւսիսային Գերմանիոյ մէջ)։

Բ.

ՏՂՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՊԷՏԵՐ ԵՒ ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՋԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Մանկութեան դաստիարակները չեն անգիտանար թէ ֆիզիքական եւ մտաւորական գործունէութիւնը ո՛րչափ հզօր զօրութիւն մ'է որուն կը հնազանդի մարդն ամէն հասակներու, բայց գլխաւորապէս մանկութեան եւ պատանեկութեան շրջաններուն մէջ։ Իր օրօրոցին մէջ պառկած մանուկը շարժման այս անխոնջ պէտքին ապացոյցը կուտայ։ Իր պզտիկ ձեռքերը, որոց յօդուածներն հազիւ տեսանելի են, կը ջանան բռնել ամէն ինչ

որուն կրնան հասնիլ, զինք ծածկող թեթեւ շղարշը, ցուրտէն պատսպարող կակուղ վերմակը, մահճակին ձողերը, իր մօր ժպտուն երեսը: Եթէ իր ձեռքն առարկայ մը տան զինքն զբօսցնելու համար, ինչպէս կ'ըսեն, բայց իրօք զինքն զբաղեցնելու համար, փութով կը բռնէ զայն, կը դարձնէ իր ձեռքերուն մէջ, կը սեղմէ, ամէն կողմ կը պտտցնէ, կը մօտեցնէ, կը հեռացնէ, կը զննէ, վար կը նետէ, նորէն կ'առնու եւ այսպէս կը շարունակէ մինչեւ որ ուրիշ զբաղում մը յաջորդէ ատոր:

Քիչ մը վերջը, երբ խաղալիք մը ձեռք անցընէ, ամէն ջանք պիտի ընէ զայն կոտրելու, անոր այլ եւ այլ տարերքը բաժնելու, հասկնալու համար թէ ի՞նչ կայ մէջը. բոլորովին աչք կը կտրի զայն տեսնելու, զայն քննելու համար, բոլորովին ականջ՝ լսելու եւ կրկնելու համար ձայնական ազդեցութիւնները. մինչեւ ճաշակելիքն անգամ կը կրէ յաճախ. տարօրինակ պատրանքներ: Տեսէք, հանրային պարտէզի մը մէջ, գիւղին կամ ճեմավայրին մէկ անկեան մէջ, ծովուն աւազուտ եգերքին վրայ, սա չորս տարեկան մանուկները, մանրակերտ գործինքրով զինուած, իրենց մօր արթուն աչաց տակ կ'աշխատին վարձկաններու նման, աւազ կը կուտեն, քարեր կը տեղափոխեն, պատեր կը շինեն, թուժքեր կը կանգնեն, ջրանցքներ կը պեղեն, ածուներ կը սահմանագծեն եւ դժկամակ կը բաժնուին այս հեշտալի զուարճութիւններէն:

Գալով դպրոցական տարիք ունեցող տղաքներուն որոց դաստիարակութեան եւ կրթութեան հոգն ստանձնած եմք, զիւրին է գիտել թէ ի՞նչպիսի հաճոյքով կը թողուն նստարանը ուր զիրենք արգիլած բռնած էր տեսական դաս մը, ի՞նչպիսի ուրախութեամբ կը թռչին զբօսանաց ալմուլի խաղերուն, մարմնամարզի փրկաւէտ շարժումներուն կամ արհեստարանի զանազան գործողութեանց:

Իսկ բարձրագոյն նախակրթարանաց կամ երկրորդական վարժարանաց մէջ ա-

նոնց անդրանիկները՝ գիտեմք թէ ի՞նչ միջոցներ ունին չափազանց երկար դասերու յոգնութիւնը զեղչելու, գիշերօթիկ աշակերտութեան ձայնայնութիւն խաբելու: Այդ գողուցիկ զբօսանքներուն հետքերը կը տեսնուին մեր լիկէսներուն ու գոլէժներուն հնօրեայ կահերուն վրայ, եւ մէկէ աւելի լուրջ ու բազմահմուտ ուսուցչապետներ, մէկէ աւելի անուանի կաճառորդներ, մէկէ աւելի խստաբարոյ դատաւորներ կրնային գտնել անոնց վրայ այն սկզբնատուները, փակագրերը, պատկերները զորոս քանդակած են հոն նախական գործիքով մը, հասարակ դանաւով մը, սերտողութեանց երկարածիք ժամերուն մէջ:

Ֆիզիքական գործունէութիւնը բացարձակ հարկաւորութիւն մ'է ուրեմն յորմէ օգուտ պէտք է քաղել: Արդի ամէն մանկավարժից ջանքերը դէպ ի այդ նպատակը կը ձգտին: Կրթական եւ օրէնսդրական իշխանութիւնք ալ ձեռնառու եղած են այդ գիտմանց՝ զբօսանք, մարմնամարզ եւ ձեռական աշխատութիւն պատուիրելով:

Միջին դարու մէջ, այս գործունէութիւնը բացարձակապէս սեղմուած էր, եւ ժլատօրէն ու առանց մեթոտի տրուած կրթութեան նպատակն ալ միայն յիշողութիւնն էր: Դատողութիւնը, առողջապահութիւնը եւ մարմնակրթանքն ի սպառ լքուած էին նոյնպէս: Ասոր համոզուելու համար կը բաւէ կարդալ Ռոպըլէն ու Մոնդէյնը, որք, երբեմն հեգնութեամբ, երբեմն զայրութիւն, այդ կատարելապէս անտրամաբանական դրութեան դէմ կը յառնէին: Մեզի աւելի մերձաւոր ժամանակաց մէջ, Ժ. Ժ. Ռուսօյի տեսութիւնները եւ Ֆուէօպլի հանճարեղ կիրարկութիւնները մեծ քայլ մ'առնել տուն մարմնայ եւ մտաց, ձեռաց եւ դատողութեան ներդաշնակ կրթութեան: Գերմանացի մանկավարժը, որ Հոյզլինկէրի դաշափարներէն ազդուած էր, ամենէ աւելի հասկցած էր տղուն շարժման պէտքը եւ ստեղծիչ բնազդը:

Միչէ՛, առողջ դաստիարակութեան մը

այդ անկեղծ բարեկամը, խանդավառ խօսքերով գոված է Ֆուէօպէլի փորձերը: Մեր մեծ պատմաբան-քերթողը, որուն մէջ կար ճշմարիտ մանկավարժ մ'ալ, այս մասին հիանալի էջեր գրած է իր Մեր գաղափարները անուն գեղեցիկ գրքին մէջ...: «Ըսելիքս մէկ բառի մէջ կրնայ համառօտուիլ, կ'ըսէր նա. պէտք է վերակազմել մարդը, ոչ եւս ծայրատեղ զայն՝ չափազանց զարգացում մը տալով այս ինչ մասին, այս ինչ կարողութեան եւ ի բաց յապաւելով միւսները: Գործօն կարողութիւնները չլնել անոր մէջ, դասարանին մէջ վերադարձնել կեանքն ու շարժումը: Բեռնաւորացի, Սգանսի եւ Պերթուտի մէջ, ոտքի վրայ կեցած միայն դաս կուտար եւ աշակերտներն ալ ոտքի վրայ կը կեցնէր: Ի վերտօնի մէջ միայն ու հաստատութեան ինկած ատենն էր որ թոյլ տուին անոնց նստիլ: Մեր արդի դասարանները(*) բոլորովին հակընդդէմ պատկեր մը կը ներկայացնեն. կործես պզտիկ անդամալոյճներու, հաշմանդամներու, ծերուկ մանրուք գրագիրներու խմբումներ են անոնք: Սերտարանին մէջ չէ՞ կարելի աշակերտները երբեմն ոտքի վրայ կեցնել, երբեմն նստեցնել, բարձր գրասեղաններ ու նստարաններ գործածել, նուազ գրել տեսարաններու մէջ...: Բայց այս ամէնը կը դժուարացնէ բարեկարգութիւնը, մինչեւ իսկ անհնար կ'ընէ զայն բազմաթիւ կարգերու մէջ: Այն ատեն անհաճախեալ խտտութիւն մը որ կը գամէ տղան տեղի մը վրայ. բայց որքան աւելի զայն այսպէս անշարժացած կեցնես, այնքան աւելի կը լինի անոր անհանգստութիւնը, անոր ներքին յուզումը եւ շարժման պէտքը:»

Այս բնական ձգտումները բռնադրօնել իր աղբիւրին մէջ իսկ ցամքեցնել է այն բանը որուն անկէ հայթայթել մարդուն ամենէն աղնուական գոհացումները, ամենէն օգտակար զբօսանքները, այսինքն

(*) Միշլէի գրած ժամանակէն ի վեր Գաղիա ամենակարեւոր յառաջդիմութիւններ իրագործած է իր նախակրթարանաց մանկավարժական կազմակերպութեան մասին:

որ եւ է աշխատութեան մը ճաշակը: Խեղացի ծնողաց, ճարտար վարժապետաց պարտքն է ուղղութիւն տալ այս շարժման պէտքին, զայն իրեւ գաստիարակութեան միջոց գործածել, այնպիսի գաստիարակութեան մը որ ճշմարտապէս օգտակար լինի նոյն իսկ տղուն եւ այն ընկերութեան որուն նա մէկ օգտակար կամ փաստակար տարրը պիտի լինի, իրեն տրուելիք խնամքներուն համեմատ:

Այս ճշմարտութեան պայծառութեան հակառակ, քանի՞ քանի՞ ծնողներ կան որքան տեսն կ'ընեն այս օրէնքը, քանի՞ քանի՞ գաստիարակներ որքան քառականին չեն հասկցած այս հարկաւորութիւնը: Ընտանեաց մէջ, կը տեսնես որ կը գանգատին որ տղան անհանգստ, անհամբեր, կարի հետաքրքիր, անառակ է. ամէն բան կը խառնէ, կը կտորէ, կը թափէ, անտանելի կը գտնեն զայն, մինչդեռ իր բնութեան հակամիտութեան կը հետեւի նա, ուրիշ ոչինչ: Դպրոցին մէջ, զինքը զբօսաւէր, մտացիր, չատախօս, խաղամու, անհնազանդ, անուշադիր կը կոչեն, երբ դասատուին կողմէ անբաւական կերպով պատրաստուած, չափազանց վերացեալ կամ չափազանց երկայն դաս մը կ'ստիպէ տղան մտասթափուիլ փնտռել այլանդակ, սնոտի, երբեմն եւս փնաստակար զբաղմանց մէջ: Այսպիսի անբանաւոր ուղղութեամբ մը, ընտանիքը չոր տղաներ յառաջ կը բերէ, դպրոցը՝ յոռի աշակերտներ:

Մեր խօսքը տղայոց ընդհանրութեան վրայ է, եւ ոչ թէ այն խեղճերուն որքան պէտք է որ իրեւ հիւանդ նկատուին, մասնաւոր դարմանի մը կարօտ, զոր սովորական դպրոցը եւ ընտանիքն իսկ անկարող են տալ: Բնութեան ամէն կարգաց մէջ ալ կան արտականոն երեւոյթներ, կան բարոյական եւ մտաւորական կրետնութեան (crétinisme) դէպքեր, որպէս կան ֆիզիքական կարգին մէջ:

Դաստիարակին էական պարտաւորութիւնն է օգուտ քաղել տղուն բնական արամադրութիւններէն, սնունդ մը տալ անոր շարժման պէտքին, անոր գործու-

նէութիւնը փրկաւէտ եւ օգտակար զբաղմանց գործածելւ եթէ այս անյադ բաղձանքին ձեռնտու չըլլանք, եթէ մանուկը անգործութեան դապապարտենք, կամ եթէ անոր աշխատութեան ճաշակին լաւ ուղղութիւն մը չտանք, ապագային համար զեղծ բնոյթ մը պատրաստելու վտանգին կ'ենթարկուինք: Պ. Բալմիրէն իր բանաստեղծութեանց միոյն մէջ կ'ըսէ. «Եթէ արդիւնքը շարժման եւ գործունէութեան այդ աննուաճելի պէտքը, յոռի հակամիտութեանց վերին աստիճանի նպաստաւոր գետին մը պատրաստած կ'ըլլանք, Այդ վնասակար տրամադրութիւնք երեւան կուգան ի սկզբան անհամբերութեամբ, ամէն տեսակ քմահաճոյքներով, ծանծարոյթով, քակելու քանդելու ճաշակով, ամէն բանէ զգուանքի զգացումով եւ շատ մը նմանօրինակ ախտանիշներով. բայց վերջը անոնց ետեւէն երեւան կ'ելնեն շատ աւելի ծանրաւիշիւ տրամադրութիւնք, ինչպէս անհնազանդութիւն, ըմբոստ, կռուասէր ողի, եղբայրներուն եւ քոյրերուն, ծնողաց եւ ծառայից դէմ յայտնուած: »

Նկատելի կէտ մը կայ զոր պէտք է մոռացութեան տալ. այն է թէ յոգնեցնող վարժութիւնք, ձեռական աշխատանք կը հաստատեն հաւասարակշռութիւն մը որ այնքան հարկաւոր է տղայութեան ու պատանութեան եռանդնալից առոյգ բնութեանց ֆիզիքական ոյժերուն համար, եւ առաջը կ'առնուն մոլութեանց որք կրնային անբուժելի աւերներ գործել ֆիզիքական, իմացական եւ բարոյական երբեակ սահմաններուն մէջ: Պէտքի կ'ըսէ. Միայն մարդանքը կայ արիւնը շրջաբերելու եւ դնդերները խաղցնելու համար. եթէ անփոյթ ըլլան այս մասին, բնութիւնն իր վրէժը կը լուծէ:

Է. ՇՄԻԴ (Ձեռակաւ աշխատութեան վանկավարժութիւնը):

ՀԱՍԿԱՔԱՂ

Ա Շ Խ Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Տղան կանուխէն պարտի սովորիւ թէ աշխատութիւնը մարդուն ճակատագիրն է: Աւանդ, ամէն ինչ կը յայտնէ նմա այս ճշմարտութիւնը, եւ բաւ է իրեն իւր նայուածքն ըստ բախտի ձգել իւր շուրջը, եւ ամենուրեք պիտի տեսնէ նեղութիւն, աշխատանք, քրտինք, մարդկային կեանքը ցաւագին եւ վաստակաբեկ:

(ԼՕՆԱՏԻԻ)

* *

Տղան պարտի կանուխէն սովորիւ թէ աշխատութիւնը մարդուն ապահովագոյն միտքարանքն է, թէ նա միայն երջանիկ կ'ընէ, նա միայն կ'ազնուացնէ ու կը բարձրացնէ մարդը, թէ նա միայն մարդուն գոյութեան իրաւունք մը կուտայ, եւ նա' միայն զմարդ օգտակար կ'ընէ իր անձին եւ իր նմանեաց:

(Տ. ԳԱՌՈՆԸ)

* *

Տուէք տղայոց աշխատութեան սովորութիւններ. եթէ ներքեւ անոնց մեղկ, դատարկապորտ, թոյլ կեանք մը, այդ իրր իրենց տարրը պիտի լինի, ալ չպիտի կրնան դուրս ելնել անկէ, եւ ո՛ր եւ է լուրջ ու շարունակեալ զբաղում անտանելի լուծ մը պիտի դառնայ անոնց համար:

(ԿՕՔԷՅ)

* *

Աշխատութիւնը ճամբայ մ'է դէպ յառաքինութիւն:

(ՊՈՆԷՆԸ)

* *

Աշխատութիւնը մոլութեան դեղթափը, բարեկեցութեան պատճառը եւ երջանկութեան գործիքն է:

(ՆՈՅՆԸ)

* *

Նոքա որք կը գանգատին աշխատութեանէն՝ ապերախութիւն ցոյց կուտան իրենց լաւագոյն բարեկամին նկատմամբ:

(ՍԱՆԻԱԼ ՏԻԼԿԷՅ)

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԱՍ ՄԸ

(Տարրական դասընթաց)

ՍԻՒ ՏԱԽՏԱԿԸ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ուսուցիչը. — Տղաքս, այս անգամ ձեր գրելիք շարագրութեան նիւթը պիտի ըլլայ Սեւ Տախտակը: Աչոտ, ե՛լ այս վերնագիրը գրէ՛ սեւ տախտակին վրայ:

Յակոբ. — Պ. Ուսուցիչ, սխալ գրեց. տողին սկիզբէն գրեց: — Ո՛ւր գրելու է: — Մէջտեղը. — Իրաւունք ունիս, վերնագիրները տողին մէջտեղէն կը գրեն: Ուղղագրութեան սխալ կայ:

Արշակ. — Այո՛, կայ, դախտակ գրեց դով. պէտք է գրուի սով:

Ուսուցիչը. — Շատ աղէկ: Տեսնե՛նք, ի՞նչ կրնաք խորհիլ եւ ըսել այս սեւ տախտակին վրայ որ ահա՛ մեր աչքին առջեւն է: Նախ դասարանին մէջ անոր բռնած տեղին համար կրնա՞ք բան մ'ըսել:

Օննիկ. — Այո՛, Պ. Ուսուցիչ. Տախտակը պատին վրայ է:

Ուսուցիչ. — Լա՛ւ. բայց ո՞ր տախտակը, չի հասկցուիր, պէտք է որոշել. ի՞նչ պէս պէտք է ըսել, ներսէս:

Ներսէս. — Սեւ Տախտակը պատին վրայ է:

Ուսուցիչը. — Պատին վրայ ի՞նչպէս գրուած է, ի՞նչպէս կեցած է. ինչպէս որ սեղանի մը վրայ բան մը կը գրուի՝ ա՞յն պէս: Աւելի ճիշդ խօսելու համար ի՞նչ պէս ըսել պէտք է: Դուն պիտի ըսես, Յակոբ. ըսէ՛, տեսնեմ:

Յակոբ. — Կախուած է պէտք է ըսել:

Ուսուցիչը. — Պատէն ըսելով ալ կը տեսնէք որ խօսքը անորոշ կը մնայ. ու՛ր տեղի պատէն կախուած է այս սեւ տախտակը. — Իպրոցին պատէն. — Բայց դպրոցին մէջ շատ պատ կայ. դպրոցին ո՞ր մասին պատէն. — Իսասարանին. — Անշուշտ. Հիմայ խօսքը կատարեալ եղաւ: Աչոտ, Հիմայ գրէ այս խօսքը սեւ տախտակին վրայ:

Աչոտ կը գրէ. Սեւ Տախտակը դասարանին պատին վրայ կախուած է:

Ուսուցիչը. — Հիմայ սեւ տախտակին ինչի՞նչ վրայ կրնանք բան մ'ըսել. — Ձեւին վրայ. — Շա՛տ լաւ. ձեւը ի՞նչպէս է ուրեմն:

Օննիկ. — Քառակուսի է: (Ուրիշներ ալ նոյնպէս կ'ըսեն) — Ինչո՞ւ. — Վասն զի չորս կողմ ունի. — Բայց ամէն չորս կողմ ունեցող քառակուսի չ'ըսուիր: Խորանարդին երեսները չորս կողմ ունին. ձեր մտամարզական առարկայից մէջ սղոցածներ կան որոնց երեսներն ալ չորս կողմ ունին. տարանկիւն ըսուած ձեւերն ալ չորս կողմ ունին: Ասոնք ամէնքն ալ քառակուսի՞ են:

Արշակ. — Ո՛չ, Պ. Ուսուցիչ. քառակուսին չորս կողմերը հաւասար կ'ըլլան եւ անկիւնները՝ ուղիւ:

Ուսուցիչը. — Մեր տախտակին ձեւը ձեր մտամարզական առարկայներէն որո՞ւն ձեւին կը նմանի. — Մեր սղոցածներուն ձեւին. — Անոնք ի՞նչ ձեւ ունին. — Ուղղանկիւն քառանկիւն. — Այսի՞նքն. — Չորս կողմ եւ չորս անկիւն ունին. դէմ առ դէմ կողմերը իրարու հաւասար են, եւ չորս անկիւնները՝ ուղիւ:

Ուսուցիչը. — Կը տեսնէք որ պէտք չէ աճապարել. պէտք է խորհիլ. Հիմայ, Միհրան, եկուր տեսնեմ, ի՞նչպէս պիտի գրես մեր սեւ տախտակին ձեւը բացատրելու համար:

Միհրան կը գրէ. Սեւ Տախտակը ուղանկիւն գառանկիւն ձեւ մ'ունի:

Ուսուցիչը. — Հիմայ նախ կարգաւոր առջի խօսքին հետ. հոս չէ՞ք տեսներ այնպիսի բառեր զորս կրնանք վերցնել, անոնց տեղ ուրիշ բառ մը դնելով:

Օննիկ. — Այո՛, Պ. Ուսուցիչ. երկրորդ սեւ Տախտակը բառերը անգամ մ'ըսուած են:

Ուսուցիչը. — Շատ լաւ. կրնանք զանոնք չկրնել. տեղը ի՞նչ բառ պէտք է դնել. — Անիկա կ'ըսենք. — Այո՛, որ դերանուն մ'է, այնպէս չէ՞. կը յիշէք անշուշտ անյեալ օրուան դասս դերանուններուն վրայ: Ուղղագրութեան սխալ չկայ:

Ի՞նչպէս կը հնչէք ուղղանկիւն բառը. քսէ՛ք տեսնեմ: Տեսէ՛ք, երկու ղի ձայն կը հանէք, եւ արդարեւ երկու ղ պէտք է: Այդ բառին մէջ քանի՞ բառ կայ: Ըսէ՛, Արշակ:

Արշակ. — Երկու. ուղիղ եւ անկիւն:

Ուսուցիչը. — Այո՛, բարդ բառ մ'է: Է՛հ, ուղիղ ին մէջ քանի՞ ղ կայ: — Երկու: — Ուրեմն անոնք պիտի պահուին, միայն թէ ին կորսուած, սղուած ըլլալուն՝ երկու ղ երբ քով քովի եկած են: Ուրիշ տխալ չկայ: Ձէ՞ք խօսիր: Քառանկիւն բառին մէջ քառ ի՞նչպէս կը գրուի: Քառսուն ի՞նչպէս կը հեգէք: — Ք, ա, ո՛, քառ, ս, ու, ց՛ սուն, քառսուն: — Շատ աղէկ, քառսուն բառին մէջի քառը ինչ որ է՛ քառանկիւն ին մէջն ալ նոյն է. չորս կը նշանակէ. քառսուն՝ չորս անգամ տա-
օր, քառանկիւն՝ չորս անկիւնով: Քառորդ բառն ալ գիտէք: Ի՞նչ կը նշանակէ: — Չորս մասին մէկը: — Շատ լաւ, շատ լաւ. այս բոլոր բառերուն մէջ ալ քառ մի եւ նոյն կերպով, ք ով, կը գրուի, մի եւ նոյն բառն է: Ուրեմն, Միհրան, սրբագրէ գրածդ:

Միհրան կը սրբագրէ. Անիկա ուղղանկիւն քառանկիւն ձեւ մ'ունի:

Ուսուցիչը. — Ո՞վ շինած է զայն, ի՞նչ բանէ շինած է, ի՞նչպէս. ահաւասիկ հարցումներ որոց վրայ պէտք է խորհիլ, եւ որոց պէտք է պատասխանել, երբ կ'ուզենք սեւ տախտակին վրայ բան մը շարագրել, եւ նախ, ո՞վ շինած է զայն:

Ունեմ. — Կահագործը: Այո՛. — Ատաղծագործը:

Ուսուցիչը. — Այդ երկուքը մի եւ նոյն բանը չեն. երկուքն ալ փայտի վրայ աշխատող արհեստաւորներ են, բայց կահագործը աւելի նուրբ բաներ կը շինէ, աթոռներ, գորոցներ, գրագարաններ եւն. իսկ ատաղծագործը կը շինէ տախտակամածներ, պարզ սեղաններ, դռներ, պատուհանի շրջանակներ, փեղկեր եւն. իր աշխատութիւնը աւելի հաստ ու խոշոր է: Ասիկա շինողը ուրեմն ո՞վ է: — Ատաղծագործը: — Ի՞նչ բանէ շինած է: — Տախտակներէ, զանոնք իրարու քով բերած միացուցած

է: — Բայց առաջ նախապէս ուրիշ աշխատութեան մը: — Ո՛չ, ուսուցիչ. նախ տախտակները քերած է, մաքրած է: — Այդ գործողութեան կ'ըսեն յղկել. ուրեմն իրարու քով բերած տախտակները ի՞նչպէս էին: — Յղկուած էին: — Այս սեւ գոյնն արդէ՞ն ունէին: — Ո՛չ, ներկ քսած են վրան: — Այսինքն մէկ բառ ո՞վ: — Ներկած են: — Ո՞վ ներկած է: — Ան, Պ. Ուսուցիչ, ատաղծագործը:

Ուսուցիչը. — Ուրեմն, Գարեգին, դուն եկուր տեսնեմ. հիմայ այս ըսուածները շարագրէ եւ յաւելցուր այս գրուած միւս խօսքերուն քով:

Գարեգին կը գրէ. Ատաղծագործը շինաց է այս սեւ տախտակը յղկաց տախտակներէ. ետէն ներկած է:

Ուսուցիչը. — Այս երկու խօսքերը իրարու հետ չե՞նք կրնար կապել:

Աշոտ. — Այո՛, եւ ով. եւ ետէն ներկած է:

Ուսուցիչը. — Շատ աղէկ, Աշոտ. աւելի աղէկ ըսելու, աւելի կոկիկ գրելու համար աւելորդ բառ մը չե՞ս տեսներ: — Այո՛, այս սեւ տախտակը բառերը: — Անոնց տեղ ի՞նչ կրնանք ըսել: Ըսէ՛, տեսնեմ, Օննիկ:

Օննիկ. — Զայն կ'ըսենք, գերանուն կը գնենք, Պ. Ուսուցիչ:

Ուսուցիչը. — Նոյնը պէտք է գնել նաեւ ներկած է ին քով ալ. ի՞նչ ներկած է, սեւ տախտակը, զայն: Բառերուն ուղղագրութեան վրայ զիտողութիւն չունի՞ք: — Շինած ծով կը գրուի: — Ուրիշ: — Յղկուած ալ ծով: — Անշուշտ. Գարեգին ներկածը ճիշդ՝ ծով է գրած, մինչդեռ շինած եւ յղկուած բառերուն ծայրը ց զըրած է. պէտք էր մտածէր որ մի եւ նոյն ձեւ բառեր են. բոլոր այս տեսակ բառերը, եկած, գացած, տեսած, խօսած, լսած եւն, որոնք անցած գործ մը կը ցուցնեն, ան ով կը վերջաւորին: Դուք ալ գտէք, տեսնեմ, ուրիշ այսպէս վերջաւորուած բառեր: — Կերած: — Գրած: — Կարգայցած: — Աշխատած: — Մոռցած: — Ուրիշ, ուրիշ: — Փախած: Խնամ: — Դործած: — Եւ այլն, հիմայ այս ամենուն

ծայրի գիրը ի՞նչ է։ — Ծ է, ծ է։ — Շատ լաւ, տղաքներս. նայեցէ՛ք որ ասկէ վերջը սխալ չգրէք։

Մէյ մ'ալ սա յղկուած բառին վը ձայնին նայեցէ՛ք. Գարեգինը վ ով գրած է, եւ գուցէ չատեր ալ ձեր մէջէն այնպէս պիտի գրէին. արդէն այդ մասին ձայն հանող չեղաւ։ Բայց բոլոր այդ տեսակ բառերուն մէջ ալ վը ձայնը ու ով կը գրուի. սիրումս, տեսնումս, գործումս, գրումս եւն. Թող վերջաւորութիւնը ան չըլլայ, այլ ուրիշ բան ըլլայ, բաւական է որ ըլլուիլ, շինուիլ, մէկէ մը բան մ'ըլլալ նշանակէ։ Այսպէս, գրուիլ, գրուցաւ, կը խօսուի, պիտի մեակուի, տեսնուէ՛ եւն, այս բառերուն մէջ վը հնչումը ի՞նչ գիրով պիտի ցուցուի։ — Ու ով, Ուսուցիչ, սորվեցանք. — Շատ լաւ։ Միհրան, կրնաս ըսել ինձ թէ տախտակներ եղակի՞ է թէ յոգնակի։

Միհրան. — Յոգնակի է. «մէկէ աւելի տախտակ» կը նշանակէ։ — Ինչէ՞ն յայտնի է։ — Ծայրը ներ կայ։

Ուսուցիչը. — Յակոբ, ուրիշ յոգնակի բառեր ըսէ ինձ։ — Պարսէզներ, ծառեր, ծաղիկներ։ — Արշակ, Միսաք, վահան, դուք ալ։ — Ոչխարներ. — ձիեր. — կովեր։ — Յոգնակի ընելու համար ուրեմն, Աշոտ, անունին ծայրը ի՞նչ կ'աւելցուենք. — Գիտեմ, երբ բառը մէկ վանկով ըլլայ՝ եր, չէ նէ ներ։ — Այսինքն, երբ միավանկ է անունը՝ եր, երբ բազմավանկ է՝ ներ կ'աւելցուենք. Լա՛ւ. այս երբ կամ ները է՞ ով թէ ե ով կը գրուի։

Գարեգին. — Ե ով, Պ. Ուսուցիչ. ներեցէ՛ք, սխալեր եմ, տախտակներէ բառին մէջ նէն յետոյ ե պիտի գրուի։

Ուսուցիչը. — Սրբագրէ՛ ուրեմն, Միշտ յոգնակիի այդ վերջաւորութիւնը ե ով կը գրուի, մոքերնիդ պահեցէ՛ք. Հիմայ գրուած այս վերջին խօսքն ալ ճիշդ եղաւ. եթէ ուզէք, ետէն բառին տեղը կրնաք յետոյ ալ ըսել։

Հիմայ, քիչ մը խորհինք թէ սեւ տախտակը ի՞նչ բանի համար է, ի՞նչ են իրեն օգուաները։

Միսաք. — Սեւ տախտակին վրայ գիր կը գրեն։

Ուսուցիչը. — Այո՛, անշուշտ, բայց թուղթի վրայ, տետրակի մէջ, քարտատակի վրայ ալ կը գրուի. ի՞նչ պէտք կայ այս սեւ տախտակին։

Օննիկ. — Անոնց վրայ մէկը բան մը գրէ նէ, ամէնքս ալ չենք տեսնար. բայց սեւ տախտակին վրայ գրուածը ամէնքս ալ կը տեսնանք։

Ուսուցիչը. — Այո՛, չատ լաւ ըսիր. միայն թէ ո՞ր ատեն պէտք է որ տախտակին վրայ գրուածը ամէնքս ալ տեսնենք. — Ուսուցիչը դաս տայ նէ. — Ըսէք. երբ Ուսուցիչը դաս տայ կամ աւելի լաւ, երբ ուսուցիչը դասը բացատրէ։ Ի՞նչ կը գրէ Ուսուցիչը սեւ տախտակին վրայ. — Բառեր. — Միայն բառեր. — Խօսքեր. — Խօսքերն ալ բառերէ կը շինուին. միայն բառ եւ խօսք. — Թուանշաններ ալ, Պ. Ուսուցիչ. — Ձեւեր ալ կը շինեն, Պ. Ուսուցիչ. — Մեզի երբեմն պատկերներ ալ կը գծէք։

Ուսուցիչը. — Լա՛ւ, լա՛ւ. մտածելով հետ դժեմէ գաղափարները կը գտնէք. Բայց սեւ տախտակին վրայ միայն Ուսուցիչը չէ որ կը գրէ կամ կը գծէ. դուք ալ...

Յակոբ. — Այո՛, Պ. Ուսուցիչ, մենք ալ կը գրենք. — Երբ. — Երբ դուք մեզ կանչէք. — Ի՞նչ բանի համար ձեզ կոչեմ. — Դաս հարցնելու. — Այո՛, երբ պէտք է որ մէկուն գրածը ամէնքն ալ տեսնեն, եթէ սրբագրութիւն ընել պէտք ըլլայ՝ ամէնքն ալ օգտուին, եւն. Ուրեմն հիմայ կրնաք ըսել թէ սեւ տախտակը պիտանի՞ առարկայ մ'է թէ ոչ. — Այո՛, պիտանի առարկայ է, Պ. Ուսուցիչ. — Ո՞ր տեղի առարկայներէն է. — Դասարանին. — Դասարանին մէջ ուրիշ առարկայները պիտանի չեն. — Այո, անոնք ալ պիտանի են. — Ինչպէս... — Գրասեղանները. — Ուսուցչին ամպիոնը. — Քարտէսները. — Մտամարդութեան նիւթերը, Պ. Ուսուցիչ. — Ընթերցարաննիս. — Գրիչնիս եւ կաղամարնիս. — Գրավարժութեան և գծագրութեան տետրակնիս. — Կարկիւնի տուփը. — Քանալը. — Մեզրօն։

Ուսուցիչը. — Ատոնց ամէնքն ալ շատ պիտանի եւ օգտակար են, եւ սեւ տախտակն ալ ուրեմն ամենէն պիտանիներէն մէկն է: Հիմայ, ձեր մէջէն մէկ երկուքը կրնան գալ ուրեմն հոս մէկ քանի փոքրիկ խօսքեր աւելցնել՝ սեւ տախտակին օգտակարութիւնը յայտնելու համար: Նախ, դու եկուր, Վահան:

(Աւելորդ կը համարինք շարունակել: Ուսուցիչը հետ գնեալէ մէկ քանի աշակերտներու սեւ տախտակին վրայ կազմել կուտայ երկու երեք նախադասութիւններ եւս վերջին խօսակցութեանց խմատին համաձայն, եւ, միշտ տղայոց գործակցութեամբ, թելադրութիւններով, պէտք եղած ուղղադրական ու շարադրական բարեփոխումները կ'ընէ, տալով միանգամայն տեղին յարմար կարեւոր բացատրութիւնները: Յետոյ, անգամ մ'ալ ամրոյժը մտադրութեամբ կարգացուելէ յետոյ, տախտակին վրայէն ամէն բան կը սրբուի, եւ Ուսուցիչը տուն կուտայ հարցարան մը կամ ծրագիր մը, շարադրութեան գլխաւոր կէտերը ցուցնող, որուն համեմատ աշակերտք յարմար կատարել առանձնակի իրենց գրաւոր աշխատութիւնը: Ուսուցիչը ժողովելով տղոց շարադրութիւնները յետ քննութեան, անոնց սրբագրութիւնը կ'ընէ դասարանին մէջ, զարձեալ հաւաքական աշխատութեան կերպով մը:)

Ծրագիր. — Սեւ տախտակը ո՞ր կը գտնուի. — Ի՞նչ ձեւ ունի. — Ո՞վ շինած է զայն. — Ի՞նչ բանէ. — Ի՞նչ է իր օգտակարութիւնը. — Անոր վրայ ի՞նչ կ'ընէ Ուսուցիչը. — Դո՞ւք. — Ուրեմն ի՞նչպիսի առարկայ մէջ ան դասարանին համար:

Ընդլայնում. — Սեւ տախտակը դասարանին պատին վրայ կախուած է: Անիկա ուղղանկիւն քառանկիւն ձեւ մ'ունի: Ատաղձագործը շինած է զայն յղիւստ տախտակներէ, եւ յետոյ ներկած է զայն: Անոր վրայ գրուածը ամէնքս ալ կը տեսնենք: Ուսուցիչը անոր վրայ կը բացատրէ մեր դասերը: Հոն կը գրէ բառեր եւ թուանշաններ, կը գծէ ձեւեր ու պատկերներ: Մեզի ալ անոր վրայ գիր եւ թիւ գրել ու գծադրել կուտայ, երբ մեզի

դաս կը հարցնէ: Սեւ տախտակը դասարանին ամենէն պիտանի առարկայներէն մին է:

(Ահաւասիկ, մի եւ նոյն դասընթացքին համար, մի քանի ուրիշ ծրագրեր իրենց ընդլայնումներովն, զորս փոխ կ'առնունք Ֆռիշի Գալ. Բերականութեան Առաջին աստիճանէն):

ԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ

Ի՞նչպէս կը կոչուին դպրոց գացող տղանք. — Ինչո՞ւ համար դպրոցական դպրոց կ'երթան. — Կրթութիւն համար ի՞նչ սովորելու է. — Ո՞վ կը սովորեցնէ այդ բաները. — Ուսուցիչը բաւական կը համարի՞ միայն կրթելը. — Ուրիշ ի՞նչ կ'ընէ. — Ի՞նչ է դաստիարակելը:

Ընդլայնում. — Այն տղաք որ դպրոց կը յաճախեն՝ կը կոչուին դպրոցական: Դպրոցականները դպրոց կ'երթան կրթուելու համար: Կրթուելու համար պէտք է սովորիլ կարգալ, գրել եւ հաշուել: Ուսուցիչն է որ անոնց կը սովորեցնէ այն բաները: Ուսուցիչը միայն չի կրթել, անիկա կը դաստիարակէ ալ: Դաստիարակելն է աշակերտները բարի, հնազանդ, քաղաքավար եւ աշխատասէր ընել:

ԳԻՐԲԸ

Ծրագիր. — Գիրք ի՞նչ է կը բաղկանայ. — Թերթեում վրայ ի՞նչ կայ. — Գիրքով ի՞նչ կը շինուի. — Մէկ տղի մէջ բանի՞ բան կ'ըլլայ. — Ամէն մէկ երեւի վրայ բանի՞ տղ կը հաշուեն. — Թղթակազմ գիրք մ'ի՞նչ է. — Ե՞րբ բաւական կ'ըլլայ. — Այդ տեսակ գրքի օրինակ մը տուր. — Ե՞րբ կ'աւելանայ կ'ըսուի. — Ո՞վ կը կազմէ գրքեր. — Ո՞վ կը տպէ գրքեր. — Գրքեր ի՞նչպէս պահելու է:

Ընդլայնում. — Գիրքը կը բաղկանայ իրարու կարուած թղթի թերթերէ: Թերթերուն վրայ կան տպուած գիրքեր: Գիրքերը բառեր կը կազմեն: Մէկ տղի վրայ կան մէկէ աւելի բառեր: Ամէն մէկ էջի վրայ կան քիչ կամ շատ տողեր: Երբ գիրք մը միայն թղթէ կողք մ'ունի, կը կոչուի թղթակազմ: Թէ որ կողքը խաւաքարտէ շինուած ըլլայ, կը կոչուի քարտակազմ: Մեր Մայրենի լեզուի դասագիրքը քարտակազմ է: Երբ գրքի մը կռնակը կաշի է, գիրքը կաշեկազմ կ'ըսուի: Կազմարարն է որ գրքերը կը կազմէ: Տպա-

գրիչը կը տպէ գրքերը: Պէտք է որ
գրքերը մաքուր պահուին:

ՏՈՒՆԸ

Ծրագիր. — Տունը ի՞նչ է: — Տանը երեսին
կողմը ի՞նչ կայ: — Գետնայարկը ու՞ր կը գտնուի
փողոցին նայելով: — Ու՞ր է առաջին յարկը: — Ո՞ր
տեղերը կան երկու կամ անկի յարկով տներ: —
Մասանք ու՞ր է: — Մասանքն մէջ ի՞նչ կը պա-
հեն: — Մասանք ու՞ր կից լոյս կ'առնէ: — Տանը
ո՞ր մասին մէջ կը գտնուի ցորենի շեմամբ: —
Ու՞ր կից լոյս կ'առնէ: — Տաներուն քանի՞ն ինչո՞վ
ծածկուած է:

Ընդլայնում. — Տունը մարդոց բնակա-
րանն է: Տանը երեսին կողմը կան դու-
ռը եւ պատուհանները: Գետնայարկը փո-
ղոցին հետ հաւասար է: Մեծ քաղաքնե-
րուն մէջ շատ տուններ երկու եւ մինչեւ
իսկ երեք յարկ ունին: Մասանք տանը
տակն է: Հոն կը պահուի գինին տակառ-
ներու մէջ: Հոն կը պահեն նոյնպէս պտուղ
եւ ընդեղէն: Մասանք փոքրիկ լոսա-
մուտներէ լոյս կ'առնէ: Գորենի շեմա-
րանը տանիքին տակն է. անիկա երդիքէն
լոյս կ'առնէ: Տուներուն տանիքը ծած-
կուած է կղմինտրով:

ՑՈՐԵՆԸ ԵՒ ՀԱՅԸ

Ծրագիր. — Տարուան ո՞ր եղանակին մեակը կը
ցանէ ցորենը: — Ի՞նչ բան է որ գետնէն դուրս կը
հասնէ սկար տունի մը որ յետոյ ուժեղ ցորեն մը կ'ը-
լայ: — Ցորենին վերի մասին վրայ ի՞նչ կը կազ-
մուի: Ի՞նչ կը պարունակէ հասկը: — Ագորեպանը
ի՞նչ բանի կը վերածէ հնձուած ցորենը: — Հացա-
գործն ինչո՞վ կը քրչէ ալիւրը եւ ի՞նչ կ'ընէ զայն:
— Ու՞ր կը դնեն խմորը: Լաւ մը քրչէ ու կտոր կտոր
բաժնելէ յետոյ: — Տափաթեղէն խմոր ի՞նչ կ'ըլլայ:
Մեղմնեղեան մէջ ի՞նչ պատճառ ունի հացը:

Ընդլայնում. — Մշակը, երկիրը հեր-
կելէ եւ աղբելէ յետոյ, կը ցանէ ցո-
րենը: Գետնին խոնաւութիւնը եւ օդին
տաքութիւնը հողէն դուրս կը հանեն
տկար տունի մը, որ ետքէն ուժեղ ցո-
ղուն մը կ'ըլլայ: Ցորենին վերի մասին
վրայ կը կազմուի հասկ մը, որ ցորենի
հատիկներ կը պարունակէ: Երբ ցորենը
հնձուի, ագորեպանը զայն ալիւրի կը
վերածէ: Հացագործը ալիւրը կը թրջէ
գաղջ ջուրով եւ խմոր կ'ընէ զայն: Խմո-

րը լաւ մը թրեղէ եւ կտոր կտոր բաժնե-
լէ յետոյ՝ կը դնեն փուռին մէջ: Տաքու-
թենէն խմորը կ'եփի եւ հաց կ'ըլլայ: Բո-
լոր սնունդներէն, հացը ամենէն առող-
ջարարը եւ կենաց ամենէն կարեւորն է:

Ռ. Յ. Պ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Ֆրէզպէլեան Նուիրաց ու Պարսպամանց
վրայ

ԳՈՒՆԴ, ԽՈՐԱՆԱՐԴ, ԳԼԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՆՈՒԷՐ

ԵՐԿՐՈՐԴ ՇԱՐՔ ՎԱՐԺՈՒԹԵԱՆՅ

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԵՆ

Երես խորանարդի

Երկրորդ նուէրով կատարուելիք դա-
տուց առաջին շարքը կը վերջացնենք հոս:
Երբ գաւազանիկներու եւ ծալուածքի մի-
ջոցաւ, տղայք զիծի, անկեան, քառա-
կուսւոյ, եւն. վրայ ծանօթութիւն ստա-
նան, այն ատեն հարկ պիտի ըլլայ դա-
տուց նոր շարք մը սկսիլ, ուր այս ծանօ-
թութիւններն ի կիր պիտի առնուին հաս-
տատուն մարմնոց ուսման: Սակայն կա-
րեւոր է որ այս երկրորդ շարքն՝ ուր
պիտի աւարտի խորանարդի ձեւոյն վեր-
լուծութիւնն, երկրորդ նուէրին բոլոր վար-
ժութիւններէն առաջ աւանդուի, որոնց
ամենքն ալ հիմնուած են խորանարդ ձե-
ւոյն յատկութեանց վրայ:

Իւր կախման լարէն մերկացած խորա-
նարդը, տուփէն հանուած ու սեղանին
վրայ դրուած է:

«Խորանարդը քանի՞ երես ունի: Այս
երեսներէն մին քննենք: — Ի՞նչ է այս
երեսի ձեւը: — Քառակուսի մը: — Այս
քառակուսին մակերեւոյթը ցոյց տուէ՞ք:
ցուցուցէ՞ք անոր շրջագիծը: — Ի՞նչ է որ
կը կազմէ այս քառակուսի երեսին շրջա-
գիծը:»

Տղայք պիտի պատասխանեն « եղբւր կամ անկիւնագիծ » խորանարդին : Յիշեցնելով թէ մակերեւոյթի մը շրջագիծերը գիծեր են (Տես, ծալումք, Գ. Վարժ.), նշմարել տուէք գիծեր խորանարդին անկիւնագիծերուն մէջ : Յայտն կը կայանայ դասին գլխաւոր մասը :

« Այս գիծերն ուղիւն են թէ կոր : Քառակուսին քանի՞ կողմ ունի : Խորանարդին երեսին կողմերը ցոյց տուէք : — Այս 4 գիծերն հաւասար են իրարու : Այս քառակուսին անկիւնները ցոյց տուէք : Քանի՞ անկիւն կայ : Այս 4 անկիւններն հաւասար են : Սո՞ւր են : Բո՞ւթ են : Ուղիւ անկիւններ են : — Ճիշդ է : Պիտի ստուգենք հիմա : »

Յիշեցնելով որ աղիւսակի գիծերէն կազմուած անկիւններն ուղիւ անկիւններ են, խորանարդին երեսին անկիւններէն մին մակադրել տուէք սեղանին աղիւսակին անկեանց միոյն վրայ :

« Սեղանին վրայ դռուած ուղիւ անկեան ճիշդ ու ճիշդ կը յարմարի՞ այն : — Այո՛ : — Ուրեմն աս ալ ճիշդ ուղիւ անկիւն մըն է : »

« Հիմա, յաջորդաբար դիտեցէք, ուշադրութեամբ, խորանարդին երեսները : Ամենքն ալ քառակուսի՞ են : Ամենքն ալ հաւասար կ'երեւի՞ն ձեզ : »

Տակաւին կարելի ստուգութիւնը չունինք. կը բաւականանանք նայուածքի վիայութեամբ :

« Այո՛, տղաքս, անոնց ամենքն ալ կատարելապէս հաւասար են իրարու : Եւ որովհետեւ խորանարդն ունի . . . — Քանի՞ երես : — Վեց : — Պիտի ըսենք ուրեմն : »

« Խորանարդն ունի վեց երեսներ, որոնք վեց հաւասար քառակուսիներ են : »

Այս դասը շատ կարեւոր է. սակայն ըստ որում քիչ մը վերացեալ է եւ կը պահանջէ մեծ ուշադրութիւն, պէտք չէ որ երկար տեւէ : Լաւագոյն է սոյն վարժութիւնը կրկնել, ուրիշ առթիւ, քան թէ յոգնեցնել միտքը, ջլատել հետաքրքրութիւնը : Կարելի է նաեւ դասն երկու մասի բաժնել, երեսաց միոյն ուսումնա-

սիրութենէն յետոյ : Զրօսեցուցիչ վարժութեամբ մը եւ երգով մը վերջացուցէք :

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐՃՈՒԹԻՒՆ

ԱՆԿԻՆԱԳԻԾԲ ԽՈՐԱՆԱՐԴԻ

Այս երկրորդ դասն առաջնոյն գրեթէ շարունակութիւնն է : Գիծերը, անկիւնագիծերը պիտի լինին առ վայր մի առարկայ մեր դիտողութեան : Կարեւոր բանն է դրոշմել մանկան մտքին մէջ թէ հաստատուն մարմինն անկիւնագիծն (մակերեւոյթներու կտրուածքն) է ճշմարիտ գիծը, որու նմանութիւններն են միայն գրատախտակին կամ թղթոյ վրայ քաշուած գիծը, ձկտուած լարը, գաւազանիկը, եւն :

« Գոյց տուէք խորանարդին անկիւնագիծերը : Խորանարդը քանի՞ անկիւնագիծ ունի : Այս ամէն անկիւնագիծերն հաւասար են : Դիտեցէք : Անոնց ամենքն ալ հաւասար են իրարու, որովհետեւ ամենքն ալ հաւասար քառակուսիներու կողմեր կը կազմեն : »

Վարժուհին ցոյց տալով երեսաց միոյն հակադիր երկու անկիւնագիծերը, պիտի ջանայ ճանչցունել թէ ասոնք երկու զուգահեռական գիծեր են :

« Իսկ միւս երկուքը : Անոնք ալ իրարու հետ զուգահեռական են, ճիշդ՝ գաւազանիկներով կազմուած քառակուսիին կողմերուն պէս, որովհետեւ խորանարդին երեսն ալ քառակուսի մըն է : »

Պէտք է զիտել տալ թէ երկու անկիւնագիծեր որ կուգան կը միանան անկեան մը, երկու ուղղահայեաց գիծեր են, որովհետեւ քառակուսիին ուղիւ անկիւնը կը կազմեն :

Խորանարդը տուին վրայ դրուած ըլլալով միշտ, դիտել տուէք թէ անկիւնագիծերուն շրջը ուղղահայեաց ուղղութեան մէջ գիծեր են, յիշեցուցէք կախուած գնդակի լարը, եւն :

« Հիմա ցոյց տուէք ինծի անկիւնագիծ մը որ հորիզոնական ուղղութեան մէջ ուղիւ գիծ մը ըլլայ : Քանի՞ հատ հորիզո-

նական անկիւնագիծեր կը տեսնէք:»

Տղայք պիտի ցուցունեն անշուշտ վրայի երեսին չորս անկիւնագիծերը: Այն ատեն ի միտ առնուլ տուէք թէ խորանարդին ներքեւի երեսին չորս անկիւնագիծերն ալ հորիզոնական են: Ընդ ամենը, ութը անկիւնագիծեր կան այս ուղղութեան մէջ: Եւ որպէս զի տղան ըմբռնէ թէ հորիզոնական եւ ուղղաձիգ ստորագիծը վերաբերութիւն չունին հաստատուն մարմնոյն բնութեանը հետ, այլ անոր որոշ մէկ գիւղիկին հետ, զարձուցէք խորանարդն իր անկիւնագիծից միոյն վրայ, զետեղելու համար զայն իր ուրիշ մէկ երեսին վրայ, որ կից ըլլայ այն երեսին, որուն վրայ կը կենար առաջ: Դիտել տուէք թէ այն չորս անկիւնագիծերն որոնք ուղղաձիգ էին, հորիզոնական եղած են, մինչդեռ միւս չորս անկիւնագիծերն որոնք հորիզոնական էին, ուղղաձիգ եղած են: Կարեւոր չէ որոշել տալ մանրամասն թէ ո՞ր կողմին անկիւնագիծերը կրեցին այս փոփոխութիւնը: Բաւական է որ աշակերտը զիտած ըլլայ գիրքերու փոփոխութիւնն անկիւնագիծերէն միոյն կամ երկուքին վրայ: Այն ատեն կ'աւելցունէք:

«Արդ, այս անկիւնագիծերն, որոնցմէ մէկ քանին ուղղաձիգ դիրքի մէջ տեսաք, եւ մէկ քանին՝ հորիզոնական դիրքի մէջ, անոնց ամենքն ալ մէկ անգամէն կրնա՞ք չեղ գիրքի փոխել:»

Տղայք պիտի փնտռեն դիրք մը, որ բոլոր անկիւնագիծերն ալ չեղ գիրքի մը վերածէ: Խորանարդը դնելով իր անկիւնագիծերէն միոյն վրայ, անոնցմէ ութը շեղ կ'ըլլան, բայց չորսն կը մնան հորիզոնական:

«Որպէս զի անոնց ամենքն ալ շեղ ըլլան միանգամայն, ես միջոցը գտայ, տեսէք:»

Տղայք վարժուհւոյն ըրածը պիտի կըրկեն, բռնելով անոր պէս, անկեան մը վրայ դրուած իրենց մատին ճշմամբ, խորանարդն որ կը յենու հակառակ անկիւնէն սեղանին վրայ:

Իբր վերջարան սոյն դասին, կրկնել

տուէք շարժման վարժութիւններէն մի քանին, սթափեցնելու համար մանկան ուղադրութիւնն, ուրկէ փոքր ճիգ մը պահանջեցինք այժմ:

Աւարտի երգ:

ԵՐՐՈՐԴ ՎԱՐՃՈՒԹԻՒՆ

ԲՈՂՈՐԱԿ

Տղայն որ ուղիղ գիծեր տեսաւ խորանարդին անկիւնագիծերուն մէջ, դժուարութիւն չպիտի կրէ կոր գիծ մը տեսնելու գլանին խարխալին շրջանակին մէջ:

Դլանը տուփէն դուրս հանուած է: Սորվեցուցէք թէ կըսկոր շրջագիծով մը սահմանուած մակարդակ մակերեւոյթ մը կը կոչուի բոլորակ մը: Իսկ այն կոր գիծն որ կը կազմէ բոլորակին շրջագիծը՝ կը կոչուի շրջանակ:

Դիտել տուէք, աչքի դատողութեամբ, թէ գլանի մը երկու մակարդակ երեսներն հաւասար բոլորակներ են:

Մանթութիւնն ընդհանրացնելու համար, «գտնել» տուէք մի քանի սովորական առարկայներ որ քիչ կամ չատ բոլորակի մը ձեւն ունենան (զոր օրինակ, դրամ մը, եւն. եւն.), եւ խնամով զանազանել տուէք բոլորակն՝ շրջանակէն: Բոլորակը մակարդակ մակերեւոյթ մըն է, իսկ շրջանակը՝ զբոլորակն եզերող կոր գիծն է:

«Այս ամբողջը կ'ըսուի բոլորակ: (Մատերիդ մակերեւոյթին վրայ կը պտըտցունէք): Շրջանակը՝ սա պտըտող կոր գիծն է: (Մատերիդ բոլորակին շուրջը կը դարձունէք):»

«Դիտեցէք գլանին մակարդակ երեսներէն մին, այն երեսն որ ճարմանդ մը ունի: Այս ճարմանդն ո՞ւր զետեղուած է: — Բոլորակին մէջ տեղը: — Բոլորակի մը մէջ տեղը կը կոչուի կեդրոն: Պիտի ըսենք ուրեմն. ճարմանդը բոլորակին կեդրոնն հաստատուած է: Դարձուցէք այժմ ձեր գլանը, եւ մատով ցոյց տուէք միւս բոլորակին կեդրոնը:»

Ընդհանրացուցէք տակաւին ծանօթութիւնն քանի մը հարցմանց միջոցաւ:

«Ձեր մէջէն ո՞վ պիտի յիշէ ինձ արդեօք բոլորակի մը ձեւն ունեցող առարկայներ: — Կլոր սեղանին երեսը, անիւ մը, եւն: — Անիւին կեդրոնն ո՞ր է: — Անիւին ո՞ր մասն է այն որ գետնին կը դպչի, երբ անիւը կը դառնայ:»

Ձանացէք զուարթ ընծայել այս վարժութիւններն: — Փակման երգ:

Երկրորդ. ցուէրին երրեակ հաստատուն մարմինները պիտի ծառայեն յետոյ երկրաչափական ձեւոց աւելի ընդարձակ ուսուցման մը:

Յ. ԷՏԻԼԵԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԻՋԻ ՀԱՄԱՐ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ԴԱՍԵՐ

Ա.

(Կրկին)

Ձեռքս ի՞նչ բռնած եմ. — Տեսարակի մը մէկ թուղթը. — Հապա ա՞յս. — Թերթ մը նամակի թուղթ. — Առաջինը պարզ թերթ մ'է. երկրորդը, որ՝ ինչպէս կը տեսնէք՝ երկու թերթերէ բաղկացած է, կրկին թերթ է: Ըսել է կրկին բառը կը նշանակէ յանի մը երկու անգամը. կրկին թերթ մը կը պարունակէ երկու անգամ մէկ թերթ. — Օրիորդ, պարզ թերթովը կրնամ կրկին թերթ շինել. — Շատ աղէկ, տղաս, հոս եկուր եւ ըրէ: (Տղան թերթը կը ծալէ երկու հաւասար մասերով). Շատ աղէկ, կրկին բառին իմաստը պէտք եղածին պէս հասկցեր ես. — Գառնիկը խնձոր մ'ունի, եւ որովհետեւ խելօք կեցած է, մայրը կ'ուզէ կրկնել անոր խնձորը, ի՞նչ պիտի ընէ. — Խնձոր մ'ալ պէտք է տայ, Օրիորդ. — Դուք Յ. բարենիչ ունիք. եթէ խելօք կենաք, երեք օրէն Յ. բարենիչ ալ պիտի ունենաք, այն ատեն ձեր ունեցած Յ. բարենիչներն ի՞նչ պիտի ըլլան. — Պիտի կրնուին. — Եւ քանի՞ հատ պիտի ըլլան. — 6 հատ: Այո՞. ուրեմն, բանի մը կրկինն ունենալու համար, թիւ մը կրկնելու համար,

պէտք է այն բանին վրայ նոյն բանէն հատ մ'ալ աւելցնել, այն թիւին վրայ աւելցնել նոյն թիւը: Ըսէք տեսնեմ հիմայ, ի՞նչ է 1 տանձին, 2 խնձորին, 3 ընկոյզին, 4 հաւկիթին, 5 գրիչին... կրկինը:

Բ.

(Կէս)

Կրկին բառին հակառակն է կիւս. Վստահ եմ թէ այս բառը կը հասկնաք: Մաննիկ, եթէ մայրիկդ քեզ ըսէր. «Առ այս խնձորը եւ կիւսը եղբորդ տուր», ի՞նչ պիտի ընէիր. — Օրիորդ, խնձորը երկու կտոր պիտի ընէիր, եւ մէկ կտորը եղբորս պիտի տայիր. — Ո՞ր կտորը պիտի տայիր. — Ո՞րը որ ուզէր. — Շատ աղէկ. կը տեսնեմ թէ քաղաքավար օրիորդ մ'ես դու եւ եղբայրդ կը սիրես. այսպէս պէտք է ըլլալ: Ըսել է խնձորը մէջտեղէն պիտի կտրէիր այնպէս որ երկու հաւասար կտոր ըլլար: Խնձորի մը կէսը կամ կէս խնձոր մը ամբողջ խնձորէն 2 անգամ նուազ է ուրեմն. նոյնպէս, թիւի մը կէսը այն թիւէն երկու անգամ քիչ է: Այսպէս, տեսէք, գրասեղանիս վրայ 6 քարէ գնդակ կը դնեմ. կէսն առնելու համար, երկու հաւասար մասերու բաժնելու է: Օննիկ, եկուր կիսէ տեսնեմ. (Թողուլ որ աղան ուզածին պէս ընէ. ի հարկին ուրիշ սանիկ մը կանչել օգնութեան). — Իսկ դու, Արաքսի, եթէ 7 ընկոյզ ունենայիր եւ զանոնք եղբորդ հետ բաժնել ուզէիր, ի՞նչ պիտի ընէիր, եւն:

Դիտ. — Նոյն մէթոտով հասկցնել եռապատիկը, երրորդ մասը. քառապատիկը, չորրորդ մասը. — Ամբողջ աչակերտները ոգեւորեալ, զուարթ, արթուն պահել. թուարանութեան դասէ մը շատ լաւ կրնայ հանուել բարոյական դաս մը, եւն:

Յ. Բ. ՀԻՆԴԼԵԱՆ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

(Ընթանցիկ երկրորդական վարժարանի)

Ն Ա Ս Ա Կ Ե Ն Դ Ա Ն Ք

Բ. Դաս. — Զրահմաններ⁽¹⁾

Կենդանական եւ բուսական նիւթեր պարունակող ջուրերու մէջ կ'ապրին այս մանրադիտական կենդանիները: Առաջները այս դասին մէջ կը գնէին այն ամէն անասնիկները զորս մանրադէտը կը ցուցնէր մնայուն ջուրերուն մէջ. բայց անկէջ ի վեր տեսնուեցաւ որ իրրեւ ջրածնի դասուողներէն ոմանք ուրիշ դասերու կը պատկանին, ոմանք ալ մինչեւ իսկ կենդանի չեն, այլ բոյս:

Զրահմաններու մարմինն ամբողջութեամբ է նուրբ եւ անկազմ թաղանթի մը մէջ որ ւնորթիկ⁽²⁾ կը կոչուի. կան այնպիսիներ ալ որոց մարմինը փակուած է առաւել կամ նուազ կարծր խեցիկի մը մէջ. շատ անգամ այս վերջինը մարմնոյն փակած չ'ըլլար եւ կը ձեւացնէ պտեան մը, որ կը պաշտպանէ կենդանին: Զրահմանները երբեմն տեղ մը հաստատուած կ'ըլլան ուղղակի կամ ռանկիկներով⁽³⁾ որոնց առանցքին երկայնութեամբ կայ կծկելի թել մը. սակայն այդ մի եւ նոյն ձեւերն ազատ ալ կը չրջին ժամանակ ժամանակ:

Զրահմաններն ունին թրթռուն թարթիչներ որոնք ամբողջ մարմնոյն վրայ տարածուած կ'ըլլան կամ անոր մէկ մասին վրայ կ'ամբողջունին, այդ թարթիչները մորթին արտադրութիւնները չեն, այլ ներքին նախանիւթային գոյացութենէն ձեւացած են եւ մորթային խաւէն անցնելով դուրս կ'ենեն. շատ անգամ անոնցմէ ոմանք, գլխաւորաբար բերնին չուրջը գտնուողները, աւելի զարգացած երկայն կ'ըլլան — այն ատեն պատշաճօրէն անունը կ'առնեն — եւ ջուրին մէջ իրենց չարժանաց յառաջ բերած յորձանքներովը բերնին մէջ կը քաշեն անդական մասնիկները: Յառաջանալու գործինքը ալ

ունին կեռի նման եւ կամ նուրբ ու հաստատուն կցուածներ⁽⁴⁾ որոնք ստունլու կը ծառայեն. վերջապէս ոմանք ալ մտրակիկներ ունին կծկելի. ուրիշներ ալ մշտրակիկի նման նուրբ եւ երկայն թելեր ունին, բայց որոց պաշտօնը բոլորովին կը տարբերի, որովհետեւ իրրեւ ծծոց⁽⁵⁾ անման կը ծառայեն:

Հազուադէպ է որ անուր կատարուի պարզ ներանցմանը⁽⁶⁾. սովորաբար սննդական նիւթերը բերանէ մը կը մտնեն մարմնոյն մէջ ուր առժամանակեայ խոռոչներ կը բանան եւ հոն կը մարսուին. չմարսուած մասերուն արտաքսման համար ալ սրբանական բացուածքներ դիտուած են, բայց աղէկան խողովակ բնաւ չէ տեսնուած:

Մորթային արտաքին խաւն ունի ինչ ինչ զանազանումներ որոց վրայ կ'արժէ խօսիլ: Անոր վրայ կը տեսնուին դնդերային բնութեամբ մասնիկներ⁽⁷⁾ խորշումներ որոնք Զրահմաններէն ոմանց մէջ շատ զարգացած են եւ զօրաւոր կծկումներու ընդունակ: Շատ անգամ ալ դիտուած են գաւազանիկի նման բաներ որոնք ինչ ինչ գրգռմանց ազդեցութեամբ կ'արձակեն բլուրեղեայ ասեղի նման կարծր թելեր. այս վերջինք խայթող են եւ պաշտպանողական գործինքը ըլլալ կը թուին:

Իրենց մարմնոյն մէջ ունին կծկելի փառնիշտիկ անուանեալ առանց մասնաւոր մաշկի խոռոչ մը եւ ասոր հազորդակից եւ խողովակաձեւ ուրիշ խոռոչներ. քանի ասոնք կծկուին, կծկելի փամփոշտիկը կ'ընդլայնի եւ փոխադարձաբար. կը կարծուի թէ արեան շրջանի ծառայող կազմած մը կը յօրինեն այդ փոքրիկ գործարանները:

Զրահմանները կը բազմանան երկու եղանակաւ՝ անսեռ⁽⁸⁾ եւ սեռաւոր⁽⁹⁾ սեռութեամբ⁽¹⁰⁾: Առաջին պարագային մէջ նոր անհատներ յառաջ կուգան մայր անհատին հետնանումով⁽¹¹⁾. ծնածներն երբեմն

(1) Infusoire (2) Cuticule (3) Pédoncule

(4) Appendice (5) Suçoir (6) Endosmose (7) Strie (8) Asexuelle (9) Sexuelle (10) Reproduction (11) Scission

միացած կը մնան ծնողին եւ անոր հետ կը կազմեն գաղթ ակաճութիւններ: Հերձատումը՝ կոտորակումը սովորաբար երկայնութեան կ'ըլլայ եւ քիչ անգամ լայնքէն: Երբեմն աւելի կը կնճռոտի կոտորակումը: փոխանակ ուղղակի կոտորակում եւ բաժնուելու՝ կենդանւոյն մարմինը կեղեւով մը կը ծածկուի, եւ այդ խցիկին մէջ տեղի կ'ունենայ կոտորակումը եւ այսպէս յառաջ եկած ձագերը կեղեւին պատուելովը դուրս կ'ելնեն եւ կ'ապրին առանձինն:

Սեռաւոր սերում ալ ունին ըսինք. երկու կամ աւելի անհատներ իրարու կը մօտենան իրարու մէջ կ'անցնին, կը միանան եւ կը մնան այնպէս. իրենց մարմնոյն մէջ գտնուած կուտերն ալ մի եւ նոյն բանը կ'ընեն, կը ձուլուին, եւ մի եղած կուտը կը կոտորակուի ներսէն եւ ձագուկները մասնաւոր խողովակի մը միջոցաւ դուրս կը հանուին:

Ջրածններու դասակարգումը դեռ չափ տարտամ է: Գլաբրաւէտ եւ Լաքման որոնք իրենց կեանքը այս դասուն կենդանիներն ուսումնասիրելով անցուցին, կը բաժնեն զանոնք այսպէս.

Մաւկաւուրներ⁽¹²⁾. — Թրթռուն թարթիչներ չունին, այլ մորակիկներ միայն:

Թարքչաւսաւուրներ⁽¹³⁾. — Բաց ի մէկ կամ աւելի մորակիկներէ ունին նաեւ թարթիչներ:

Ծոռներ⁽¹⁴⁾. — Չափահասութեան մէջ թարթիչներ չունին, այլ ծծոցներ:

Թարքչաւուրներ⁽¹⁵⁾. — Թարթիչներ կամ պատատուկներ ունին մինչեւ իսկ չափահասութեան մէջ:

Ա. Կարգ. — Մաւկաւուրներ

Այս կարգին մէջ գտնուած փոքրիկ էակներուն յատկանիշն է, ինչպէս արդէն անունէն ալ կը հասկցուի, ունենալ մորակիկներ՝ մէկ կամ երկու. Թրթռուն թարթիչներ չունին բնաւ: Ջրածններու ամենէն պարզերն են եւ անոնցմէ՝ որոց

բնութեանը վրայ դեռ չափ վարանում կայ. բնապատումներէն ոմանք բոյս նկատած են զանոնք եւ ոմանք՝ կենդանի: Սակայն կծկելի փամփուշտներու եւ երբեմն մարմնոյն մէջ կերակրոյ մուծման ծառայող բերանական բացուածքի մը գոյութիւնն անոնց կենդանութեանը կը վկայեն:

Այս կարգը մէկէ աւելի ընտանիքներ ունի.

Մեմակսններ⁽¹⁶⁾. — Միարջիջ էակներ են չափ սարգ, գնդաձեւ կամ ձուաձեւ մարմին ունին, չափ անգամ զուրկ արտաքին կցուածներէ: Կերակրոյ մասնիկները կը ներմուծուին բերանական անընդմարելի բացուածքէ մը՝ որուն գոյութիւնը այն ատեն միայն յայտնի կ'երեւի երբ կարմիրով ներկուի ջուրը որուն մէջ դըրուած ըլլան այդ անասնիկները: Սերունդը հերձմամբ կը կատարուի:

Այս ջրածններէն չափ կան ջուրերու մէջ եւ զոնազան սեռերու կը բաժնուին. անոնցմէ ոմանք մակարոյծ կ'ապրին մարդուն աղեաց, միզին եւն. ին մէջ:

Հոշոյններ⁽¹⁷⁾. — Ասոնք ալ գաղթականութեամբ կ'ապրին եւ սոսնձային գնդաձեւ զանգուածներ կը յօրինեն իրենց խմբմամբ. կրկին մորակիկ ունին: Բաժանմամբ կը բազմանան եւ մէն մի անհատ կրնայ այսպէս նոր գաղթականութեան մը ծնունդ աւել. սեռաւոր սերում ալ ունին. արունները կտրատուելով յառաջ կը բերեն զաւազանիկի ձեւով սերմնական մարմնիկներ, նոյն եղանակաւ յառաջ կուգան նաեւ էգ տարրով մարմնիկներ որոնք առաջնոց հետ ձուլուելով կը բեղմնաւորին անոնցմէ, այն ժամանակ մաշկով մը կը ծածկուին եւ յետոյ բաժանմամբ ծնունդ կուտան անսեռ Հոշոյններու:

Հողովուկներու ընտանիքին մէջ յիշենք Հոշոյններու սեռը:

Մաւնակերպներ⁽¹⁸⁾. — Իրենց պատեաններով իրարու կը փակչին եւ ծառաձեւ գաղթականութիւններ կը կազմեն:

(12) Flagellés (13) Cilio-flagellés (14) Suceurs (15) Giliés,

(16) Monadiens (17) Volvociens (18) Dinobryons.

ելզղենեան(19) . — Իրարմէ անջատ կ'ապ-
րին : Ասոնց մէջ ամենէն աւելի աչքի զար-
նոզ բանը սա է որ մարմինը կրնայ կըծ-
կուիլ, կը բազմանան Հոյոյոյնկներուն պէս :

Բ. Կարգ — Թարթխամեցականներ

Թարթխամեցականները մէկ կամ ա-
ւելի մտրակիկներ կ'ունենան . ասկից զատ
մարմնոյն վրայ լայնութեան ուղղութեամբ
յատկանշական աղօս մը կը տեսնուի որուն
մէկ եզերքին վրայ թրթռուն թարթիչներ
կան : Չափազասութեան մէջ պաշտպան-
ուած կ'ըլլան եղջերածեւ երկայնութիւն-
ներով . ձագերն այդպիսի պատեաններ
չունին եւ այդ պատճառաւ շատ տնգամ
տարբեր տեսակէ ըլլալ կարծուած են :
Այս կարգի Զրաճճիներէն եւ ոչ մին
կծկուն փամփուշտ ունի , բայց ամէնքն
ալ կ'սիկ(20) ունին : Բաժանմամբ կը բազ-
մանան եւ յաճախ ներքոյն(21) տեղի
կ'ունենայ , այսինքն կենդանին կը պահ-
ուի պահարանի մը մէջ , հոն ներսը կը
կերպարանափոխուի , կը կոտորակուի եւ
պատեանին խորտակմամբ դուրս կ'ենն
ներսը կազմուած ձագերը :

Թարթխամեցականներու կարգը մէկ
ընտանիք միայն ունի , Յուզակներու ըն-
տանիքը զոր կազմող գլխաւոր սեռերն
են Եղջերուկները(22) , Յուզակները(23) ,
Յուզաքոյները(24) , Յառաջակերոններ-
ը(25) :

Գ. Կարգ . — Ծծողներ

Այս կարգի Զրաճճիները չափազասու-
թեան մէջ թարթիչներ չունին : Կը սնա-
նին բազմաթիւ երկար եւ կծկելի թելե-
րով զորս իրենց պաշտօնին բնութեան
նայելով ծծոց են կոչած . այս գործինե-
րը ոմանց մէջ ճիւղաւորեալ կ'ըլլան :
Ծծողներու մէջ կայ միայն Կառչողնե-
րու(26) ընտանիքը . ամենքն ալ տեղ մը
հաստատուած կ'ըլլան , ուստի եւ իրենց

տնունը : Ոմանց մէջ , զոր օրինակ , Ոս-
նաքոյսին(27) եւ Կառչողին վրայ ծծոց-
ները քիչ շատ երկայն են : Ոմանք կեղեւ
կ'ունենան , ոմանք ալ ոչ (ինչպէս Ոսնա-
քոյսը) : Ծառամարմինները(28) որ այս ըն-
տանիքին կը վերաբերին ծառածեւ ճիւղ-
աւորեալ գաղթականութիւններ ունին :

Դ. Կարգ . — Թարթխաւորներ

Թարթխաւորները չափազասութեան
մէջ թարթիչներ ունին կամ ամբողջ մար-
մնոյն վրայ կամ միայն բերնին չուրջը .
պատեան ունեցողներ ալ կան՝ չունեցող-
ներ ալ . ոմանք ալ բերան չունին եւ
մակաբոյծ կ'ապրին . գորտերն անոնց մէկ
տեսակը եթէ չեն ճանչնար , գոնէ ունին
իրենց մէջ :

Թարթիչներուն չարուածքին կամ գիր-
քին եւ պատեանին գոյութեան կամ ան-
գոյութեան վրայ հիմնուելով տասն ըն-
տանիքներու կը բաժնեն այս կարգը , ո-
րոց թիւը տալն արդէն կը բաւէ լիովին :

Ա. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ԸՆԹԱՑՔ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

(ՌՕՊԷՌԴՍԵՆԻ ՄԷՔՈՏՈՎ)

ՆԲԿՈՐԴ ՄԱՍ

(ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ)

Բ Ա Ռ Ա Ջ Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Հարցմունք

Ի՞նչ է père ի սեռը (8*) :

Ինչո՞ւ կ'ըսենք d'Alexis ե ոչ de Ale-
xis (11) :

Ի՞նչ է homme ի սեռը (8) :

Ի՞նչ է menuisier ի սեռը (8,14) :

Ի՞նչ է établi ի սեռը (14) :

(27) Podophrya (28) Dendrosomas.

(*) Իւրաքանչիւր հարցմէ վերջ պրում բու-
նեաները ցոյց կուտան արդէն տնայ բացատ-
րիւններ պարունակող հաստատման :

(19) Eugléniens (20) Nucleus (21) Enkystement
(22) Ceratium (23) Peridinium (24) Dinophysis
(25) Prorocentrum (26) Acinétiens.

Ի՞նչ է œil ի սեռը (14) :

Ինչո՞ւ կ'ըսենք l'œil և ոչ le œil (11) :

Ի՞նչ է manche ի սեռը (15) :

Ինչո՞ւ manche բառին վերջը s մը աւելցուած է :

Ի՞նչ է scie ի սեռը (14) :

Ի՞նչ է rabot ի սեռը (14) :

Deuxième կուգայ deux, երկու էն (լատիներէն duo), որոյ գլխաւոր ածանցներն են՝

Deuxièmement երկրորդ (մակրայ)

Entre-deux անջրպետ : կրճիմ

Duel մենամարտ

Duplicité կրկնութիւն (երկու ըլլալը) : ինքզնիքութիւն :

Duplicata պատճէն

Double կրկին

Doublement կրկին (մակրայ)

Doubler կրկնել, եւն :

Doublure աստառ

Dédoubler երկու կարգի բաժնել : Պատասառը հանել, եւն :

Redoubler սաստկացնել նորէն աստառել

Redoublement աճումն, սաստկանալն :

44. Բացարձակ թուականներուն վերջը ième աւելցուելով կը շինուի դասական :

Père կուգայ լատիներէն pater, հայր բառէն : Գլխաւոր ածանցներն են՝

Compère կնքահայր, սանահայր

Compérage կնքահայրութիւն

Parrain կնքահայր

Parâtre (beau-père) հօրու

Parricide հայրասպան, մայրասպան, եղբայրասպան, քոյրասպան, որդեսպան :

Հայրասպանութիւն, ևն :

Paternel (paterne) հայրական

Paternellement հայրաբար

Paternité հայրութիւն

Patrie հայրենիք

Compatriote հայրենակից

Expatrier աքսորել

Expatriation աքսոր

Rapatrier իւր հայրենեաց վերադարձնել : Հաշտեցնել

Patron պաշտպան, ևն :

Patronage պաշտպանութիւն

S'impatroniser տիրանալ (տան մը, ևն, մէջ)

Patricien սպարիկ, ազնուական

Patrimoine հայրենական ժառանգութիւն : Ժառանգութիւն (փոխարեք) :

Patrimonial հայրենական

Patriarche Պատրիարք

Patriarcal սպարիարքական

Patriarcat պատրիարքութիւն

Patenôtre Հայր մեր : Աղօթք

D'Alexis փոխանակ de Alexis ի Տեառ :

Homme կուգայ լատիներէն homo մարդ բառէն : Իւր գլխաւոր ածանցներն են՝

Hommasse առնակերպ

Hommage հարկ ծառայութեան : մեծարանք

Homicide մարդասպանութիւն : Մարդասպան

Bonhomme (յոգ. bonshommes) պարզամիտ

Bonhomie պարզամտութիւն

Gentilhomme (յոգ. gentilshommes) ազնուական

Prud'homme իրագէտ

Humain մարդկային

Humaniser մարդացնել : Քաղաքակրթել, Մեղմացնել :

Humanité մարդկութիւն

Humainement մարդկօրէն

Inhumain տմարդի, անողորմ

Inhumanité տմարդութիւն

Inhumainement անմարդաբար

Surhumain գերմարդկային

Intelligent կուգայ intime, ներքին, սեռ, մեքերիմ (լատիներէն intus կամ inter, մէջ) և lire (լատիներէն legere) բառերէն : Այս վերջին բառին ընտանեաց բառերը յիշեցինք արդէն մեր առաջին դասին մէջ (Տես — Մասիս թիւ 3, էջ 67) :

Intime ի ընտանիքէն բառեր :

Intimement ի ներքուստ : Սերտիւ

Intimer ծանուցանել : Դատի կոչել

Intimité սերտ կապակցութիւն : Մտերմութիւն

Interne ներքին

Intérieur ներքին : Ներքին կողմը

Intérieurement ներքնապէս

Intestin աղիք

Intestinal աղեաց
 Intellect միտք, իմացութիւն
 Intellectuel մտաւորական
 Intellectuellement հանճարով
 Intelligible դիւրիմաց: Լսելի
 Intelligiblement դիւրիմաց, ևն. կերպով
 Inintelligible (ին*) դժուարիմաց
 Mésintelligence անմիաբանութիւն. գըժ-
 տութիւն:
 Et կուգայ լատիներէն et էն:
 Actif կուգայ agir գործել բայէն (լատի-
 ներէն agere մղել, գործել): — Գլխաւոր
 ածանցք:
 Activité գործունէութիւն
 Acte, action գործ
 Inactif անգործ
 Inaction անգործութիւն
 Inactivité անգործունէութիւն
 Agent գործիչ: Գործակատար
 Agence(**) գործակալութիւն
 Agenda յուշտետր
 Agile թեթեւանդամ
 Agilement արագութեամբ
 Agilité թեթեւութիւն
 Actuel իրական (գործփով կատարուած):
 Արդի
 Actuellement հիմայ
 Actionner 'ի դատ կոչել
 Actionnaire բաժնեկից, շահակից (action
 կը նշանակէ նաև բաժին, շահ ընկե-
 րութենէ մը)
 Acteur դերասան (թատերաբեմին վրայ
 գործող)
 Acte արարուած
 Entr'acte միջախաղ (երկու արարուա-
 ծոց մէջ հանգիստ, դադար: intermède)
 Réagir հակազդել
 Réaction հակազդեցութիւն
 Réactif հակազդակ
 Rétroactif յետսազդեցիկ
 Rétroaction յետսազդեցութիւն

Exiger պահանջել (խաշել, մղել բան մը
 մէկէ մը)
 Exigeant պահանջկոտ
 Exigence պահանջողութիւն: Պէտք
 Exigible պահանջելի
 Exigibilité պահանջելիութիւն
 Exaction անիրաւ պահանջք, կեղեքում
 Exacteur կեղեքիչ
 Exigu պզտիկ, անբաւական, դոյզն.
 (առջի գրաւած տեղէն դուրս մղուելով
 պզտիկցած)
 Exiguïté սակաւութիւն, պզտիկութիւն
 Exact ճիշդ. ճշդապահ (մինչև ծայրը
 մղուած, կատարեալ. — Ex հոս սաստ-
 կութեան իմաստ ունի, ոչ դուրս ի):
 Exactitude ճշգրտութիւն, ևն.
 Transiger միաբանիլ, իրաւախոհ ըլլալ
 (վէճ մը վախճանի մը մղել բոլոր դժ-
 ուարութեանց մէջէն):
 Transaction իրաւախոհութիւն: Գործառ-
 նութիւն:
 Rédiger խմբագրել
 Rédaction խմբագրութիւն
 Rédacteur խմբագիր
 Prodige հրաշք (ինչ որ ընդ առաջ մղի-
 ուած ըլլալով՝ ուշ կը գրաւէ)
 Prodigueux հրաշալի
 Prodigueusement հրաշալի կերպով
 Prodigueur մոխել, շռայլել (ունեցածն
 իւր առջեւ նետել)
 Prodigue շռայլ
 Prodigalement շռայլօրէն
 Agiter շարժել, յուզել (արագօրէն եւ
 կրկնակի մղել բան մը)
 Agitation յուզում, շարժում
 Agitateur ալմկիչ, խռովարար


(*) In կ'աւսասանուի քննաւորի, և եւ n գրե-
 թուն առջեւ. մոյնպէս ինչ ինչ լատիններէն եւ իսա-
 լերէն ասացուածն մէջ (in manibus, in pace, եւն.)

(**) Agencer, agencement n' եւ է խմբադրում
 չունին agir ի ընտանիքին հետ:

Բ. ԴԱՍ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

(ԳՈՐԾՆԱԿԱՆ)



Deuxième leçon

Տէօգիւմ լըսօյ

Le père d'Alexis, homme intelligent et actif, exerçait la profession
 էր բէռ ս'Ալէքսի, օմ էնդէլիժա՛ն է աֆդիժ, էկզէնսէ լա բոօՖէսիօյ
 Հայրն Ալէքսիի, մարդ մտացի և գործունեայ, կը վարէր արհեստն

de menuisier. On le voyait presque toujours à son établi, l'œil
 քը մընիւիզիէ: Օ՛ն լը վուայէ բռէսքը դուժու ա սօյ էդապի, լ'էօյլ
 կահագործի: Մարդ զայն կը տեսնէր գրեթէ միշտ յիւր գործասեղան, աչքն

animé, les manches retroussées jusqu'au coude, et la scie ou le rabot
 անիմէ, լէ մա՛յ՛ռ արդուսէ ծիւսֆ'օ բուս, է լա սի ու լը ուալօ
 վառվուռն, թեւերը սոթտած մինչև ցարմուկն, և սղոցը կամ քերիչն

à la main.

Դ'ա լա մէ՛ն:

'ի ձեռին:

Հայերէն բարգմանութիւն

Ալէքսիի հայրն, այր մտացի եւ գործունեայ, կահագործ էր: Գրեթէ միշտ
 իւր գործասեղանին գլուխն էր (կամ առջեւն էր), վառվուռն աչօք, թեղանիքն
 մինչև արմուկն հանգրիճած եւ սղոցը կամ քերիչը ձեռքը բռնած:

Փոխադարձ բարգմանութիւն

(Ըստ նախորդ օրինակին, սեւ, Մասիս քիւ 1)

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հարցումնի

Ո՞ր դասն է այս:

Qui était un homme intelligent et
 actif?

Ի՞նչ տեսակ մարդ էր Ալէքսիի հայրը:

Qui exerçait la profession de menui-
 sier?

Ի՞նչ էր իւր արհեստը:

Ի՞նչ կ'ընէր Ալէքսիի հայրը:

Պատասխանի

C'est la deuxième leçon.

Le père d'Alexis.

Un homme intelligent et actif.

Le père d'Alexis.

La profession de menuisier.

Le père d'Alexis exerçait la profes-
 sion de menuisier.

Ե՞րբ կը տեսնուէր իւր գործասեղանին
առջեւ :

Ո՞ւր կը տեսնուէր :

Ի՞նչպէս էր իւր աչքը :

Ի՞նչպէս էին իւր թեզանիքն :

Ի՞նչ ունէր գրեթէ միշտ իւր ձեռքը :

Ի՞նչ բան վառվռուն է :

Ի՞նչ բաներ հանգրիճեալ էին :

Qui voyait-on presque toujours à son
établi ?

Presque toujours.

A son établi.

Animé.

Retroussées jusqu'au coude.

La scie ou le rabot.

Son œil.

Ses manches.

Le menuisier, *կալ*, Le Père d'Alexis.

Շարադրական վարժ

Ի Հայերէն քարգմանեղի

Le père était actif.

Le garçon était intelligent.

Le père était un menuisier.

Le père était toujours à son établi.

Le garçon n'était pas actif.

Le père avait l'œil animé.

Le menuisier avait les manches re-
troussées.

Le garçon avait une scie à la main.

Le père avait un rabot à la main.

Le père voyait son garçon.

Le garçon ne voyait pas son père.

Le menuisier est à son établi.

Le menuisier n'est pas à son établi.

Le père donne une leçon à son gar-
çon.

Son œil est animé.

Combien de leçons savez-vous?

Nous savons la première leçon.

Ne savez-vous que la première?

Nous savons la deuxième leçon.

Ի Ֆրանսերէն քարգմանեղի

Հայրը գործունեայ էր :

Մանչը մտացի էր :

Հայրը կահագործ մ'էր :

Հայրը միշտ իւր գործասեղանին առջեւ էր :

Մանչը գործունեայ չէր :

Հօրը աչքը վառվռուն էր . (հայրն ունէր
աչքը վառվռուն) :

Կահագործին թեզանիքն հանգրիճեալ
էին (կահագործն ունէր թեզանիքն
հանգրիճեալ) :

Մանչը ձեռքը սղոց մ'ունէր :

Հայրը ձեռքը քերիչ մ'ունէր :

Հայրը կը տեսներ իւր մանչը :

Մանչը չէր տեսներ իւր հայրը :

Կահագործն իւր գործասեղանին գլուխն է :

Կահագործն իւր գործասեղանին գլուխը
չէ :

Հայրը դաս մը կուտայ իւր մանչուն :

Իւր աչքը վառվռուն է :

Քանի՞ դաս գիտէք :

Առաջին դասը գիտենք :

Միայն առաջինը գիտէք :

Երկրորդ դասը գիտենք :

Բ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

16. Ձերմաշափին գործածութիւնը. — Ձերմաշափը, ինչպէս տեսանք, կը ծառայէ օգին բարեխառնութիւնը ցուցնելու: Ասկէ զատ, կը ծառայէ նաեւ հասկցնելու զանազան բարեխառնութեանց աստիճանները. ի տեղեկութիւն կը դնենք հետեւեալ ցուցակը.

— 200⁰ Ամենէն մեծ ցրտութիւնը զոր մարդ կարող ըլլայ առաջ բերել:

— 40⁰ Մնդիկի սառում:

— 0⁰ Ջուրի սառում:

+ 30⁰ Կարազի հալում:

370 Մարդկային մարմնոյ բարեխառնութիւն:

68⁰,7 Մեղրամոմի հալում:

78⁰,3 Ալքոլի եռացում:

100⁰ Ջուրի եռացում:

235⁰ Անագի հալում:

335⁰ Կապարի հալում:

400⁰ Ծծումբի եռացում:

500⁰ Տաք մարմինները լուսաւոր կը դառնան, մութ կարմիր գոյն կ'առնեն:

700⁰ Կարմիր:

900⁰ Կեռասագոյն կարմիր (պղնձի հալում):

1000⁰ Պայծառ կեռասագոյն (պղնձի եւ արծաթի հալում):

1100⁰— 1200⁰ Նարնջագոյն (երկաթի, ձոյլի, ոսկիի հալում):

1300⁰ Սպիտակ (զինկի եռացում):

1400⁰ Սպիտակ (պղզպտի հալում):

1500⁰ Շլացնող սպիտակ (երկաթի հալում):

1800⁰ Շլացնող սպիտակ (բլաթինի հալում):

17. Հաղորդականութիւն. — Խորէն, ձեռքը ընկղմէ սա. ջրալիւր ամանին մէջ որ առտուընէ ի վեր սեղանին վրայ է: Ջուրը օգին բարեխառնութիւնն ունի: Ոչ, պարոն, ջուրն աւելի պաղ է: — Ձերմաշափով նայէ: — Օգին մէջ ալ, ջուրին մէջ ալ 15 աստիճան ցոյց կուտայ ջերմաշափը: — Ուրեմն սխալեցար քիչ մը առաջ. ամանին ջուրը եւ օդը միեւնոյն

բարեխառնութիւնը ունին, եւ սակայն ջուրը պաղ կուգայ: Ձեռքը ծխնելուզի մարմարիոնին վրայ դիր, յետոյ սեղանի փայտին վրայ դիր. մարմարիոնը փայտէն չափ աւելի պաղ պիտի գայ. եւ սակայն իրօք այնպէս չէ: Ի՞նչ է ասոր պատճառը:

Ասոր պատճառն այն է որ ջուրը եւ մարմարիոնը մարմինեղ աւելի սափաքիւն կ'առնեն քան օդն ու փայտը. եւ այսպէս կը պաղեցունեն ձեռքը: Տափաքեան շաւ հաղորդիչ են անոնք. այսպէս կ'ըսեն բնագէտները:

Ահա կտոր մը ածուխ որուն ծայրը վառած է: Կը բռնեմ զայն, եւ մատներս հազիւ քանի մը հարիւրորդամեդր հեռաւորութիւն ունին կրակէն. սակայն բնաւ չեն այրիր: Ինչո՞ւ համար: Որովհետեւ ածուխը շատ գեշ կերպով կը հաղորդէ սափաքիւնը: Ընդհակառակը, երկաթէ քանակիս մէկ ծայրը կրակին մէջ կը կարմրեցունեմ. քանակն ամբողջ կը տաքնայ, եւ, թէպէտեւ 30 հարիւրորդամեդր երկայնութիւն ունի, հազիւ թէ կրնամ միւս ծայրէն բռնել: Պատճառն այն է որ երկաթը շատ շաւ կը հաղորդէ սափաքիւնը եւ զայն կը բերէ մատներուս:

Հիմա ձեզի պիտի ընեմ փորձ մը որ ցոյց կուտայ թէ ի՞նչ տարբերութիւն կայ տաքութեան շաւ հաղորդիչ մարմնոյ մը եւ վառ հաղորդիչ մարմնոյ մը մէջտեղ: Խաղի հին թուղթ մը կ'առնեմ, եւ անագի քիչ մը թերթիկ կը տարածեմ վրան, այն թերթիկէն որով ծրարուած կ'ըլլան տուրմի (շօգօշա) պնակիտները: Թուղթը կը բռնեմ ալքոլի կանթեղին վրայ: Գրեթէ անմիջապէս կը տեսնէք որ՝ դեռ թուղթը չբռնկած՝ անագի թերթիկը կ'սկսի հալիլ: Անագը՝ որ շաւ հաղորդիչ է, ամբողջ սափաքիւնը կ'առնէ, եւ քուրքը որ վառ հաղորդիչ է, այնչափ սափաքիւն չի պահեր իր մեջ որ բռնկի:

Մեծաւնեքը շատ շաւ հաղորդիչ են. փարերը նուազ հաղորդիչ են, փայտը աւելի նուազ հաղորդիչ է: Բայց օդը շատ վատ հաղորդիչ մըն է: Մեր հագուստները զմեզ ցուրտի դէմ կը պահպանեն եր-

կու պատճառաւ։ Նախ որովհետեւ շինուած են բամբակի, կանեփի, քթանի մանրաթելերէ եւ կամբուրդի ու մետաքսի թելերէ, որոց ամէնն ալ տաքութեան վասն հաղորդիչ են։ Յետոյ, եւ մանաւանդ անո՛ր համար որ՝ ամէն մէկ հիւսկէնի թելերուն մէջտեղ, եւ տարբեր հագուստներու մէջտեղ, կը գտնուի օդ որ շատ կամայ կը տաքնայ, բայց որ՝ անգամ մը տաքնալէ ետք, դիւրաւ չի պաղիր, եւ այսպէս զմեզ կը պահպանէ դուրսի ցուրտին դէմ։

Ջուրը օդէն շատ աւելի լաւ հաղորդիչ ըլլալով տաքութեան, կը հասկընաք անշուշտ թէ ինչո՞ւ համար ջուրին մէջ ձեր ձեռքն աւելի պաղ զգացիք քիչ մը առաջ։ Բայց ինչո՞ւ, ձեռքդ ջուրէն հանելէ ետք, տաքցա՞ւ շուտով։ — Ո՛չ, Պարոն, կարծես թէ աւելի՛ մեղացաւ։ — Լաւ։ Պէտք է որ ձեզի բացատրեմ ատոր պատճառը։

18. Մարմնոց ջեռուցումը. — Ամէն մարդ ալ գիտէ թէ երբ մարմին մը, ուրիշ տաք մարմիններու դպչի, կը տաքնայ։ Դարբինը՝ երբ ուզէ երկաթէ ձող մը կարմրցնել, ատրաշէկ ածուխով կը շրջապատէ զայն։ Ջերմոցին վրայ կը դնենք մեր ձեռքը՝ երբ տաքնալ ուզենք։

Տաքնալու ուրիշ եղանակ մըն ալ կայ. այն է կրակին դիմացը կենալ։ Տաքութիւնը դարձեալ մեզի կը հասնի այնպէս ինչպէս որ կրակին լոյսը կը հասնի մեր աչքին։ Մարմնոց այս կերպ տաքնալուն կ'ըսեն անուագայրումով ջեռուցում։ Կրակին դիմաց ամանով դրուած ջուրը այս կերպով կը տաքնայ։

19. Ճառագայթումով ջեռուցում. — Խոհարարներն ամէնն ալ գիտեն որ նոր թիթեղէ շինուած փայլուն ամանի մը մէջ ջուրը ուշ եփի կ'ենէ։ Սիւնոյն ամանին մէջ աւելի շուտ եփի կ'ենէ ջուրը եթէ ամանը երկարատեւ գործածութեամբ սեւցած ըլլայ։

Միեւնոյն ատեն կրակին առջեւ դրէք թիթեղի երկու տախտակներ, մին շատ յղիուն, միւսը մուխէն սեւցած։ Կրակէն հաւասարաչափ հեռու դրէք զա-

նոնք. առաջինը հազիւ կը տաքնայ, միւսը կ'այրէ։

Ամբողջ օրը արեւին դէմ՝ ձգուած ձերմակ քար մը ու քարէտախտակ մը չօշափեցէք. քարէտախտակը քարէն աւելի տաք պիտի զգաք։

Ճերմակ հողերը քիչ կը տաքնան արեւուն դէմ. պաղ հողեր կ'ըսուին անոնք. բոյսերը ուշ կը հասնին, քիչ կ'աճին այս հողերուն վրայ քան թէ թուխ հողերուն վրայ, որոնք քաֆ հողեր կ'ըսուին։

Արեւին տակ սեւ հագուստով աւելի՛ կը տաքնայ մարդ քան թէ ձերմակ հագուստով։

Այս ամէն իրողութիւնք կը ցուցնեն թէ սեւ կամ մութ գոյնով մարմինները աւելի դիւրաւ կ'իւրացնեն տաքութիւնը զոր ճառագայթումէ կ'ընդունին. մինչդեռ ձերմակ կամ յղիուն մարմինները այս յատկութիւնը չունին, այլ ետ կը դարձնեն տաքութիւնը։

20. Շոգիացման քառաթիւն. — Քիչ մը առաջ ցոյց տուի ձեզի թե եռացող ջուրին մէջ՝ որչափ ասեւ որ սեւե եռացումը՝ ջերմացափը կը մնայ 100° ին վրայ. ուրիշ խօսքով՝ բարեխառնութիւնը կը մնայ հաստատ։ Սակայն միշտ տաքութիւն կ'աւելցնէինք, քանի որ կրակը միշտ կը տաքցունէր կաթսան։ Ուրեմն ի՞նչ կ'ըլլար այն տաքութիւնը։

Այդ բանը շատ դիւրին է հասկնալ. ինչ որ կրնամ ձեզի ըսել սա է թե այն քառաթիւնը գործածուեցաւ շոգի առաջ բերելու. ապացոյցն այն է որ եթէ չօգիին առաջ գալն արգիլենք, ամրափակ գոցելով կաթսան՝ ջուրին բարեխառնութիւնը 100° կ'անցնի։ Բայց լաւ միտք պահեցէք թե շոգի առաջ բերելու համար, հեղուկ մը կազի փոխելու համար, քառաթիւն պէ՛տ է։ Արդ, քիչ մը առաջ, ձեռքիդ վրայ ջուր կար. ցամքելու, կազի փոխուելու համար, պէտք ունեցաւ տաքութեան. Ուրիշ՝ կրնար առնել. Ձեռքիդ՝ որ այս կերպով պաղեցաւ։

Եւ ո՛ւր կ'երթայ այս ջրաշոգին. Օդին մէջ։ Բայց, պիտի ըսէք, օդին մէջ ջրաշոգի չի տեսնուիր. Պատճառն այն է որ բո-

լորովին թափանցիկ է. բայց թափանց-
կութիւնը արգելք մը չի կրնար ըլլալ ա-
նոր՝ օդին մէջ գտնուելուն։ Ահա չի՛ մը
զոր հիմա մառանէն բերին եւ այս սե-
ղանին վրայ դրին։ Օդին մէջ եղած շոգին
չիշին վրայ խտացաւ գոլորշիի ձեւով,
այսինքն ջրի նուրբ կալակներու ձեւով։
Ուրիշ՝ եկաւ այս ջուրը։ Ծիշին մէջէն
չեկաւ, այնպէս չէ՛։ Ո՛չ, դուրսէն, օդէն
եկաւ։ Զուր շոգիի վիճակաւ օդին մէջն
էր, եւ որովհետեւ չիշը օդէն աւելի պաղ է՝
շոգին վերստին ջուրի փոխուեցաւ, չիշին
դաշեցով՝ խտացաւ. այս ալ թորեալ ջուր
է։ Բայց սպասեցէ՛ք որ չիշը սրահին բա-
րեխառնութիւնն ստանայ, այն ատեն
գոլորշին՝ վերստին շոգիանալով՝ պիտի
անհետանայ։

22. Հալման փուլիւն. — Եռացող
ջրով լեցուն սանի մը մէջ ընկղմեցէ՛ք եր-
կաթէ սկահակ մը որ սլարունակէ մեղ-
րամով կտորուանք. այս կտորուանքնե-
րով ալ պատեցէ՛ք ջերմաչափի մը աւա-
զանը։ Մեղրամովն բարեխառնութիւնը
680° կը բարձրանայ։ Հոն կանգ կ'առնէ
որքան ատեն որ հաստատուն մեղրամով
մնայ սկահակին մէջ։ Երբ բոլորովին հե-
ղուկ դառնայ, ջերմաչափը կ'սկսի նորէն
վեր ելնել, եւ ցոյց կուտայ այսպէս թէ
մեղրամովն բառեխառնութիւնը կը բար-
ձրանայ։

Մարմնոյ մը յատեխառնութիւնը նոյն
կը մնայ ցորչափ տեւ հաշուը, բոլոր
այն տաքութիւնը զոր այդ մարմինը կը
ծծէ՝ չի ծառայէր զինքը տաքցնելու, այլ
հեղուկ վիճակի մէջ պահելու։

23. Յնդում. — Զուրն՝ առանց պաղե-
լու՝ չի կրնար ցնդիլ։ Գինին չիշով պաղե-
ցնելու համար, զայն կը դնեն ջրալիւ
դոյլի մը մէջ կամ թէ զայն կը փաթթեն
թաց լաթով մը ու կ'ենթարկեն օդի հո-
սանքի։ Յնդումը արագ արագ կը կատար-
ուի, թաց լաթը կը պաղի եւ հետեւա-
րար գինիին բարեխառնութիւնը կ'իջնէ։

Քրտնած ատեն, անխոհմութիւն է
նստիլ օդի հոսանքի մէջ։ Մորթը ծած-
կող ջուրը շուտով կը ցնդի, մարմինը կը
պաղի եւ հոսացառնութիւն առաջ կուգայ։

24. Մթնոլորտական շոգի. — Ծովը
երկրիս երեք չորրորդ մասը կը ծածկէ։
Իր մակերեւոյթէն անդադար շոգի կ'ար-
ձակուի. այդ շոգին կը տարածուի օդին
մէջ՝ առանց անոր թափանցկութիւնը
պղտորելու. չի տեսնուիր այդ շոգին։

Բայց եթէ այս խոնաւ օդը պաղի, իր
պարունակած շոգին կը փոխուի խիստ
բարակ ջուրի կալակներու որոնք կը
մթնցնեն օդը եւ առաջ կը բերեն մա-
ռախոյ։ Երբ շոգիի այս խտացումը կա-
տարուի գետնին երեսէն շատ վեր, մա-
ռախոյը մթնոլորտին մէջ առկա կը
մնայ եւ այն ատեն կը կոչուի ամպ։

25. Անձրեւ. — Եթէ ամպը պաղի, զայն
բաղկացնող կալակները կը կազմեն ա-
ւելի խոշոր կաթիլներ, որոնք գետնին
կ'իջնան անձրեւի ձեւով։ Այս ջուրին մէկ
մասը գետնին երեսէն կը վազէ, կ'եր-
թայ. մէկ ուրիշ մասն ալ կը ծծուի հո-
ղէն. բուսոց արմատները կ'առնեն այդ
ջուրէն մաս մը որ անոնց տերեւներու ե-
րեսէն կը ցնդի։ Մնացեալը կ'իջնէ հողին ի
վար մինչեւ որ հանդիպի անթափանցելի
գետնակի։ Անձրեւային այս ջուրն է որ
ջուր կը մատակարարէ մեր ջրհորներուն։

Անձրեւն ու ձիւնը՝ որ կը տեղան լե-
րանց կողերուն վրայ՝ առաջ կը բերեն
հեղեղներ. հեղեղները կը միանան իրա-
րու եւ կը կազմեն աւելի մեծ ջուրի հո-
սանքներ. այսինքն առու կամ գետ որ
ծովուն կը վերադարձնեն այն ջուրը զոր
ծովը կորսնցուցած էր շոգիի ձեւին տակ։

26. Ծոգիին ձգումը. — Ծոգիները, կա-
ղերուն պէս, ունին ձգում կամ առանձիգ
գորութիւն որով ճնշում ի գործ կը դնեն
այն ամէն մարմնոց վրայ որոց կը
դաշին։ Առնենք խողովակ մը, լեցնենք
սնդիկով, այնպէս որ խողովակին վերի
կողմը 5—10 հզրդմ. պարապ տեղ մնայ։
Այդ տեղն ալ լեցնենք եթեր որ շատ
ցնդական հեղուկ մըն է։ Խողովակը գո-
ցնեք մատով, եւ՝ զայն գլխիվար դարձը-
նելով՝ բերանը ընկղմենք սնդիկով լեցուն
ամանի մը մէջ։

Երբ մատերնիս ասդին առնենք խողո-
վակին բերնէն, սնդիկը վար կ'իջնէ. բայց,

փոխանակ 76 հրդմ. բարձրութեան վրայ կենալու ըստ սովորականին, կը կենայ 40 հրդմ. բարձրութեան վրայ. ինչո՞ւ :

Որովհետեւ սնդիկին վրայ կը գտնուի կազ մը որ զայն կը մղէ վերէն վար եւ չի թողուր որ ստանայ 76 հրդմ. բարձրութիւն զոր պիտի ստանար եթէ խողովակին վերի դին պարապ ըլլար : Զգտումն այս կազին՝ որ ուրիշ բան չէ բայց եթէ եթերին շոգին, սնդիկի սիւնակը իջեցուց 36 հրդմ. վար, այսինքն փոխանակ 76 հրդմ. բարձրութեան վրայ կենալու՝ սնդիկը կեցաւ 40 հրդմ. բարձրութեան վրայ :

Խողովակը հիմա տաքցնենք բոցով. ասոր համար քիչ մը բամբակ կը թաթխենք ալքօլի մէջ եւ զայն բռնկցնելէ ետք կը պտղացունենք խողովակին երկանքն ի վեր : Սնդիկը հետզհետէ վար կ'իջնէ. ասիկա ապացոյց է թէ տաք շոգիին ձգտումը պաշ շոգիի ձգտումէն աւելի մեծ է : Կուգայ վայրկեան մը յորում ներսի մակերեսը կը հասնի դուրսի սնդիկի մակերեսին, իբրեւ թէ խողովակը վերի կողմէն լաց եղած ըլլար եւ մթնոլորտի օդով լեցուն :

Եթէ շոգին պաղեցնենք, սնդիկը խողովակին մէջ վեր կը բարձրանայ :

27. Նոսացող օդգիին ուժը. — Ձեզի ըսի որ եթէ ջուրը տաքցունենք եւ թող չտանք որ շոգիանայ, ջուրին բարեխառնութիւնը 100 աստիճանէն կ'անցնի : Շոգիին առաջ գալն աղիւթէրու ամենեւնի պարզ միջոցն է ջուրը գոց արմանի մեջ եռացնել : Բայց պէտք է որ ամանը հաստատուն ըլլայ, եթէ ոչ չուտով կը պայթի : Վասն զի եռացող ջրի շոգին շատ ուժով է : Ահաւասիկ զինկէ խողովակ մը, որուն մէջ քիչ մը ջուր կայ. լաւ խիցով մը ամուր մը կը գոցեմ զայն եւ՝ ունելիով բռնած՝ կը մօտեցնեմ կրակին : Խողովակին ջուրը կը տաքնայ, եւ կ'սկսի եռալ. խոյն խիցը մեծ ձայնով վեր կը նետուի :

Նուայող ջուրի շոգիին այս ուժը չափած են : Ամէն մէկ քառակուսի հարիւրորդամեդր տեղի վրայ գրեթէ մէկ քիլօկրակի ուժ ունի : Ետքը պիտի տես-

նենք թէ մթնոլորտի ծանրութիւնը հաւասար է ճիշդ այս ուժին :

Եթէ՝ փոխանակ խողովակը խիցով մը գոցելու, անոր բերնին շոգէի խուփ մը որ դիմանար, ջուրին բարեխառնութիւնը պիտի սեւեռար այն ատեն, եւ շոգին աւելի ուժ պիտի առնէր, այնչափ ուժ պիտի առնէր որ վերջապէս պիտի պայթէր խողովակը :

Երբ ջուրը 122 աստիճան բարեխառնութեան հասնի, շոգիին ուժը՝ մէկ քառ. հարիւրորդամեդր տեղի վրայ՝ կ'ըլլայ 2 քիլօկրամ. 145 աստիճանին՝ այդ ուժը կ'ըլլայ 4 քիլօկրամ, եւ այսպէս շարունակ :

Այս սկզբունքին վրայ է որ հիմնուած է շոգեշարժ մեքինայից գործածութիւնը : Ջուրը կ'եռացունեն գոց խողովակներու մէջ, ուր առաջ կուգայ մեծ ուժով շոգի : Այն ատեն թող կուտան այս շոգին որ կրնայ վեր վերցունել ծանրութիւններ, կրնայ շարժել անիւներ, եւն : Գալ տարի վերստին կը խօսինք այս սքանչելի գիւտին վրայ :

28. Շոգեշարժ մեքինայ. — Առաջին շոգեշարժ մեքենան որ կարող եղաւ նաւ մը քալեցնել, շինեց 1707 ին Ֆրանսացի բժիշկ մը, Տընի Բաբէն : Այն մեքենան դեռ շատ անկատար էր : Սկովտացի մը, Ժէյմս Ուաթ, եղաւ որ հնարեց 1769 ին, արդի մեքենան :

Գաղափար մը կազմելու համար թէ մեքենայի մը մէջ ի՞նչ կերպով կը գործէ շոգին, երեւակայենք զլան մը որուն մէջ կը շարժի մխոց մը : Մխոցին ձողը կ'անցնի զլանի խուփին մէջէն, եւ մխոցը կրնայ ելնել ու իջնել առանց թողլու որ դուրսի օդը հաղորդակցի զլանին մէջ գըտնուած օդին հետ :

Մխոցը գլանը կը բաժնէ երկու խորշերու : Աւելի պարզութեան համար, սեպենք թէ ծորակաւոր չորս խողովակներ կը բացուին զլանին մէջ, երկուքը վերը, երկուքը վարը : Խողովակները կը հաղորդակցին գոց կաթսայի մը հետ որուն մէջ կ'եփեն ջուր : միւս երկուքը՝ կը բացուին օդին մէջ :

Գոյ կաթսայէ մը ելնող շոգին՝ խողովակներուն միջոցաւ փոխն ի փոխ կուգայ գլանին երկու խորշերուն մէջ: Երբ շոգին մտնէ գլանին վարի կողմը, կը ճնշէ մխոցին երեսին եւ զանի վեր կը հանէ: Երբ մխոցը իր ընթացքին ամենէն վերին կէտը ելնէ՝ շոգին կը թափանցէ գլանի վերի մասին մէջ, եւ միեւնոյն ատեն մխոցին տակը գտնուած շոգին կը հոսի մըթնոլորտին մէջ կամ թէ կը մտնէ պող ջուրի աւազանի մը մէջ ուր հեղուկ կը դառնայ. այն ատեն մխոցը՝ ճնշուելով վրան դառնուող շոգիէն՝ վար կ'իջնէ: Այնուհետեւ, շոգին վերստին կը թափանցէ գլանին վարի կողմը եւ մխոցին վրան դառնուող շոգին դուրս կ'ելնէ. մխոցը այն ատեն վեր կ'ելնէ եւ այսպէս շարունակ:

Բարեյարմար կազմածով մը մխոցին շարժումը կը փոխանցուի մեքենային զանազան մասանց:

Շոգեշարժ մեքենայ մը, երբ կարող ըլլայ մէկ երկվայրկեանի մէջ 75 քիլոկրամ բեռը 1 մեդր վեր բարձրացնել՝ կ'ըսեն թէ այդ մեքենան ունի մէկ ձիու ուժ. երբ կարող ըլլայ նոյնչափ ժամանակի մէջ 75×2 քիլոկրամ բեռը 1 մեդր բարձրացնել, կ'ըսեն թէ այն մեքենան ունի երկու ձիու ուժ, եւն:

ԱՄՓՈՓՈՒՄ. — ՏԱՔՈՒԹԻՒՆ

1. Անգայացում եւ խսացում: Երբ հաստատուն, հեղուկ կամ կազային մարմին մը տաքանալով կ'անգայացնայ:

2. Երբ զայն պղծեցնենք, կը խսանայ:

3. Կազային մարմին մը երբ հեղուկ ըլլայ՝ ծաւալը կը պզտիկցնէ. եւ ընդհանրապէս, հեղուկ մը նոյնպէս կը պղծուիկցնէ ծաւալը, երբ հաստատուն ըլլայ:

4. Զուրը բացառութիւն է. սառնոց ըլլալով ծաւալը կը մեծցնէ: Ասոր համար է որ ձմեռը կը ճաթեցնէ խողովակները, աւազանները եւ կակուղ քարերը:

5. Զերմաչափ. — Մարմնոյ մը բարեխառնութիւնը, այսինքն տաքութեան կամ ցրտութեան աստիճանը կը չափեն զերմաչափով:

6. Զերմաչափին գիւտը հիմնուած է՝

հեղուկներու այն յատկութեան վրայ որով կը խտանան անոնք երբ պաղին, եւ կ'անգայացան երբ տաքան:

7. Հալոյ սառնոցին բարեխառնութիւնը կը նշանակեն 0 ուլ:

8. Նիոլ ջուրին բարեխառնութիւնը կը նշանակեն 100 ուլ:

9. Այս երկու կէտերուն մէջ տեղի միջոցը կը բաժնեն հարիւր հաւասար մասերու:

10. Լաւ հալորդիչ մարմիններ եւ վաւ հալորդիչ մարմիններ. — Տաքութիւնը աւելի կամ նուազ դիւրութեամբ կը տարածուի մարմնոց մէջը:

11. Ոմանք, ինչպէս երկաթը եւ միւս մետաղները, շատ լաւ կը հալորդեն տաքութիւնը. շաւ հալորդիչ մարմիններ են անոնք:

12. Ոմանք, ինչպէս օդը, փայտը, ածուխը, գէշ կը հալորդեն տաքութիւնը. վաւ հալորդիչ մարմիններ են անոնք:

13. Երբ գոյ ամանի մը մէջ ջուրը եռացնենք, բարձր բարեխառնութիւն մը կ'ստանայ եւ առաջ կը բերէ մեծ ուժով շոգի: Այս ուժը օգտու կը գործածուի շոգեշարժ մեքենայից մէջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԻԹԵՐ

Ա. համար. — Մարմնոց երեք վիճակները. — Զուրին, — զինկին երեք վիճակները. — Կազերը դիւրաւ կը ճնշուին. — Կիրառութիւնը օդի վրայ. — Հեղուկներն ու հաստատունները կը ճնշուին:

Բ. համար. — Ցնդում. — Եռացում. — Թորում:

Գ. համար. — Օրինակով մը հաստատուէ թէ հաստատուն մարմինները տաքնալով կ'անգայտանան. — Հեղուկ մարմինները կ'անգայտանան. — Կազային մարմինները կ'անգայտանան: — Զուրը իր բացառութիւն:

Դ. համար. — Զերմաչափներու շինութիւն:

Ե. համար. — Փայտը, ածուխը եւ օդը՝ տաքութեան վատ հալորդիչ. — Հանդերձներն ինչ պատճառաւ ցուրտին դէմ կը պատուարեն զմեզ. — Կրակին դիմա-

ցող գործիքներուն կոթերը ինչո՞ւ համար փայտէ կը շինեն :

Զ. համար. — Եռացող ջուրի շագիին ուժը. — Այս ուժին կիրառութիւնը շոգեշարժ մեքենայից մէջ :

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

ՔՆՆԱԿԱՆ

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆԻ

Առխարհաբար Գործնական Քերականութիւնը

Շատ գովուեցաւ այս նոր քերականութիւնը, եւ մինչեւ անգամ մինչեւ ցարդ հրատարակուածներուն մէջ հայ լեզուի ամենէն կատարեալ քերականութիւնը համարուեցաւ :

Դժբախտաբար բաւական չափազանցեալ կը գտնենք այդ գովեստները :

Հեղինակը իր յառաջաբանին մէջ կ'ըսէ թէ ուսանողը հոն կը սովորի «քերականութեան փիլիսոփայութիւնը, կամ քերականութիւնը իբր փիլիսոփայութիւն» : Բայց կը մոռնայ թէ իր գրքին կողքին վրայ գրած է «Նախակրթարաններու համար» :

Նախակրթարաններու մէջ կ'ուսանին 7 էն 13 տարեկան տղայք, եւ ի՞նչպէս պէտք է հաշտեցնել այդ «փիլիսոփայութիւն» խոշոր բառը այդ տղայոց փոքրիկ հասակներուն եւ նորարոյս իմացականութեանց հետ :

Եւ սակայն իրացնէ այդ դասագիրքը լեզուին փիլիսոփայութիւնը կ'ուսուցանէ : Բառին բուն նշանակութեամբ տրամաբանական վերլուծութեան ընթացք մ'է, ուր խօսքը կը նկատուի իւր տրամաբանական մասերուն մէջ, եւ հետ զհետէ կը ճանչցուին ու կը սահմանուին նախադասութիւն, ենթակայ, պարզ ու բաղադրեալ ենթակայ, ստորոգելի, պարզ ու բաղադրեալ ստորոգելի, լրացուցիչ, յօդուա-

ծոյ լրացուցիչ, բաղադրեալ նախադասութիւն եւն :

Հսուեցաւ թէ ուրիշ քերականութիւններ սահմաններ կը սովորեցնեն եւ թէ նոյն իսկ սահմանէն կ'սկսին դասը : Իրաւացի գանգատ : Բայց պէտք է գիտել թէ այս քերականութեան բոլոր նպատակն է սահմաններ սովորեցնել : Իրաւ է թէ սահմանէն չ'սկսիր, բայց անպատճառ եւ անվրէպ սահմանին կ'երթայ : Անմիջապէս առաջին դասին վերջը խոշոր տառերով կ'արձանագրուի նախադասութեան սահմանը : Քանի մը դասն անգամ մը «հանդէս» վերնագրին տակ գլուխ մը կայ իրեւ քաղուած, որուն նպատակն է կարգ մը հարցումներով փորձել աշակերտը թէ այդ սահմանները միտք պահած է : Եւ գիրքը կ'աւարտի «քննութիւն» վերնագիրը կրող գլխով մը, որով ուսանողը պարտի իր վերջնական քննութիւնն անցընել ի բերան ուսած սահմաններուն ու բանաձեւներուն վրայ : Կը տեսնուի որ ամբողջ գիրքը սահմաններու ուսում մ'է գլխաւորապէս, եւ տրուած օրինակներն ու հրահանգները այդ ուսման ծառայելու համար են : Դիտելի է նաեւ որ բոլոր գրքին մէջ լեզուի մի միակ կանոն կամ վարժութիւն չի գտնուիր, բառից կազմութեան կամ համաձայնութեան վերաբերեալ, այլ միայն խօսքին էական ու երկրորդական, բանական ու բառական մասանց սահմանները, քերականականարուեստական բառերուն նշանակութեանց սահմանումը : Կարծես թէ միայն այդ ըլլար լեզուին ուսումը կամ առաջին ուսանելի բանը : Եւ ասոր համար բազմաթիւ վարժութիւններ կան բանաւոր ու գրաւոր վերջո՞ւնքեանց, որոց համար ուսանողը պարտի բաւական կնճռոտ պատկերներ ու աղիւսակներ յօրինել :

Արդ տրեւ չեմք ուրանար այս վերացումներուն եւ վերլուծմանց հանրացումներուն, ուսման օգտակարութիւնը. անով մտածման ու դատողութեան կազմածին կը թափանցէ մարդ. այո՛, մարդկային լեզուին իմաստասիրութիւնը կ'ընէ իմաստասիրելով մտածութիւնը որու արտայայտութիւնն

է։ Բայց տհաս մտքերու համար վերացմունք՝ գիտեմք թէ ո՞րքան չոր ու դժուարամարս են։ Առաջին ուսումները պէտք է լինին փորձառական, գործնական։ Իրողութեանց հետ նախ պէտք է ընտանենալ, շատ տեսնել, գործածել, կիրառել, վարժիլ, բազմաթիւ դէպքերու պաշար մ'ունենալ իւր փորձառութեան չրջանին ու իւր յիշողութեան մէջ, եւ ապա աստիճանաբար բարձրանալ ընդհանրացումներու, որք այն ատեն յաճախ ինքնին կը կատարուին ու դիւրաւ կ'ըմբռնուին հետ զհետէ տարիքով ու փորձառութեամբ զարգացած խնացականութենէն։ Բայց ահա Պետիկեան քերականութիւնը անդոսին առաջին չրջանէն կ'սկսի լեզուին վերջին վերացումներուն ուսումը։ Թո՛ղ նախադասութենէն սկսէր միշտ, այդ լաւ է ու աւելի բանաւոր, բայց առանց արուեստական նրբութեանց և անուանարանութեան (nomenclature) երթալու, առանց բառական տաղտուկ վերլուծմանց մէջ դեգերելու։ Նախադասութեան վրայ պարզ գաղափար մը կը բաւէր այդ առաջին չրջանին համար։

Լեզուին վերացումներէն յառաջ կայ լեզուին թանձրացեալը, այն է բուն կենդանի լեզուն, անոր ատաղձն ու կազմածը։ Կայ լեզուին բառարանը, կայ լեզունին բառակազմական արուեստը, կայ անոր բառից փոփոխման օրէնքը, կայ անոր շարադասական կերպը, կան անոր յատուկ ոճերը եւ բացատրական սովորութիւնները։ Արդ, թէ եւ տղայ մ'իր մայրենի խօսեալ լեզուին բոլորովին անհմուտ չի մտնէր դպրոց, այլ քիչ թէ շատ պաշարով մը, բայց տակաւին շատ բան պէտք է սովորեցնել անոր, շատ մարզանք ու կրթութիւն ընել տալ՝ անոր լեզուն մաքրելու, բառարանը ճշտացնելու, բացատրութեան կարողութիւնը զարգացնելու, մայրենի լեզուին կազմին ու սգուոյն գիտակից ընելու և անոր կիրառութիւնը դիւրացնելու համար։ Եւ քերականութեան ուսումը պարտի անշուշտ կարեւոր բաժին մ'ունենալ այս աշխատութեան մէջ, քանի որ, ըստ աւանդա-

կան սահմանին, քերականութիւնն է ուղիղ խօսելու եւ գրելու արուեստը, սահման որու հետ համամաստ է գրեթէ, թէ եւ քիչ մը տարօրէն բանաձեւուած, Պետիկեանի գրքին մէջ արուած սահմանն ալ։ «Նախադասութիւնները այնպէս կազմելու է որ խորհուրդները ուղիղ արտայայտեն. այս ուսումը աւանդող գիրքը փերականութիւնն է»։ Այդ արուեստին գործնական ուսումը կը պահանջէ բազմաթիւ եւ բազմազան հրահանգներ ո՛չ թէ վերացեալ լեզուի մը վրայ, այլ յասուի շեզուի մ'ընդհանուր ու մասնաւոր հանգամանքներուն վրայ, ամէն առիթ կամ միջոց ընելով մոտամարդական վարժութեանց, միտքն ու լեզուն միանգամայն մարգելու եւ հարստացնելու համար։ Պետիկեանի դասագիրքը չի յիշեր իսկ թէ ո՞ր լեզունին համար շինուած է. բնաւ տեղ մը նախերեւ շեզուի խօսք ըրած չէ։ Վերնագրին «աշխարհաբար» (քերականութիւն) բառը անշուշտ ինքնին «աշխարհաբար հայերէնի» չի նշանակեր։

Պէտք է գիտենալ որ նոյն իսկ իր այդ ձեւին ու սահմանին մէջ ունի ոչ նուազ անձնութիւններ։ Անունը կը ներկայացնէ միայն իբր ենթակայ եւ լրացուցիչ ըլլալու ընդունակ։ — գիտեմք որ ան ստորոգելի ալ կ'ըլլայ։ Ածականին միայն ենթակայի եւ ստորոգելոյ լրացուցիչ պաշտօն կուտայ. ան ստորոգելի ալ կ'ըլլայ։ Գրքին բոլոր ընթացքին մէջ, ուր նախադասութեան կազմութիւնն է առարկայ, բնաւ չի ներկայացներ նախադասութիւն մ'որոյ ստորոգելին լինի անուն կամ ածական մը, մինչդեռ տղուն լեզուին անքան սովորական են «Յսկոբիկը եղբայրս է», «Հայրիկս հիւանդ է» ի նման խօսքեր։ Բաղադրեալն ու բազմաբաղադրեալն ու շուրջ (ենթակայի և ստորոգելոյ մասին) իրարու հետ չփոխուած նոյնացած են ևն։ Չեմք ուզեր այլ եւս երկարիլ այս մասին։

Հայ լեզուի քերականութեան մ'իտէտը չէ այս. բայց դժբախտաբար անոր նախաքայլն ալ ըլլալու շատ յարմարութիւն չունի։

ԼՈՒՐՔ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

ԲԻԷՌ ԼԱՌՈՒՍԻ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆՐ

Մեր դպրոցական շրջանակներուն մէջ ծանօթ եւ սիրելի անուն մ'եղած է Բիէռ Լաուուսի անունը: Եթէ իւր 19րդ դարու Մեծ Բառարանը քիչերու հպելի եղած է, բայց իւր առձեռն բառարանը, որ չորս բառարան կը պարունակէ մէկ հատի մէջ — խտացեալ ու պտտեցնուող հանրագիտարան մը այն ալ — այսօր ամէն ուսանողի անրաժան ընկերն է: Իւր Ֆրանսերէն լեզուի ուսուցման ծառայող դասագիրքերը բազմաթիւ վարժարաններու մէջ մուտ գտած են, եւ Ֆրանսերէն լեզուին ուսումը դիւրին, հաճելի ու գերազանցապէս հրահանգիչ ըրած են անոնց մէջ: Նօէլ-է-Շարաուի չոր ու ցամաք քերականութեանց կը յաջորդէին անոնք, եւ կատարեալ նորութիւն մը կը բերէին: Լեզուին վերացեալ կանոնները չէին միայն որ կ'ուսուցանէր Լաուուսի իր քառագիտական (lexicologique) մեթոտովը, այլ բուն լեզուին միերբն էր որ կը զնէր ուսանողին առջեւ: Բազմաթիւ այլազան հրահանգներ՝ զորս Լաուուս նախ իր դասերուն համար պատրաստած եւ ի գործ դրած էր՝ կը դիւրացնէին կանոնին կիրառութիւնը եւ միանգամայն մտքի մարզանք մը եւ սնունդ մը կ'ըլլային: Քերականութիւնը, այնքան տաղտկալի ուսում մը դարձած իր մէջ առջի դասագրոց մէջ, Լաուուսի հետ իմացականութեան հաճոյք մը, հանրագիտակի կրթութեան առիթ մը, բարոյականութեան դասարան մը կը լինէր: Լեզուին ուսումը գաղափարաց ուսում մը կ'ընէր Լաուուս, եւ ոճի վարժութիւնները կը կցորդէր ղառողութեան եւ իմաստասիրութեան վարժութեանց, վստահի ուղիղ խօսելու համար ուղիղ խորհել

հարկաւոր է: Բառից ուսումը ալ միայն անոնց վերջաւորութեանց փոփոխութեան ուսումը ըլլալէ դադրելով կ'ըլլար գործնական ուսումն անոնց առումներուն, նշանակութեանց գոյներուն եւ իրենց նմանութեան ու հակառակութեան յարաբերութիւններուն: Բառից կազմութեան ուսումն ալ իրմով առաջին անգամ կը մտնէր լեզուի ուսման նախնական վարժութեանց մէջ: Իրմէ վերջը շատեր հրատարակեցին նոր ոճով ու մանկավարժական սկզբանց համեմատ յօրինուած լեզուի ուսման դասագրքեր, բայց Լաուուս պիտի պահէ միշտ առաջնորդ մ'եղած ըլլալու պատիւը: Իր վարժապետանոց (Ecole normale) անուն մանկավարժական հանդէս, զոր 12 տարի շարունակեց, ոչ նուազ օգնած էր կրթութեան այլ եւ այլ ճիւղերուն մէջ մեթոտներու բարելաւմ յառաջ բերելու: Լաուուսի քերականութեան եւ ոճոյ բառագիտական ու մտամարդկան ընթացքները, մեր մէջ գաղիերէնի ուսման համար ու այդ առիթի այնքան օգտակար եղած ըլլալէ զատ, հայ լեզուի ուսման մեթոտներուն վրայ ալ անուղղակի նպաստաւոր ազդեցութիւն՝ ի գործ դրած են, հայ լեզուի մէկէ աւելի դասատուներու կարեւոր ուղղութիւններ թելադրած ըլլալով:

* * *

Մեր ընթերցողներէն շատերն ուրեմն հաճութեամբ պիտի իմանան որ անուանի մանկավարժին ու դասագրին ու մեծ բառագրին յարգանաց եւ երախտագիտութեան շքեղ ցոյց մ'ըրած է իր հայրենիքը՝ անոր ի պատիւ կանգնելով փառաւոր յիշատակարան մը: Անոր բացման հանդէսին վրայ, որ տեղի ունեցած է յ2 հոկտեմբեր 1894, ինչ ինչ տեղեկութիւններ հաղորդել արժան կը համարինք, քաղելով la Revue Encyclopédiqueէն, որ կիսամսեայ հանդիսի ձեւին տակ կը շարունակէ 19րդ դարու հանրագիտարանը:

* * *

Պուրկոնեի Թուսի անուն քաղաքիկն էր, ծննդավայր Բիէն Լաուուսի, որ այդ յիշատակարանը կը նուիրէր իւր փառաւոր զաւակին: Կառավարութեան կողմէ հանդիսին ներկայ ըլլալու համար հոն եկած էր Հանրային Կրթութեան Նախարարը, Պ. Ժօռթ Լէյկ, իւր հետ ունենալով զՊ. Լուի Լիառ, բարձրագոյն կրթութեան տնօրէն եւ նախկին աշխատակից Բիէն Լաուուսի, եւ գաւառին (Նօն) նահանգապետը, Պ. տը Լիւզ:

Նախարարը, այլ-պաշտօնական անձինք եւ Լաուուս ընտանիքին անդամները գացին քաղաքին հրապարակը, ուր կը կանգնէր մեծանուն բառագրին յիշատակարանը եւ ուր ժողովրդեան մեծ բազմութիւն մը հաւաքուած էր: Հոն ճառեր արտասանուեցան Թուսիի քաղաքապետին, գաւառին նախնական կրթութեան ընկերութեան նախագահ եւ նախկին երեսփոխան Տըք. Ժավալի, Լաուուսի եղբորորդի Պ. Ժիւլ Հոլլիէ-Լաուուսի եւ Հանրային Կրթութեան Նախարարին կողմանէ: Այս վերջինը յանպատրաստից արտասանեալ փայլուն ու համակրալից բանախօսութեամբ մը գովեց մարդն ու գնահատեց գործը: Երեկոյին, երեք հարիւր բազմականաց ժողովրդական սեղան մը նախարարին նախագահութեան տակ կը միացնէր քաղաքին ու գաւառին պետական ու կրթական նշանաւոր անձնաւորութիւնները, եւ բաժակներ կը պարպուէին յանուն կրթութեան գործին եւ ի պատիւ անոր որ, խոնարհ դաստիարակութեան ուսուցիչ մ'ըլլալէ սկսած, 19րդ դարուն իր Հանրագիտարանը տալով կը մեռնէր անմահացած:

Հանրային Կրթութեան Նախարարին ճառէն կը քաղեմք հետեւեալ մասերը:

«Բիէն Լաուուս, որուն ընթացած ուսպարէզը նկարագրուեցաւ մեզ քիչ յառաջ, մին է այն մարդերէն որք ամենէն աւելի ազդեցութիւն ի գործ դրած են իրենց ժամանակին վրայ: Ոչ ոք աւելի նպաստեց իր ուսուցմամբ եւ օրինակաւն

ժողովրդեան կրթութեան, գիտութեան տարածման եւ մտքերու ազատագրութեան:

«Դպրոցական գրքերու բարեփոխումը, որու ձեռնարկած էր, նոր մեթոտները զորս քարոզեց, հաւաքածոյներն ու հանդէսները զորս հրատարակեց նախնական դպրոցաց մանկտւոյն օգտին համար, պիտի բաւէին իր անունն անմահացնելու...»

«Մանկավարժական շրջանը լրացնելէ յետոյ, Լաուուս իր Մեծ Բառարանին հիմերը ձգեց: Անսահման գործ մ'էր այն որու ձեռնարկեց: Կը կարծուէր թէ մէկէ աւելի մարդկային կեանքեր պիտի սպառէր: Լաուուս պարզօրէն դառաւ խընդրոյն լուծումը: Ըսաւ ինքզինքին թէ կրկնապատիկ պիտի ապրէր, թէ օրը տասնեւ վեց եւ տասնեւութ ժամեր պիտի նուիրէր աշխատութեան, եւ խոստացաւ ինքզինքին, եթէ իր ոյժերը զինքը չմատնէին իր նախատեսած վախճանին հասնելէ յառաջ, որ ցվերջ անձամբ իր նախագիծը պիտի իրագործէր: Գիտէր թէ իր կեանքովը պիտի տուէր այն հսկայական ճիգը զոր պիտի փորձէր: Բնաւ վարանում մը չունեցաւ, գործի սկսաւ, մտաւոր հիանալի գործունէութեան վառարան մը կազմեց: Քսան տարի գրական նիւթերը դիզուեցան գրական նիւթերուն վրայ, հատորները բարդուեցան հատորներուն վրայ: Ժողովրդեան հիացումը կ'աճէր իր զարմանքին հետ:

«Լաուուս, աշխարհէն մեկուսացած, իր գործոյն մէջ ամփոփուած փակուած, բնական ուժի մը կանոնաւորութեամբն ու անդիմադրելի թափովը կ'աշխատէր: Քսան տարի, իր ուղեղը եւ իր սիրտը, պուրկոնիական կենսահիւթով ուռած, ոչ մէկ տկարացում, ոչ մէկ վնասութիւն ունեցաւ:

«Անոնց որք, սարսափած այն աշխատութենէն զոր կը հարկադրէր ինքն իր վրայ, կ'աղաչէին գիտնոյն քիչ մը հանգիստ առնուլ, հանդարտ դիւցազնութեամբ մը կը սպասախոսէր. «Հանգչելու համար անմահութիւնը չունի՞մ միթէ:»

«1875 թն, 19րդ դարու Հանրագիտա-
րանը ընկած գործ մ'էր: Զեռագիրը ա-
ւարտած էր: Լառուս կրնար մեռնիլ:
Մեռաւ:»

Ի՛նչ գեղեցիկ օրինակ մը տոկուն կա-
մեցողութեան, հաստատ նկարագրի, ան-
խոնջ յարատեւութեան:

* * *

Բարիքի եւ գաւառաց գաղիական Մա-
մուլն ալ փութաց հատուցանել, այս առ-
թիւ, իր երախտագիտութեան հարկն,
անգամ մ'ալ հաստատելով այն մեծ ծա-
ռայութիւններն զորս ամէն օր Լառուսը
(այս անունով պարզապէս կը հասկնան
այսօր Մեծ թառարանը) կը մատուցանէ
գրական աշխարհին:

Ի մէջ այլոց, Թաւն հետեւեալ կերպով
կը գնահատէր մեծ Բառագրին գործը:

«Երբեք գործ մ'ասկէ աւելի յարմա-
րած չէր իր ժամանակին: Մեր դարուն
նորութիւններէն մին այն է որ՝ նա որ
չուզեր կատարելապէս չեզոք մնալ իմա-
ցական կեանքի խնդիրներու մէջ, բան-
տուած կը գտնէ ինքզինք հակօրինու-
թեան մը մէջ որ անլուծելի կ'երեւի:
— Իրեն հարկաւոր, բայց միանգամայն
անկարելի է հանրագիտական հմտութիւն
մ'ունենալ: Հնութեան փիլիսոփայի մը
դիւրին էր ճանչնալ իր ժամանակին բո-
լոր գիտութիւնը: այդ բանը տակաւին
կարելի էր Տէքարդի մը կամ Լայպնիցի
մը: Բայց դարէ մ'ի վեր գիտութիւնը,
ա'յնքան պատմականը որքան բնականը,
յանկարծ այնպիսի՝ զարգացում մ'ստա-
ցան՝ որ մարդու մը կեանքը չատ կարճ
պիտի ըլլար մի միայն ուրիշներուն աշ-
խատութեանց արդիւնքը իւրացնելու հա-
մար...»

«Բիէն Լառուսի հանճարի գաղափարն
եղաւ մի միակ գործի մէջ խտացնել բո-
լոր մարդկային ծանօթութեանց ռամկա-
ցումը եւ այդ հսկայական հանրագիտա-
րանը ներկայացնել այնպիսի ձեւի մը տակ
որ խուզարկութեանց անմիջական գոհա-
ցում մը տայ: Փոխանակ յիսուն հատոր-
ներու մէջտեղ վարանկու եւ յանօգուտս

թղթատելու երկու հազար էջեր, այբբե-
նական բառարանին միջոցաւ մարդ վըս-
տահ է մէկ երկվայրկեանի մէջ գտնել այն
յօդուածն որու պէտք ունի, եւ բաւ է
կարդալ մէկ կամ երկու սիւնակ իւր ու-
ղած տեղեկութիւնը լիովին քաղելու հա-
մար: Լառուսը կորսնցնելու ժամանակ
չունեցողներուն նախախնամութիւնն է,
եւ ո՞վ այսօր կորսնցնելու ժամանակ
ունի:

«Հետաքրքի՛ր մ'էք, անտիպ մանրա-
մասնութեանց հետամուտ փնտռող մը,
որ եւ է խնդրոյ մը վրայ մասնաւոր
ներկու հմտութիւն մը կազմելու փա-
փաքող, դարձեալ առէք Լառուսը:

«Յիրաւի, չեմ կարծեր որ մեր ժամա-
նակին մէջ կարդալ գիտցող մարդ մ'ըլ-
լայ որ Լառուսի երախտագիտութիւն
չպարտի:»

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Գերմանական կառավարութիւնը բա-
ւական տարօրինակ բարեկարգութիւն
մը մտցուցած է վերջերս իւր վարժա-
րաններուն մէջ: Այսուհետեւ, խե-
լացի աշակերտները զատ պիտի նստին.
բժիշկները պիտի գան եւ տղոց գանկն
ու ամբողջ գործարանները քննելէ վերջ՝
պիտի գատեն խելացիներն անխելքնե-
րէն: Կը հետեւի թէ ամէն գերմանական
վարժարանի մէջ խելացիներու եւ ապուշ-
ներու ուրոյն կարգեր պիտի ըլլան: Այս
վերջիներն մասնաւոր դասընթացքներու
պիտի հետեւին, անգամ մը որ հաստատ-
ուի թժշկաց կողմանէ՝ իրենց մտքի տկա-
րութիւնը: Այս դասերուն մէջ «պիտի
զգուշացուի անոնց սովորեցնելէ այնպիսի
բաներ՝ որոնք քիչ մը զօրաւոր մտային
գործունէութիւն կը պահանջեն:» Այն
ֆրանսական թերթն՝ որմէ կը քաղենք
այս տեղեկութիւնները, կը յաւելու. «Ա-
սիկա կը նշանակէ թէ՝ այդ դժբաղդ տղայք

յաւիտեանս յաւիտենից պիտի դատապարտուին ապշութեան: Եւ այս, անոր համար որ իրենց գլխուն վրայ չափէն աւելի կամ պակաս ուռեցք մը ունին, կամ անոր համար որ կարմրախոտ ուռեցած են, եւ կամ, վերջապէս, անոր համար որ քննիչ բժշկին արծաթէ ստեղծեցով ակնոցէն զարհուրելով գէշ կերպով պատասխանած են անոր հարցմանց:»

L.

ԱՄՍԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆՅ ՏԵՏՐԱԿ

Ֆրանսական նախակրթարանաց կազմական կանոնագրի 15^{րդ} յօդուածը կը տրամադրէ որ «Մէն մի աշակերտ, դպրոց մտած ատեն, ընդունի մասնաւոր տետրակ մը զոր պիտի պահէ որչափ ատեն որ դպրոց յաճախէ: Ուսմանց իւրաքանչիւր ճիւղի վերաբերեալ ամէն մէկ ամսուան առաջին պարտականութիւնը այդ տետրակին մէջ պիտի կատարէ աշակերտը դասարանին մէջ և առանց ուրիշին օգնութեան, այնպէս որ այս պարտականութեանց ամբողջութիւնը ցոյց տայ տրուած դասերու յաջորդութիւնն եւ աշակերտին ամէն ամիս ու տարուէ տարի բրած յառաջդիմութիւնը: Այս տետրակը դպրոցին մէջ կը պահուի:»

Յօդուածին տրամադրութիւններն, ինչպէս կը տեսնուի, շատ մեկին են, որպէս ակներեւ անոր օգտակար հետեւութիւնը: Բացի այն օգուտներէն՝ որոնք յիշուած են յօդուածին մէջ, այդ պարտականութիւնը խնամ մ'են աշակերտին համար իւրաքանչիւր դաս պէտք եղածին չափ լաւ սովորելու՝ լաւագոյն կամ գոնէ լաւ նիշ մ'առնելու համար այդ տետրակին մէջ՝ որ ի հարկէ հրապարակային բնութիւն մը պիտի ունենայ: այդ տետրակն կը մղէ զինքն մաքրութեան և կոկիկութեան թանկագին վարժութիւններն ստանալու, որով ճաշակն ալ պիտի կրթուի հետզհետէ. մէկ բառով, դաստիարակն կամ ո եւ է որ որ շահագրգռուի աշակերտով՝ կը տեսնէ այդ տես-

րակին մէջ թէ տղայն իւր տարիքին համեմատ յառաջ զացած է, թէ պէտք եղածին չափ կ'օգտուի աւանդուած դասերէն, թէ ինչ է իւր ընդունակութեան աստիճանը, թէ ինչ կարելի է յուսալ իրմէ, թէ ինչ կարգադրութիւն պէտք է ձեռք առնել իրեն նկատմամբ եւ ինչ խորհուրդ տայ իրեն, թէ աշակերտին մտաւորական որ կարողութիւնը աւելի պէտք ունի մարզուելու, եւն. եւն:

L.

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ԳՈՒԹԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԻՆ ՄԷՋ

Շատ անգամներ տեսած էինք զնա Բ. ի գերեզմանատան մէկ անկիւնը, անշուք տապանաքարի մը առջեւ ծնրադրած, նայուածքը անհուն կապոյտին մէջ լողալով, տրտմաթափած յուսահատութեան ցողացմունքն աչացը մէջ: Եւ նշմարած էինք հան իւր արցունքները, երբ, խոնարհելով յանկարծ մերթ ընդ մերթ սաղ մարմարին վրայ իւր գլուխը, ընդերկար կը մնար այնպէս կործանեալ արձանի աղետարար դիրքին մէջ: Եւ հէք երկտառադը, անհուն վշտի մը բեռին տակ բեկեալ, ամբողջ ժամեր կ'անցունէր միայնութեան եւ մթին մտածման մը հետ դէմ առ դէմ:

Հետաքրքրած, յաջողած էինք այդ սըգւոյն պատմութեան տեղեկանալ, ահաւասիկ:

Երկոտասանամեայ պատանի մ'էր Յովսէփ, երբ, որք մնացած, գաւառէն եկած էր գործաւոր հօրեղոր մը քով, եւ կը յաճախէր մայրաքաղաքիս վարժարաններէն մին:

Ի բնէ ուշիմ եւ հանճարեղ, ազնիւ սրտով օժտեալ, այլ արտաքին անարդ եւ բիրտ երեւութով մը տգեղցած, ալքատ ազգականի մը քով առած անբաւական սնունդի մը աւերներն իւր անձին

վրայ կրելով, դպրոցը մոտեցնէն քիչ ժամանակ վերջը, իւր աշակերտակցաց մի քանիներուն ծաղուն եւ չարածճի կատակներուն առարկայ եղած էր: Բայց, բնաւ որութեամբ հեզ, կը համբերէր: Մահա-սարսուռ եւ աղիտըրմ բան մ'ունէր սակայն այդ համբերութիւնը: Քաղաքին սովորութեանց անհմուտ, ամաչելով զոգացեալ ինքն իրմէ, դառնաղէտ չարածճութեանց, նոյն իսկ հարուածներու կը պատասխանէր այն աղեկէզ ժպիտով, որուն ետին համակերպութեան լացը կը նշմարես: Արդարեւ, կարծես թէ ինքն իրեն կ'ըսէր թէ այդ չար տղաքները պէտք էր որ զրօսնուին, թէ անոնց գոհութեան եւ երջանկութեան լրացուցիչ մէկ տարրն էր ինքը, եւ թէ, բաց աստի, ինքն իրաւունք չունէր այս ամենուն պատճառն հասկնալու:

Թշուառութեան դպրոցին մէջ ուսած, աղէտքին առջեւ գլուխ ծռելու եւ դառնացուցիչ զգուանքներու ճնշման տակ զուարթ երեւելու վարժուած, եղիելին Յովսէփ կը ժպտէր, այո, երբ իւր գոհ ու չարասիրտ ընկերները զինքը շարժարեւ կը ջանային, եւ անգամ մ'իսկ մտքէն չէր անցուցած իւր մարմնոյն ոյժը կամ գէթ ձեռնհաս իշխանութեան ազդեցութիւնը փորձել՝ պատկառոտ անջրպետ մը հաստատելու համար իւր եւ իւր հալածչաց մէջտեղ: Կը վախնա՞ր արդեօք թէ մի՞ գուցէ իւր գանգատներն արտաքսէին զինքն այդ հաստատութենէն, ուր գիտութեան եւ ուսման ծարաւն յագեցնել եկած էր իւր լուսատենջ հոգին:

Խեղճ պատանի, դեռ չմուցած իւր ողբացեալ ծնողաց պատկերն, խանի մը մութ ու խոնավ մէկ անկեանը մէջ այժմ տառապելով գիշերները, ցերեկներն ալ անգութ անողորմ պատանիներու չարութեանէն տուայտելով, այլ եւս ոյժ չէր զգար սակայն իւր մէջ եւ վհատութեան վայրկեաններ կ'ունենար: Բայց հաստատապէս առաջադրած էր ուսանիլ. դաւառին մէջ ուսման ճաշակն առած էր, եւ ամէն արգելք, ամէն փուշ ոտնակոխ պիտի ընէր իւր բաղձանքը լրացնելու համար:

Բան մը որ, այս որոշումէն զատ եւ անկէ ալ աւելի, խրախոյս կը վառէր իւր սրտին մէջ եւ աննկուն կ'ընէր զայն, իւր ընկերներէն միոյն, Միհրանի համակրանքն ու գթութիւնն էր: Սա, տեսնելով Յովսէփի տառապանքները, զգաստ եւ զգալուն սրտանի, փափուկ ու ողորմած սրտի տէր, յանչափա ի գութ կը շարժէր անոր վրայ: Թերեւս Միհրան կարող էր արգելել չարիքը զոր կը հասցնէին իւր ողորմելի ընկերին, գիմելով վարժարանին վարչութեան կամ խնամակալութեան, բայց, տկար ու թոյլ որպէս կ'ըլլան ընդհանրապէս գթած եւ փափկասիրտ արարածներ, որ և է արտաքին ազդեցութեան գիմում չէր ըրած: Այլ, առանց զինքը ճանչցնելու, կարող եղած էր Յովսէփի նիւթական օգնութիւններ մատուցանել: Յերեկոան ճաշին միջոցին կամ աւարտին, որ միասին միեւնոյն սրահին մէջ կ'ըլլար եւ յորում Յովսէփ գլխիկոր եւ վշտագին, հապճեպով կը սպառէր չափազանց սակաւալետ կերակուր մը, տնտես աղքատը շատ անգամ անուշեղէն մը կամ համադամ մը զաղտ կը բերէր իրեն, ըսելով թէ հարուստի մը տունէն շատ մը աշակերտներու համար նուէր եկած էր: Ուրիշ անգամներ Յովսէփ, դարձեալ տնտես աղքատի մէն, կ'ընդունէր այլեւայլ գումարներ, որոց ծագումը, այդ պաշտօնէին պատմութեանց համեմատ, շատ բարեպաշտական էր եւ շատ մաքուր, բայց ծածուկ մնալու սահմանուած:

Միայն թէ ամէն անգամ որ տնտես աղքատը այդ տեսակին վերաբերող նուէր մը կամ նպաստ մը կը բերէր գաւառացի պատանեւոյն, մա կը նշմարէր որ տնտեսին աչքերը նոր սրբուած էին: Միհրանի գթասիրութիւնը, իւր փափուկ հոգին արցունքներ կը խլէին իւր թաքուն նպաստներուն հաւատարիմ միջնորդէն:

Այս փափկանկատ հոգածութիւնը, տնտեսին հետ այս հրեշտակային դաւադրութիւնը նշմարած էր վերջապէս Յովսէփ: Այլ եւս գիտէր թէ Միհրան իրեն համար նախախնամութիւն մ'էր, թէ նա զաղտ իրեն համար կ'արտասուէր: Եւ

այս ողորմածութիւնը, եւ այս պաշտպանութիւնը որ ուրիշներուն նման քաղաքացի պատանիէ մը կուգար կը պարուրէր եւ կը փայտայէր զինքը, տեսակ մը պաշտամունք դրած էր իւր հոգւոյն մէջ։ Ո՞վ դրած էր այդ կարեկցութեան զգացումն Միհրանի սրտին մէջ։ Սինչդեռ ամենքը զինքը կը լքանէին, ի՞նչ կ'ըսեմ, մինչդեռ ամենքը գրեթէ իրեն թշնամի էին, ի՞նչ կարեկցութիւն, ի՞նչ բարեկամութիւն էր այդ որ, արեգական նման, կը ծագէր իւր խաւարամած գոյութեան վրայ եւ կը ջեռուցանէր իւր սիրտը որ մօտ էր կեանքէն ու ծանալու։

Եւ Յովսէփ, առաւօտ մը, չէր կրցած զսպել իւր երախտապարտ սրտին զգացումներն եւ ձեռքը համրուրեր էր իւր մատաղատի բարերարին, եւ բացած էր անոր իւր վերքերով ծածկուած սիրտը, եւ ուխտած էր յաւիտեանս չմոռնալ անոր բարեկամութիւնը։

Տարիներ անցան։ Յովսէփի սրտին մէջ հետզհետէ աւելի վառուած էր Միհրանի համար անհուն սէրն ու շնորհապարտութիւնը։

Երկուքն ալ ելած էին վարժարանէն։

Յովսէփ գործատան մը մէջ գահացուցիչ վարձքով պաշտօն մը ստացած էր՝ շնորհիւ մտաւոր զարգացման զոր կրցած էր ձեռք բերել, հակառակ այն տարապայման մըթնոլորտին եւ հիքութեան որ զինքը միշտ չրջապատած էին։

Գաւառացի երիտասարդը, ամէն անգամ որ պարագայները թոյլ տային, կ'երթար գտնել իւր բարեկամն, իւր բարերարն, իւր պաշտպանը, եւ այսպէս երբեմն զիրար կը տեսնէին եւ իրենց մտերմութեան կապը կ'ամրապնդէին եւ կը նորոգէին երկու երիտասարդները։

Բայց դժնդակ հիւանդութիւն մը կը կրծէր Միհրանի կեանքը բաւական ժամանակէ ի վեր։ Ի՞նչ դառն փուչի պատահած էր այդ ծաղիկը։ Հանճարով լի աչքերուն եռանդովը միայն ոգեւորած այդ դժգոյն մեղմադձիկ դէմքը ո՞ր խորշափոջ արեգակին էր պատահած։ Ի՞նչ յանկարծակի հրեղէն հոսանք մը անցած

էր այդ փափուկ կուրծքին տակ, եւ ցամաքեցուցած էր կենաց հոյզն։ չէնք գիտեր։ Միայն սա ճշմարիտ է որ օր մը, աղետալի օր մը, Յովսէփ անհնարին կսկիծով իմացաւ իւր միակ բարեկամին վախճանը։ Աշխարհ մթադնեցաւ իրեն համար, թախծութեան եւ յուսահատութեան մռայլ ամպ մը պատեց իւր գոյութիւնը, եւ երկար ժամանակ չկրցաւ մտիթարուիլ իւր սրտակից մտերմին յաւիտեանական բացակայութենէն։

Ահա ինչո՞ւ, շատ անգամներ կը տեսնէինք զնա Բ. Փ. գերեզմանատան մէկ անկիւնը, անշուք տապանաքարի մը առջեւ ծնրադրած, նայուածքը անհուն կասկեղտին մէջ լողալով, որ ամբողջ ժամեր կ'անցունէր միայնութեան եւ մթին մոռածման մը հետ դէմ առ դէմ։

Յ. ՍԵՅԵԱՆ

ԵՐԵՔ ԴՊՐՈՑՆԵՐՆ

Առաջինն այն սիրելի բոյնն է՝ որ ընտանիք կը կոչուի։ Ընտանիքն ուր մանուկն կը փթթի ու կը մեծնայ, ուր ի յայտ կուգան եւ կը զարգանան հոգւոյն առաջին յոյգերն, ուր ընկերական կենաց նախնական ուսումը կ'ընենք։ Մեր անհատականութիւնը, ինքնութիւնը, մեր մտաց յօրինուածութիւնը մեծ մասամբ հետեւանքն չե՞ն ընտանեաց թագուն, շարունակական, թափանցանց ազդեցութեան՝ որ զմեզ կը շրջապատէ այն օրէն յորում մեր աչքերն կը տեսնեն ու մեր ականջներն կը լսեն։ « Հայրս այսպէս կ'ըսէր... Մայրս այս բանը կը սիրէր... Մեծ հայրս այնպէս կը հաւատար թէ... » Այսպէս կը խօսինք կենաց ընթացքին մէջ, սիրելով, յարգելով կամ անարգելով ընդհանրապէս ինչ որ կը սիրէին, կը յարգէին կամ կ'անարգէին մերիններն։ Ահա ինչո՞ւ ըսած են. Տղան կ'արժէ այնքան՝ որքան կ'արժէ ընտանիքն։ Ահ, Հայ ծնողք, դժբաղդաբար շատ քիչ բան կ'արժեն մեր ընտանիքներն մեծ մասամբ, ահա ինչո՞ւ շատ քիչ բան կ'արժեն նաեւ

մեր դպրոցականներն : Այո՛ , մեր դպրոց-
ներն պէտք ունին բարեկարգուելու , կը
տեսնէք թէ ամէն ճիգ կը թափուի զանոնք
բարեկարգելու համար , բայց ամէն բան
դպրոցէն մի սպասէք , միացուցէք ձեր
ազդեցութիւնն մերինին , հսկեցէք , շատ
մօտէն հսկեցէք ձեր ընտանեկան կենաց
վրայ : Աւա՛ղ , քանի անմեղ մանկիկներ
եմ տեսած՝ որ զոհերն են եղած մեր ըն-
տանեկան յոռի կացութեան : Իսկ զի-
տէք արդէն ձեր պակասութիւններէն
չատերն , շատեր ձեր մէջէն խոստովանած
են իրենց բերնով . ուրեմն պէտք է ձեր
անձին վրայ ճիգ ընէք՝ յաղթելու համար
այդ թերութեանց : Անշուշտ դիտէք թէ
այն ատեն իրաւամբ պիտի արժանանաք
ձեր զաւակաց երախտագիտութեան , երբ
ձեր ծնողական պարտքն լիովին կատարէք :
Ու այն ատեն , ուղածնուդ չափ բծա-
խնդիր եղէք դպրոցական բարեկարգու-
թեան մասին , պարտ ու պատշաճ յար-
գանքն պիտի մատուցանենք ձեր դիտո-
ղութեանց եւ պիտի ջանանք անոնցմէ օգ-
տուիլ :

Երկրորդն է բուն դպրոցը , այն՝ ուր
դաստիարակն , երէկ դեռ օտարական մը ,
յանկարծ տղուն վրայ կ'ունենայ հօր մը
իշխանութիւնն ու ազդեցութիւնն : Ինչպ-
րոցին մէջ տղայք ոչ միայն լաւագոյնս
պիտի ճանչնան ընտանիքն եւ իրենց
պարտքերն առ նա , այլ եւ ինքզինքնին
պիտի գտնեն ընկերական միջավայրի մը
մէջ որ մանրանկարն է մեծ ընկերութեան
ուր կոչուած են ասլիլ յապագային : Հոն
պիտի կազմուի ապագայ քաղաքացին ,
Հոն չիման մէջ պիտի ըլլայ տղան ուրիշ-
ներու կիրքերուն , կամքին , բնաւորու-
թեան հետ , ինչպէս եւ աւելի զօրաւոր
կերպով կարգի ու կանոնի մը տակ պի-
տի զգայ ինքզինքն : Ուրիշներու ետք յար-
գել եւ իրենք յարգել տալ , բանաւորու-
թեան եւ օրինաց հնազանդիլ պիտի սով-
որի : Դպրոցը պիտի կազմէ նկարագիրն ,
պարկեզ մարդը : Բայց դպրոցն ձեզմով
պիտի տայ այս օգուտներն , Հայ դաս-
տիարակք , ձեր խղճամիտ եւ համերաշխ
պաշտօնավարութեամբ մանաւանդ : Ա-

մէն բանէ տուաջ ձեր պաշտօնին սէրը ու-
նեցէք , տուանց այս պայմանին դաստիա-
րակի պաշտօնն ճշմարիտ տունջանաց աղ-
բւր մ'է ձեզ համար : աւելի լաւ է որ
առանց վայրկեան մ'սպասելու ձգէք այդ
պաշտօնն որ ձեզի համար եղած չէ : Ու
յետոյ , անխղճութիւն , ոճիւր պիտի ըլլար
անձեռնհաս պաշտօնավարութիւնը . տղայն
տրուած է ձեզ՝ որպէս զի ֆիզիքական ,
բարոյական եւ մտաւորական երբեակ տե-
սակէտով զարգացնէք զայն . ձեր պաշ-
տօնին գիտակցութիւնն ու սէրն ունենա-
լու էք որ կարենաք այս ամենափափուկ
գործին մէջէն ելնել . հակառակ պարա-
գային , տղայն սպաննած կ'ըլլաք : Ուշի
ուշով հսկեցէք ձեր վարմանց , ձեր շար-
ժուածքներուն , ձեր խօսքերուն վրայ .
ճշդապահուի՛ր եւ , մաքրասիրութեան ,
արդարամտութեան , բարոյական կորովի
կենդանի օրինակ հանդիսացէք ձեր ա-
շակերտաց առջեւ , ձեր հմտութեան չափն
աւելցուցէք ամէն օր , առանց կանխա-
պատրաստութեան՝ մի՛ մտնէք դասարան ,
ու այն ատեն պիտի ըլլաք գործին մար-
դը , պիտի վայելէք ձեր աշակերտաց սէրն
ու համարումը՝ առանց որոց վարժապե-
տութիւն չ'ըմբռնուիր : Ու մի՛ կարծէք
թէ ըստ ամենայնի կատարեալ դաստիա-
րակ մ'ըլլալու համար , տղայն իբր ֆի-
զիքական , բարոյական եւ մտաւորական
մարդ դաստիարակելու միջոցները գիտ-
նալու համար անպատճառ վարժապետա-
նոցէ մ'եւած ըլլալ պէտք էր ձեզ հա-
մար : Անշուշտ այս առաւելութիւն մ'է ,
բայց այդ իսկ ոչ ինչ պիտի արժէր , երբ
դաստիարակի կոչումը չունենար մարդ ,
մինչդեռ կոչում ունեցող մը կրնայ բարի
կամեցողութեամբ վարժապետանոցի վկա-
յականի թերին ընուլ զգալապէս՝ թղթա-
տելով մանկավարժական գրուածներ , հե-
տեւելով կրթական շարժման , օգտուելով
միշտ իր փորձառութեանէն եւ ընթեր-
ցումներէն :

Հիմայ , քանի մը խօսք ալ երրորդ
դպրոցին վրայ , հակառակ իմաստով
առնելով հոս դպրոց բառին նշանակու-
թիւնը , այն է ոչ իբրեւ շինիչ , այլ

իրերեւ եղծիչ ու անբարոյացուցիչ ազգեցութիւն ի գործ դնող միջավայր: Փողոցն է այն, իւր հրապուրիչ խոստումներովը, իւր անդադար հրաւերներովը, իւր բազմազան օրինակներովը: Մարդերուք չի մոռնար ինչ որ ուսած է փողոցին մէջ, դասերուն ամենէն կենդանիներն են անոր տուած դասերը: Անցորդին մէկ անվայել խօսքն, մէկ կոշտ ձեւն անջնջելի կերպով կը քանդակուին աղուն մաքին մէջ: Շատ տարիներ պիտի անցնին այդ անձաւ բառին, այդ անշնորհք երգին վրայէն: ուրիշ բաներ պիտի զիջուին անոնց վրայ, եւ օրին մէկը, երբ հարսնեակը թիթեռնիկի փոխուի, բառը, երգը, ձեւը մարմին պիտի առնեն, եւ, աւա՛ղ, հասկանալի պիտի ըլլան: Ահա՛ փողոցին ազգեցութիւնն, այդ ահեղ դաստիարակին որ ամէն վայրկեան կը դիտէ զպրօցականն ու զպրօցականուհին: Ահա թոյնն. դեղթափն, պիտի հարցնէք: Դեղթափն, դժբաղդարար գտնուած չէ տակաւին ազգու դեղթափ մը: Ինչ որ կարելի է յանձնարարել ծնողաց, սա է որ գոնէ կարելի եղածին չափ քիչ ձգեն իրենց զաւակներն առանձին՝ փողոցին մէջ, թող չտան որ տան սահմաններէն անցնին, որպէս զի չարիքն միշտ աչաց առջեւ ունենան եւ յարմար ժամանակին կարենան արգիլել զայն, մինչեւ այն օրն որ տղայն զօրեղ նկարագրով օժտուած՝ ինքզինքը վարելու, իւր ընկերներն ընտրելու վիճակին մէջ պիտի ըլլայ:

Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

ՅԱՆԿ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ

ՖՐԱՆՍԻՈՑ

Ի սկզբանէ մինչ ց'մեր օրերն (1893)

Ուսանողութեանն ատեն՝ Եւրոպիոյ Հայ ուսանողութեան պատմութիւնն գրել ձեռնարկեցի, ինչ ինչ պատճառներ եւ դժուարութիւնք հարկադրեցին կիսատ թողուլ աշխատութիւնս: Այս աւթիւ ջանացած եմ ունենալ Եւրոպիոյ զանազան

վարժարաններն եւ համալսարաններն աշակերտող Հայոց անուններն. ի Ֆրանսա ուսումն առնողաց ցանկն գրեթէ ամբողջովին ունեցած ըլլալ կը կարծեմ, որոյ հրատարակութիւնն օգտակար համարելով՝ ներկայիւ ի լոյս կ'ընծայեմ, խնդրելով ազնիւ ընթերցողներէս՝ սխալներու ուղղութիւնն եւ թերութեանց ամբողջացումն:

Տ.

Ա. Բժեկական Համալսարան Փարիզու

Ուսումնասիրք

1. Սինապեան Գասպար, Կ. Պոլսեցի, 1843. (*)
2. Ռուսինեան Նահապետ, Կեսարացի, 1849.
3. Պէյուան Յովսէփ-Մեղքոն, Ա. Պոլսեցի, 1850.
4. Մօզեան Գրիգոր, 1853.
5. Թազուրեան Գէորգ, 1855.
6. Արզումանեան Յակոբ, 1858.
7. Զայեան Արթին, 1858.
8. Խորասանճեան Միքայէլ, 1859.
9. Քեաթիպեան Մարգար Յովհաննէս 1861.
10. Նաֆիլեան Անտոն Կոմիտաս, 1862.
11. Ռաֆայէլեան Միքայէլ, 1862.
12. Նուրիճան Յովսէփ, 1863.
13. Փէշտիմալճեան Տիգրան, 1867.
14. Իւթիւճեան Էմմանուէլ, 1867.
15. Հաթիֆեան Յովհաննէս Եղիա.
16. Կոստանեան Պօղոս Գահիրէցի, 1870.
17. Թիւրապեան Գ. 1871.
18. Արծրունի Միհրան, 1872.
19. Հէքիմեան Միքայէլ, 1872.
20. Մեղպուրեան Ներսէս Սահակ, 1874.
21. Ճերահեան Կարապետ, 1875.
22. Փափազեան Մեղքոն Պօղոս, 1875.
23. Տամեան Միքայէլ, Պուքարէսացի, 1876.
24. Թազուրեան Թազուր, 1878.
25. Թերզանեանց Ա. 1878.
26. Թիրեաքեան Յարութիւն, 1878.
27. Ասլանեան Անտոն, 1880.

(*) Շրջանաւարտեալ Թուականներն են:

28. Հիւնքեարպէյէնտեան Կ. 1880.
29. Զարդարեան Միհրան, 1881.
30. Շահպազեան Գէորգ, 1882.
31. Քէմէզեան Միհրան, 1882.
32. Նազաշեան Համբարձում, 1882.
33. Սիմոնֆ Ա. Կ. Պոլսեցի, 1882.
34. Ասլանեան Թ. Կ. Պոլսեցի, 1883.
35. Բաբեւեան Կոստանդին, Ռումա-նիացի, 1883.
36. Շէրպէթեան Մաքսուտ, Կ. Պոլսեցի, 1884.
37. Խնդիրեան, Կ. Պոլսեցի, 1884.
38. Թորգոմեան Վահրամ, Կ. Պոլսեցի, 1884.
39. Արծրունի Վահան, Պայազիացի, 1885.
40. Տիկին Նեռոսինոֆ, ծնեալ Տէր-ղուկասոֆ, Կովկասցի, 1887.
41. Մելիքեան Լեւոն Կ. Պոլսեցի 1887.
42. Խանճեան, 1888.
43. Արշակունի Իւթիւճեան Կ. Պոլսեցի, 1889.
44. Լուիս Միլիքոֆ Յովհաննէս, Կովկասցի, 1888.
45. Տէր Գրիգորեանց, Կովկասցի, 1888.
46. Տէր Զաքարեանց, Կովկասցի, 1888.
47. Նաղուպեան, Ա. Պոլսեցի, 1889.
48. Էլմասեան Յակոբ, 1890.
49. Աթարեան Գարագաշ, 1891.
50. Օհանոֆ, Նախիջեանցի, 1892.
51. Մօսկոֆեան, 1893.
52. Տաղաւարեան Ն. Սերաստացի 1893.

Ծանօթ. — Տոք. Սէրվիլէն, Տոք. Շիւմանեան, Տոք. Օրմանեան, Տոք. Օհանեան, եւ կարելի է ուրիշներ՝ իրենց ուսումն սկսած են ի Փարիզ, սակայն աւարտած են Իտալիոյ Համալսարաններն, Ներկայ ուսանողք են աւելի քան 35, որոց մեծագոյն մասն Պոլսեցի, քանի մը գաւառացի (Սարբերդ, Ակն, Վան, Տրապիզոն, Կեսարիա, Պաղտատ) եւ մի քանին Կովկասցի:

Բ. Բժեկական Համալսարան Մօնթիլիէի

Ուսումնաւարսք

1. Մազաստարեան Կարապետ, Կ. Պոլսեցի, 1893.
- Ծան. — Տոք. Շահպազեան եւ Տոք. Տէր Զաքարեանց աստ սկսած են իրենց ուսումն, սակայն աւարտած են ի Փարիզ, Ներկայ ուսանողք երեք են. երկուքն Կ. Պոլսէն եւ մին Վանէն:

Գ. Բժեկական Համալսարան Լիոնի

Ուսումնաւարսք

1. Նազարէթեան, 1885.
 2. Զօհրապեան, 1885.
- Ներկայ ուսանող. չկայ:

Դ. Բժեկական Համալսարան Նանսիի

Ուսումնաւարտ ունեցած չեմք:

Մի ուսանող կայ այժմ:

Ե. Բժեկական Վարժարան (*) Մարսիլիոյ

Ուսումնաւարտ ունեցած չեմք ցարդ: Ներկայիս միակ ուսանողն է Ասլանեան Գալուստ զոր քիչ օրէն Տոքթօր պիտի տեսնամք: Ուրիշ ուսանող մ'ալ ունեցած եմք աստ, Աղաւնեան, որ Փարիզ դացած է չարունակել իւր ուսումն:

Զ. Ասամաքուժական վարժարան Փարիզու

Ուսումնաւարսք

1. Շէրպէթեան Գէորգ Կ. Պոլսեցի, 1886.

Ուսանող

1. Շէրպէթեան Գրիգոր Կ. Պոլսեցի.

(*) Բժշկական Համալսարանաց եւ վարժարանաց միջեւ տարբերութիւն մը կայ. վերջնոց աշակերտողք իրենց քննութիւններն եւ վարդապետական մասն Համալսարանական ուսուցիչներու առջեւ անցնել պարտաւոր են:

Է. Ասամնաբուժական վարժարան Գրան-սիոյ (Ի Փարիզ)

Ուսումնաւարսք

1. Արապեան, 1893.

Ուսանող. Մի (Թերզեան)

Ը. Կեղագործական վարժարան Փարիզու

Ուսումնաւարսք

1. Հիւնքեարպէյէնտեան Սաչիկ 1886.

2. Թուղլաճեան Լեւոն, 1889.

3. Հիւնքեարպէյէնտեան Դաւիթ 1891.

Ուսանողք. Երկու (Հիւնքեարպէյէնտեան Սերովբէ եւ Քեաթիպեան).

Թ. Իրաւաբանական Համալսարան
Փարիզու

Այս հաստատութեան աշակերտող Հայոց ցանկն վարժարանի կողմանէ չկրցին տալ մեզ. ուստի եւ կը բաւականանամք միայն մեզ ծանօթներու ցուցակն դնել աստ, այբուբենի կարգաւ՝ որ անշուշտ շատ թերի է.

1. Ասատուրեան Հրանտ

2. Ալիքսանեան Յովհաննէս

3. Բաբազեան (Կորուցի)

4. Բրիտոնեան

5. Բէքմէզեան Երուանդ

6. Բէքմէզեան Զարեհ

7. Գոյլումճեան Գալուստ

8. Խորասանճեան Թովմաս

9. Ճիզմէճեան Եղիա

10. Մէրեէմ-Գուլի Աղեքսանդր

11. Նորատունկեան Գաբրիէլ

12. Շաշեան Պետրոս

13. Շահնազար Յովհաննէս

14. Շնորհքեան Երուանդ

15. Պալասանեան

16. Սինապեան Գրիգոր

17. Թէրզեան Կարապետ

18. Րէյիզեան Յարութիւն

19. Սուրէնեան Աւետիս

20. Փափազեան Ռուբէն

21. Քեաթիպեան Սմբատ

Այս ցանկէն միայն Տիարք Շաշեան եւ

Քեաթիպեան Տոքթորութեան աստիճանն ընդունած են, իսկ այլք Լիսսանսիէի միայն ներկայ ուսանողք. Հինգ

Ժ. Իրաւաբանական Համալսարան Նանսիի

Ուսումնաւարսք. Հրանտ Ապրո.

Ուսանող, չկայ.

ԺԱ. Քաղաքական Գիտութեանց վարժարան Փարիզու

Ուսումնաւարսք

1. Փափազեան Ա. Պոլսեցի

2. Տէր Մկրտիչեան Գալուստ, Կովկասցի 1884.

3. Բէքմէզեան Զարեհ, Այնթապցի, 1886.

4. Բէքմէզեան Երուանդ, Այնթապցի, 1888.

5. Խորասանճեան, 1891.

6. Սարգիսեան, 1892.

Ներկայ ուսանող. Մի (Կիւրեղեան)

ԺԲ. Երկրագործական բարձրագոյն վարժարան Փարիզու

Ուսումնաւարսք

1. Տաղաւարեան Նազարէթ. Սեբաստացի, 1883.

2. Պէկեան Հայկազն, Ակնցի, 1884.

3. Այվազօֆ, Տիգրիս, 1885.

4. Մեծատուրեան, Սեբաստացի, 1889.

5. Բաղդասարեան, Կովկասցի, 1893.

Ներկայ ուսանող. չկայ.

Ծան. — Շատեր հետեւած են այս ուսումնարանի դասուց իբր ազատ ունկնդիր.

(Շարունակելի)

ՄԱՍԻՍԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի ծանուցանել Գաւառաց Պատարժան՝ Ուսումնական Խորհրդոց եւ ամէն վարժարանաց Տեսչութեանց թէ պատրաստ է դիմել իրենց Դաստիարակ—Ուսուցիչներ եւ Վարժունիներ, Մասնագէտ—Դասասուներ եւ Ուսուցչունիներ, ինչպէս նաեւ Օգնականներ, ըստ պահանջման Կազմ. Կանոնագրոյ եւ ըստ առաջարկեալ պայմանաց :

Կը ծանուցանէ նաեւ ամէն կարգի ազնիւ Ուսուցչաց եւ Ուսուցչունեաց թէ պատրաստ է իրենց կարողութեան յարմար պատշոններ հայթայթել իրենց Կ. Պոլսոյ կամ գաւառաց Ազգ. Վարժարանաց մէջ :

Մասիս մանկավարժական քերթի Տնօրէնութեանը այս դիւրութիւնը կը մատուցանէ կրթական պատշոնութեանց եւ պատշոնէից

ԱՌԱՆՅ ՈՐ ԵՒ Է ՓՈՆՍԱՐԻՆՈՒԹԵԱՆ

Տեղեկութեանց համար դիմել առ Յ. Թ. Արամեան, Տնօրէն Մասիսի :

— 1883 —

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նոր հրատարակութիւնները .

Բ. Պօզանեան . — Տես . եւ Դործ . Քերականութիւն առ յս . սարական ընթացք	դր. 2—
Մ. Արիկեան . — Օսմաներէն քերականութիւն . սպ.	» 1—
Մ. Արիկեան . — Լեքսիքի Ասար Ա. մաս Ը . սպ.	» 1 1/2
Մ. Տէսէեան . — Մուալլիմի Սիւլեան , տեւր Օսմանեան Գեղազ . 1—3 , իւրաքանչիւր տեւր	» — 1/2
Պ. Կարապետեան . — Նոր քերական Օսմ. լեզուի Բ . սպ.	» 1—
Պ. Կարապետեան . — Բէհնիւմայի Գրաւթ վէ Թէրեհէ-մէ Բ . տարի	» 2—
Ս. Գափաւանեան . — Փնջիկ	» 3—

ՄԱՍԻՍ ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԵՏԵՒԵԱՆ ԾՐԱԳՐՈՎ

1. Մանկավարժութիւն — Դասխարանկութեան գիտութեան ու պատմութեան, Հոգեբանութեան եւ Բարոյագիտութեան վերաբերեալ յօդուածներ: — Մանկավարժական խնդրոց վրայ մրցման դրուած հարցումներ:

2. Դասախօսական — Նախակրթական տարր դասեր: — Նախնական ու երկրորդական կրթութեան վերաբերեալ կարեւոր ու նոր դասընթացք, հրահանգք, եւ անշատ դասախօսութիւնք կամ ամփոփումներ դասուց: — Բացատրեալ ընթերցումներ:

3. Գննական — Դասագրոց արժանաւորութեան մասին գնահատական յօդուածք: — Վարժարանական այցելութեանց տպաւորութիւնք:

4. Տնօրինութիւնք — Ուսումնական տնօրինող եւ Ազգային վարչութեան ի մասին Ազգային վարժարանաց:

5. Լուրք եւ տեղեկութիւնք — Ազգային կրթական լուրեր եւ ծանօթութիւնք:

6. Զանազանք — Այլ եւ այլ տարբերութիւնք:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ

Մասիսի տարեկան բաժանորդագիրն է, կանխիկ վճարելի, Կ. Պոլսոյ համար 40 դր. իսկ գաւառաց համար 50 դր. քրասարի ծախքը մեր վրայ: Իւրաքանչիւր քերթի գինն է 2 դր: Դաւաններէ բաժանորդագրի փոխարէն նամակագրուած եւս կ'ընդունուի 15% զեղչով: Բաժանորդագրութեան, հրատարակութեան եւ այլ ամէն խնդրոց համար պէտք է դիմել առ Տնօրէնն Յովհաննէս Արամեան, Կեդրոնական գրասուն, Կ. Պոլիս, Զամաքներէ քիւ 59: